Աստվածաշնչի ուսումնասիրության ձեռնարկ

2012 թ. II եռամսյակ

ԱՎԵՏԱՐԱՆՉՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ջո Ա. Վեբ

Բովանդակություն

Դաս 1.	31.03-06.04	«Ավետարանչություն» և «վկայություն» հասկացությունների սահմանումը....4
Դաս 2.	07.04-13.04	Եկեղեցու յուրաքանչյուր անդամի ծառայությունը... . 13
Դաս 3.	14.04-20.04	Հոգևոր պարգևներ՝ ավետարանչության և վկայության համար 23
Դաս 4.	21.04-27.04	Ավետարանչությունն ու վկայությունը որպես կենսաոճ....33
Դաս 5.	28.04-04.05	Հետևողականությունը ավետարանչության և վկայության մեջ 42
Դաս 6.	05.05-11.05	Անձնական ավետարանչություն և վկայություն....52
Դաս 7.	12.05-18.05	Համատեղ ավետարանչությունն ու վկայությունը....61
Դաս 8.	19.05-25.05	Նախապատրաստություն ավետարանչությանն ու վկայությանը....71
Դաս 9.	26.05-01.06	Ներգրավելով ծառայության մեջ 81
Դաս 10.	02.06-08.06	Պատասխան սեր....91
Դաս 11.	09.06-15.06	Թո՛ղ եկեղեցին իմանա 101
Դաս 12.	17.03-23.03	Ավետարանչական նախագծերի գնահատումը....111
Դաս 13	23.06-29.06	Չդադարող ծառայություն....120

ԵՐԵՎԱՆ

2012

ԻՆՉՈ՞Ւ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

Թեև փորձագետները չեն կարող նշել բողոքական հարանվանությունների կոնկրետ թիվը, մի բան հաստատ է՝ այսօր դրանք մեծաքանակ են՝ հարյուրավորներ և անգամ հազարավորներ:

Այս կապակցությամբ օրինաչափ հարց է ծագում. ինչո՞ւ ենք մենք հենց Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցին համարում ճշմարիտը: Ինչպիսի՞ն է մեր նպատակը: Ինչու՞մ է կայանում մեր կարևորությունը:

Պատասխանը պարզ է. Աստված հիմնել է այս Եկեղեցին, որպեսզի հռչակի «ճշմարտությունը ներկա ժամանակի համար»՝ երեք հրեշտակների պատգամը, որի մասին ասված է Հայտնություն 14.6-12-ում:

Այո՛, գոյություն ունեն բազմաթիվ եկեղեցիներ, և դրանց մեծ մասը բավականին եռանդուն մասնակցում են ավետարանչական գործունեությանը: Բայց, վերջին հաշվով, միայն մեկ եկեղեցի է առանձնահատուկ կերպով քարոզում երեք հրեշտակների պատգամը, որը բովանդակվում է Հայտնություն գրքի 14-րդ գլխում: Դա մեր եկեղեցին է, և ահա թե ինչու ենք մենք միացել նրան:

Այսպիսով, ուրիշ ինչով էլ զբաղվի մեր եկեղեցին, առաջին հերթին մենք պետք է նպատակասլաց կերպով ձգտենք հնարավորինս շատ մարդիկ բերել Աստծո հավիտենական թագավորություն: Ինչպես էլ մենք անվանենք այդ ծառայությունը՝ «Ավետարանի տարածում», «ավետարանում աշխարհին» թե «ճշմարտություն ներկա ժամանակի համար», մեր գլխավոր խնդիրն է՝ Հիսուսի մասին պատմությունը պատմել այնպես, որ մարդիկ ցանկանան ընդունել Նրան որպես Տեր ու Փրկիչ և դառնալ Նրա աշակերտները, իսկ հետագայում՝ անգամ «մարդկանց որսորդներ»:

Թեև համայնքների մեծ մասն ակտիվ գործունեություն են իրականացնում, այդ ողջ գործունեությունը լավն է ու օգտակար, մեր հիմնական խնդիրն է՝ այն ծառայեցնել եկեղեցու գլխավոր նպատակին՝ կործանվողներին տանել «հավիտենական ավետիքը» (Հայտնություն 14.6) և այն ամենը, ինչ կապված է դրա հետ:

Իհարկե, անգամ հաշվի առնելով ժամանակակից տեխնոլոգիաների հնարավորությունները, դա ահռելի խնդիր է: Եվ, վերջին հաշվով, այն ընկնում է միլիոնավոր կամավորների ուսերին, ովքեր դրդված են սիրուց Աստծո և կործանվող մարդկության հանդեպ, սիրով են լցված նրանց նկատմամբ, ում մեղքերը, ինչպես և մերը, Հիսուսը կրեց խաչի վրա:

Թեև ավետարանչությունն ու վկայությունը յուրաքանչյուր քրիստոնյայի պարտքն են, ինչի համար ամեն մեկն անձնական պատասխանատվություն է կրում, Յոթերորդ օրվա ադվենտիստների ողջ եկեղեցին կրում է նաև կոլեկտիվ պատասխանատվություն: Երբ եկեղեցու յուրաքանչյուր անդամ առաջնորդվում է ավետարանչական նպատակներով և պահում իր համայնքի ռազմավարությունը, այդ ժամանակ թանկարժեք հոգիներ են գալիս Քրիստոսի մոտ: Եվ այստեղ հատկապես կարևոր է ընդգծել հետևյալը. եթե այդ աշխատանքը չիրականացվի տեղական եկեղեցու մակարդակով, այն չի իրականացվի ընդհանրապես:

Ավետարանման համատեքստում կարևոր է հասկանալ նաև հոգևոր պարգևների հարցը: Անհրաժեշտ է եկեղեցու անդամներին ոչ միայն դրդել ի հայտ բերելու իրենց հոգևոր պարգևները, այլ նաև նրանց հնարավորություն տալ օգտագործել այդ պարգևները: Մեր ուսմունքի 17-րդ կետում ասված է. «Բոլոր դարերում Աստված Իր եկեղեցու բոլոր անդամներին օժտել է հոգևոր պարգևներով, որոնք յուրաքանչյուրը պետք է օգտագործի ի բարօրություն եկեղեցու և մարդկության: Այդ պարգևներով Սուրբ Հոգին յուրաքանչյուր անդամի օժտում է այնպես, ինչպես հաճո է Իրեն: Դրա շնորհիվ եկեղեցին ընդունակ է դառնում իրականացնել Աստծո կողմից իր համար կանխորոշված նշանակությունը» (Սկզբում էր խոսքը, 292):

Ավետարանի պատմության ըմբռնումը, Հիսուս Քրիստոսի հետ անձնական փոխհարաբերությունների հետ մեկտեղ, մարդկանց կօգնի ճիշտ դրդապատճառներով աշխատել հանուն հոգիների փրկության: Ավետարանչության և վկայության դրդապատճառը պետք է լինի Աստծո հանդեպ փոխադարձ սերը, ոչ թե վախը կամ մեղքի զգացումը:

Ինչպես և ցանկացած այլ ձեռնարկ, տվյալ նյութը սովորողներին կօգնի իրենց միտքը հարստացնել աստվածաշնչյան ճշմարտություններով: Դա լավ է, բայց նպատակը պարզապես գիտելիք ստանալը չէ, որքան էլ այն հրաշալի լինի: Մեր նպատակն է այդ գիտելիքներն օգտագործել ի բարին, իսկ տվյալ համատեքստում մեծագույն բարիքն այն է, որ հավիտենական կյանք ստանալու հնարավորությունը ցույց տանք նրանց, ովքեր կարող են հավիտյան կործանվել:

Ահա թե ինչպիսի կարևորագույն առաքելություն ունի Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցին:

Ջո Ա. Վեբը եկեղեցիների հովիվ է Նամբոուրում և Յանդինում,
Հարավքվինսլենդյան միություն, Ավստրալիա

«ԱՎԵՏԱՐԱՆՉՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Գործք առաքելոց 4.33, 13.48, Ա Հովհաննես 1.3, Գործք առաքելոց 13.1-49, 22.2-21, Ա Պետրոս 3.15:

Հիշելու համարը.

«Ուրեմն գնացեք բոլոր ազգերը աշակերտեցեք՝ նրանց մկրտելով Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով, նրանց սովորեցնելով, որ ամենն, ինչ որ ձեզ պատվիրեցի՝ պահեն, և ահա ես ձեզ հետ եմ ամեն օր՝ մինչև աշխարհի վերջը» (Մատթեոս 28.19,20):

Հիմնական միտքը.

Եթե մենք պետք է մասնակցենք ավետարանական մեծ հանձնարարության կատարմանը, մենք պետք է հասկանանք «ավետարանչություն» և «վկայություն» եզրույթների նշանակությունը:

Տարբեր կազմակերպությունների աշխատակիցներին, որպես կանոն, «աշխատանքի նկարագրություն» են տալիս, որը բովանդակում է իրենց պարտականությունների մանրամասն նկարագրությունը: Աստվածաշունչը նույնպես խոսում է «աշխատանքի նկարագրություն» մասին, որը վերաբերում է Աստծո ողջ ժողովրդին: Ա Կորնթացիս 15.58-ում Պողոս առաքյալը կորնթացի քրիստոնյաներին կոչ է անում միշտ ավելի առաջադիմել Աստծո գործում:

Թեև Պողոսը չի հստակեցնում, թե հատկապես որ գործի մասին է խոսքը, մենք նմանատիպ դարձվածք հանդիպում ենք Ա Կորնթացիս 16.10-ում: Այստեղ խոսվում է անմիջականորեն Տիմոթեոսի և Պողոսի կատարած ծառայության մասին, երբ նրանք ավետարանում և վկայում էին Հիսուս Քրիստոսի և փրկության ծրագրի մասին: Այսպիսով, 15-րդ գլխում Պողոսի հիշատակումը, անկասկած, վերաբերում է Ավետարանի քարոզին:

Այս շաբաթ մենք կուսումնասիրենք, թե որն է ավետարանչության և վկայության էությունը: Այլ խոսքերով, կուսումնասիրենք մեր աստվածաշնչյան «աշխատանքի նկարագրությունը»:

Ավետարանչությունը...

Մենք ավետարանչության մասին հստակ պատկերացում ենք ստանում, երբ ուսումնասիրում ենք առաջին ավետարանիչների գործունեությունը: Չնայած նրանց և մեր դարաշրջանների միջև ահռելի տարբերություններին՝ ինչպես այն ժամանակ, այնպես էլ հիմա աշխարհում թագավորում են մեղքը, այլասերումն ու հուսահատությունը: Աշխարհը միշտ զգացել է հույսի և փրկության կարիքը: Ավելի քան մեկ դար առաջ գերմանացի փիլիսոփա Արթուր Շոպենհաուերը, մի փոքր չափազանցելով, (իրականում նա «հոռետեսության փիլիսոփա» չէր) մարդկության վիճակը բնութագրել է այսպիսի խոսքերով. «Դեռ երբեք չի եղել մեկը, ով գոնե մի անգամ չի ցանկացել կենդանի լինել հաջորդ օրը» (The World as Will and Idea, p. 204): Մեր օրերում քիչ բան է փոխվել առաքյալների ու Շոպենհաուերի ժամանակներից ի վեր: Այդ պատճառով ավետարանչական աշխատանքի վրա կենտրոնացվածությունը, որը մենք տեսնում ենք առաջին դարում, պետք է պահպանվի նաև այսօր:

Կարդացե՛ք Գործք առաքելոց 4.33, 5.42, 2.36-39, 13.48-ը: Աշակերտների կողմից քարոզվող ի՞նչ հատուկ թեմաներ է անհրաժեշտ հռչակել նաև այսօր: _____

_____

_____

Բառի բուն իմաստով ավետարանիչ լինելու համար մարդուն անհրաժեշտ է «հավիտենական Ավետարանի» անձնական ըմբռնում և սեփական փորձ ունենալ. չէ՞ որ հենց դա է բացում ուղին, որը տանում է դեպի ճշմարիտ հավատ, ապաշխարություն, դարձի գալ, մկրտություն և աշակերտություն, ինչպես նաև՝ դեպի հավիտենական կյանքի խոստումը:

Հրեա առաջնորդներն առաքյալների համարձակության մեջ մի այնպիսի բան տեսան, որը համոզեց նրանց, որ այս մարդիկ Հիսուսի հետ են եղել (տե՛ս Գործք առաքելոց 4.13): Ավելի շուտ, առաջնորդներն այդպիսի եզրակացության եկան այն պատճառով, որ աշակերտները, թվում էր, բացի Հիսուսի կյանքից և ուսմունքից, ընդունակ չէին խոսել որևէ այլ բանի մասին: Ավետարանչությունն ու վկայությունն, անկասկած, ներառում են պատմելը Հիսուսի կյանքի ու ուսմունքի մասին, ինչպես նաև տվյալ ուսմունքն ընդունելու արդյունքում որոշակի հավատացյա-

լի կյանքում տեղի ունեցած փոփոխությունների և այն փոփոխությունների մասին, որոնք կարող է կատարել Հիսուսը յուրաքանչյուրի կյանքում, ով ընդունում է Նրան որպես Տեր և Փրկիչ:

Կարևոր է ավետարանչությունն ու վկայությունը դիտարկել որպես անընդհատ գործընթաց, ոչ թե որպես անձնական միջոցառում կամ ծրագիր: Այս գործընթացի կենսական կարևոր բաղադրիչներն են արմատավորումն ու ուսուցումը: «Ամեն ժամանակ» բառը Գործք առաքելոց 2.42-ում ցույց է տալիս, թե որքան պատասխանատու կերպով էին նորադարձ քրիստոնյաները վերաբերվում սեփական հոգևոր աճի անընդհատ գործընթացին: Անկասկած, վաղ եկեղեցին ավետարանչությունն ընկալում էր որպես ինչ-որ անհամեմատ ավելի մեծ բան, քան պարզապես լուրի հռչակումն էր: Ավետարանման գործընթացն ավարտված չէր համարվում այնքան ժամանակ, քանի դեռ մարդիկ չէին դառնում աշակերտներ և քրիստոնյաների տեղական եկեղեցու անբաժանելի մասը:

Ավետարանի խոստումներից ո՞րն է ձեզ առանձնահատուկ հույս պարգևում: Դուք ինչպե՞ս կարող եք սովորել հուսալ այդ խոստմանը և այն կիրառել ուղղակիորեն ձեր հանդեպ՝ անկախ կյանքի պարագաներից:

Երկուշաբթի ***ապրիլի 2***

Վկայությունը...

Վկան նա է, ով ինչ-որ բանի մասին ցուցմունքներ է տալիս, ինչ-որ բան է հաստատում կամ հերքում՝ ելնելով իր սեփական փորձից: Իր կյանքում Աստծո գործունեության մասին քրիստոնյայի անձնական վկայությունը կարող է ահռելի ուժ ունենալ: Մի անգամ Հիսուսը բժշկեց մի դիվահարի (Մարկոս 5.1-19): Իսկ երբ ապաքինվածը ցանկացավ հետևել Նրան, Փրկիչն ասաց նրան. «Գնա՛ քո տունը՝ քո ընտանիքի մոտ, և նրանց պատմի՛ր, թե Տերը ինչեր արեց քեզ համար» (Մարկոս 5.19):

Բնականաբար, այդպիսի կարճ ժամանակում Հիսուսն այդ մարդուն չսովորեցրեց քարոզի կամ վկայության արվեստը: Հնարավոր է, որ նախքան նրան կասվեր՝ «Գնա՛ և պատմի՛ր», նա սոսկ մի փոքր պատկերացում ստացավ Ավետարանի կարևորագույն ճշմարտությունների մասին:

Կարդացե՛ք Մարկոս 5.18-20, Գործք առաքելոց 22.15,16, Ա Հով-

հաննես 1.3-ը: Ի՞նչ ընդհանուր կարևոր ճշմարտություն է ընդգծված այս բոլոր տեքստերում: _____

_____

_____

Աստված մեզ վրա պատասխանատվություն է դրել՝ պատմել այն մասին, թե որքանով է Նա փոխել մեր կյանքը, ինչպես Նա մի անգամ դա հանձնարարեց դևերից ազատված մարդուն՝ Գադարացիների երկրում, և իր մյուս հետևորդներին:

Պարտադիր չէ, որ վկայությունը, այսինքն՝ Աստծո հետ անձնական փորձի մասին պատմելը, լինի նույնքան լավ կազմակերպված, որքան ռադիոավետարանչությունը, հեռուստաավետարանչությունը կամ ավետարանչական արշավը: Վկայությունը կարող է լինել ինքնաբուխ, քանի որ Քրիստոսի մասին պատմելու հնարավորությունը կարող է գալ որտեղ պատահի և երբ պատահի: Այդ պատճառով մենք միշտ պետք է ուշադիր լինենք, որպեսզի բաց չթողնենք հնարավորությունը պատմելու այն մասին, ինչ մեզ հայտնի է և ինչ վերապրել ենք:

Վկայության և ավետարանչության միջև փոխադարձ կապի վերաբերյալ մենք կարող ենք ասել, որ դրանք տարբեր ռազմավարություններ ունեն, բայց մեկ ընդհանուր նպատակ են հետապնդում՝ հոգիներ ձեռք բերել Քրիստոսի համար: Վկայությունը, որպես կանոն, առավել ինքնաբուխ է և կարճատև, այն դեպքում, երբ ավետարանչությունն առավել երկարաժամկետ և լավ ծրագրված գործողություն է: Երբեմն ծրագրված ավետարանչական միջոցառումն ամրապնդվում է ծրագրի մասնակիցների անձնական վկայությամբ, իսկ երբեմն ինքնաբուխ վկայությունը մարդկանց տանում է դեպի առավել հետևողական և կազմակերպված ուսումնասիրության: Ինչպես էլ որ դա տեղի ունենա, և՛ մեկը, և՛ մյուսը ընդհանուր գործընթացի կարևորագույն բաղադրիչներ են: Երբ մենք պատմում ենք այն մասին, ինչ մեզ համար արել է Հիսուսը, Սուրբ Հոգու ազդեցության համար բաց մարդիկ կցանկանան ավելին իմանալ: Բացի դրանից, մարդկանց համար անհամեմատ ավելի հեշտ է վիճել ուսմունքների, աստվածաբանությունների և հայացքների հետ, քան առարկել այն մարդուն, ով պատմում է իր սեփական փորձառությունը:

Ե՞րբ է վերջին անգամ ձեզ հնարավորություն ընձեռվել ինչ-որ մեկին պատմել այն մասին, ինչ ձեզ համար արել է Քրիստոսը: Ինչի՞ մասին էիք դուք խոսում: Ինչպե՞ս ընկալվեցին ձեր խոսքերը: Քրիստոսն ինչպե՞ս փոխեց ձեր կյանքը: Ձեր կյանքում ի՞նչը կարող է մարդուն դրդել ավելին իմանալու Հիսուսի մասին:

Աստվածաշնչյան վկայությունը

Անկասկած, առաջին քրիստոնյաների ճանապարհին քիչ խոչընդոտներ չէին հանդիպում, երբ նրանք գնում էին Հիսուսի մասին Բարի լուրը քարոզելու: Փոքր խոչընդոտ չէր այն, որ նրանցից շատերը չէին սովորել իրենց ժամանակի կրոնական դպրոցներում, այդ պատճառով պակաս վստահություն էին վայելում կամ էլ առհասարակ զրկված էին պետական եկեղեցու վստահությունից:

Բայց, չնայելով այդ ամենին, առաքյալները և մյուս հավատացյալները հաստատ համոզված էին, որ Աստծո կողմից կանչված են տանելու Բարի լուրը: Ներման ու հավատի օրհնությունները, որոնք նրանք վերապրել էին սեփական փորձով, նրանց դրդում էին կիսվել այդ փորձառությամբ: Վկայությունը դարձի գալու բնական հետևանքն էր:

Կարդացե՛ք Գործք առաքելոց 13.1-49-ը: Սուրբ Հոգին ի՞նչ աշխատանքի էր կանչում Բառնաբասին և Սողոսին: _____

_____

Ամենուրեք քարոզվող «Աստծո Խոսքն», ավելի շուտ, ներառում էր Հին Կտակարանի մեսիական հատվածները: Այն Գրվածքները, որոնք կանխասում էին Փրկչի մահն ու հարությունը, ինչպես նաև՝ մեղավորների հաջորդող ներումն ու արդարացումը, ներկայացվում էին արդեն իսկ իրականացված Նազովրեցի Հիսուսում:

Նոր Կտակարանը հստակ կերպով ցույց է տալիս, թե ինչին էին իրենց նվիրել առաջին քրիստոնյաները՝ Ավետարանի քարոզին և վկայությանը: Նրանք գլխավորապես ցույց էին տալիս Հիսուսին՝ որպես Տեր և Փրկիչ, փրկությունը՝ Նրա արդարությամբ, Աստծո գալիք Թագավորությունը և հավիտենական կյանքի խոստումը:

Ուսումնասիրե՛ք Գործք առաքելոց 6.1-7-ը: Հատուկ ուշադրություն դարձրեք 4-րդ և 7-րդ համարներին: Ինչի՞ շնորհիվ էր վաղ եկեղեցին այդպիսի ավետարանչական հաջողության հասել Երուսաղեմի քահանաների շրջանում: _____

_____

Շատ մարդիկ հավատում էին Հիսուսին և ընդունում Նրան որպես անձնական Փրկիչ ոչ միայն տեսած հրաշքների, այլ նաև քրիստոնյաների վկայությունների շնորհիվ, ովքեր պատմում էին, թե ինչպես է Հիսուսը փոխել իրենց կյանքը:

Որքան էլ հզոր և հրապուրիչ լինեին առաջին ավետարանիչնե-

րի փորձառությունն ու վկայությունները, այդ մարդիկ միշտ դիմում էին Սուրբ Գրքին: Նրանք օգտագործում էին Աստվածաշունչը՝ իրենց փորձառությունը բացատրելու համար: Որքա՞ն լավ դուք գիտեք Աստվածաշունչը և ինչպե՞ս կարող եք ավելի հաստատվել Սուրբ Գրքում՝ այն օգտագործելու համար ձեր վկայության մեջ:

Չորեքշաբթի *ապրիլի 4*

Պատմելով սեփական պատմությունները

Ինչպես արդեն ասվել է, Հիսուսի մասին քրիստոնյայի ամենազորեղ վկայությունը նրա անձնական փորձն է, այսինքն՝ պատմությունն այն մասին, թե ինչ է կատարել նրա համար Աստված, և ինչպես է դա ազդել իր կյանքի վրա: Սովորաբար, անձնական վկայությունը բաղկացած է երեք մասից: Առաջին մասը քրիստոնյայի կյանքի նկարագիրն է՝ նախքան նրա կողմից Հիսուսին որպես իր անձնական Փրկիչ ընդունելը, երկրորդ մասը ներառում է պատմությունն այն մասին, թե ինչպես է տեղի ունեցել հանդիպումը Տիրոջ հետ, իսկ երրորդը նկարագրում է ներկայիս կյանքը Հիսուսի հետ:

Կարդացե՛ք Գործք առաքելոց 22.2-21-ը: Պողոսի խոսքն ի պաշտպանություն իրեն՝ Երուսաղեմի բնակիչների առջև, ունի անձնական վկայության ձև: Ո՞ր պահերն է նա ընդգծում իր վկայության յուրաքանչյուր մասում:

Նրա կյանքը մինչև Հիսուսի հետ հանդիպումը (հմ. 3-5):_____

Հանդիպումը Տիրոջ հետ (հմ. 6-16): _____

Նրա կյանքը վերստին ծնվելուց հետո (17-21): _____

Անգամ եթե դուք մեծացել եք քրիստոնեական ընտանիքում և դրամատիկ դարձ չեք ապրել, ձեր կյանքում, անկասկած, եղել է մի հատուկ ժամանակ, երբ դուք ձեզ նվիրել եք Հիսուս Քրիստոսին: Վերհիշե՛ք այդ դրվագը և փորձե՛ք վերապատմել այն պահերը, որոնք կօգնեն ձեզ՝ ձևակերպել ձեր անձնական վկայությունը:

Իմ կյանքը՝ նախքան Տեր Հիսուսին ճանաչելը (կամ նախքան այն, երբ ես ինձ նվիրեցի Նրան): _____

Ինչպես ես հանդիպեցի Հիսուսին (կամ ինչն ազդեց ինձ Նրան նվիրելու իմ որոշման վրա): _____

Իմ կյանքը Հիսուսին որպես իմ անձնական Փրկիչ ընդունելուց ի վեր: _____

Անձնական վկայությունը չպետք է իրենից երկար մանրամասն ինքնակենսագրություն ներկայացնի: Մենք արդեն հիշատակել ենք այն մասին, որ ի տարբերություն ծրագրված ավետարանչական ծառայության, վկայությունը ավետարանման առավել ինքնաբուխ ձևն է: Քրիստոնյաները պետք է կարողանան վկայել, անգամ եթե նրանք դրա համար շատ քիչ ժամանակ ունեն, քանի որ մենք նախօրոք չգիտենք, թե երբ Հիսուսի մասին պատմելու հնարավորություն կընձեռնվի: Այդ հնարավորությունները կարող են լինել որքան ասես՝ ամենաանսպասելի վայրերում և բացարձակապես չծրագրված պահի: Դա կարող է տեղի ունենալ ինքնաթիռում, ավտոբուսի կանգառում կամ կարճատև հեռախոսազրույցի ժամանակ: Երբ էլ ծագի հարմար իրավիճակը, մենք պետք է պատրաստ լինենք ոգևորությամբ պատմել այն մասին, ինչ Տերն արել է մեզ համար, ինչին և ինչու ենք մենք հավատում, ինչպես նաև՝ այն հույսի մասին, որ Աստված տալիս է ոչ միայն մեզ, այլև բոլոր մարդկանց:

Խորհեցե՛ք կործանվողների և փրկվածների, հավիտենական մահվան և հավիտենական կյանքի միջև մեծագույն տարբերության մասին: Կարո՞ղ է ինչ-որ առավել նշանակալի բան լինել:

Հինգշաբթի ***ապրիլի 5***

Մեր աշխատանքի նկարագրությունը

Կարդացե՛ք Ա Պետրոս 3.15-ը: Վկայության առումով ի՞նչ է մեզ սովորեցնում այս համարը: Ինչպե՞ս է այն լրացնում նախկինում մեր սովորածը: _____

_____

Ներկա պահին մենք արդեն բավականին մանրամասնորեն ուսումնասիրել ենք վկայության և ավետարանման հարցերը՝ աստվածաշնչյան «աշխատանքի նկարագրությանը» համապատասխանող իմաստով: Ավետարանչության և վկայության սահմանումը հորինելու անհրաժեշտություն չկար, որը յուրաքանչյուրին բոլոր կետերով հարմար լիներ, բայց մենք պետք է համոզվենք, որ մեր կողմից կիրառվող ցանկացած սահմանում ներառում է Հիսուսի մասին ճշմարտության և աշխարհին Նրա առաջարկի կարևորագույն բաղադրիչները:

Վերլուծե՛ք *ավետարանչության՝* ստորև բերված սահմանումը: Դուք այն ճի՞շտ եք համարում: Ի՞նչ կավելացնեիք դրան կամ ի՞նչ կհանեիք նրանից: «*Ավետարանչությունը* Տեր Հիսուս Քրիստոսի

Ավետարանի հստակ, համոզիչ հռչակումն է՝ նպատակ ունենալով դրդել մարդկանց՝ ընդունել Հիսուսին որպես իրենց անձնական Փրկիչ և հետևել Նրան որպես Տիրոջ՝ դառնալով Նրա աշակերտները և ավետարանիչները»:

Թեև պարտադիր չէ, որ խնդրի սահմանումը աշխատանքի նկարագրության տեսք ունենա, սակայն այն ցույց է տալիս ընդհանուր ուղղվածությունը: Իհարկե՛, երբ խոսքը վերաբերում է վկայությանը, յուրաքանչյուր որոշակի իրավիճակ և Աստծո հետ քրիստոնյայի անձնական փորձառություն կազդեն ավետարանման ձևի վրա: Սակայն Իր եկեղեցու միջոցով կործանվող աշխարհը փրկելու Աստծո ձգտման մեջ համոզվածությունը մեզ դրդում է լավ մտածել մեթոդների մասին և մոտեցումներ գտնել վկայության և ավետարանչության համար:

Վաղ եկեղեցու հետևողական աճը նշանակալի չափով պայմանավորված էր նրա անդամների ամուր հավատով և նվիրմամբ: Դա իր հերթին հիմնված էր Հիսուսի հետ նրանց անձնական փորձի և Սուրբ Հոգու զորության հատուկ հեղման հետ: Հիսուս Քրիստոսի ուսմունքը և Սուրբ Հոգու ազդեցությունը մնում են վկայության և ավետարանչության հիմնարար և ամենանշանակալից տարրերը:

«Հազարավոր մարդկանց սրտերին կարելի է հասնել ամենապարզ խոնարհությամբ: Մտավորականները, ում աշխարհը համարում է ամենաօժտվածները, հաճախ զգում են նրանց պարզ խոսքերի թարմացնող ազդեցությունը, ովքեր սիրում են Աստծուն, և ովքեր կարող են խոսել այդ սիրո մասին նույնքան բնական ձևով, ինչպես սովորական մարդը պատմում է իրեն ամենից ավելի հետաքրքրող բանի մասին: Հաճախ լավ նախապատրաստված և փորձված բառերը գրեթե ազդեցություն չեն գործում: Իսկ Աստծո որդու կամ դստեր հասարակ, անկեղծ, բնական պարզությամբ ասված խոսքերը զորություն ունեն բացել դուռը դեպի այն սրտերը, որոնք երկար ժամանակ փակ էին Քրիստոսի և Նրա սիրո համար» (Է. Ուայթ, Գրական ավետարանչություն, 39):

Ուրբաթ ***ապրիլի 6***

Հեպագա ուսումնասիրության համար

Խորհե՛ք ձեր անձնական վկայության մասին և համոզվե՛ք, որ կարող եք պատմել այն, երբ այդպիսի հնարավորություն կընձեռվի:

Ժամանակ հատկացրեք՝ լռության մեջ առանձնանալու և մտո-

ռելու, թե ո՛ր ծառայությանը մասնակցելն է ձեզ դուր գալիս կամ ո՛ր ծառայությանը դուք կհամաձայնեիք, եթե այն առաջարկեին ձեզ: Գրի առեք ձեր մտքերը: Ձեզ համար կարող է հետաքրքիր լինել ավետարանչության այն տեսակը, որում ձեր եկեղեցին դեռևս ընդգրկված չէ: Այդ մասին նույնպես գրեք:

Խորհե՛ք այն մասին, թե ինչպես դուք կարող էիք մասնակցել ավետարանչական ծառայությանը ձեր եկեղեցում: Եթե դուք արդեն մասնակցում եք ծառայությանը և կցանկանայիք շարունակել այն, աղոթե՛ք, որ Աստված հետագայում էլ օրհնի ձեր ծառայությունը: Եթե ներկայումս դուք ոչ մի ծառայություն չեք կատարում, աղոթեք, որ Աստված բացահայտի ձեզ, թե որտեղ կցանկանար տեսնել ձեզ Իր համար աշխատելիս:

Հարցեր քննարկման համար

1. Ավետարանական հանձնարարության մեջ (Մատթեոս 28.19,20) մենք հանդիպում ենք չորս բայ՝ գնացե՛ք, աշակերտեցե՛ք, մկրտեցե՛ք և սովորեցրե՛ք: Գնալու, մկրտելու և սովորեցնելու հրամաններն իմաստով ստորադասված են «աշակերտեցեք» ցուցումին: Հասկանալով այդ հստակ շեշտադրումները՝ քննարկե՛ք, թե ինչ է նշանակում լինել աշակերտ, և ինչպես են ի հայտ գալիս աշակերտները:
2. Մտորե՛ք ստորև բերված մեջբերման մասին և պատասխանե՛ք հարցին՝ մեզանից յուրաքանչյուրը և մենք բոլորս՝ որպես եկեղեցական համայնք, ինչպե՞ս ենք դառնում միջնորդներ, ում միջոցով Աստված դիմում է կործանվող աշխարհին: «Քրիստոսը որպես երկրի վրա իր ներկայացուցիչներ ընտրում է ոչ թե անմեղ հրեշտակներին, այլ նույնպիսի թուլություններ ունեցող մարդկանց, ինչպիսիք հատուկ են մարդկանց, ում նրանք ձգտում են փրկել: Քրիստոսը մարդկային բնություն ընդունեց, որպեսզի ազդի մարդկանց վրա: Աստծուն հարկ եղավ ընդունել մարդկային էությունը, որովհետև աշխարհի փրկության համար անհրաժեշտ են և՛ Աստվածությունը, և՛ մարդը: Աստված պետք է մարդկային բնություն ընդուներ, որպեսզի մարդը հնարավորություն ստանար շփվել Աստծո հետ» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 296):
3. Վերլուծե՛ք ձեր կյանքը: Ինչպիսի՞ օրինակ եք դուք աշխարհին: Շրջապատող աշխարհի վրա ինչպե՞ս են ազդում ձեր խոսքերը, արարքները, հագուստը, շարժուձևն ու մարդկանց հանդեպ վերաբերմունքը: Այլ խոսքերով՝ դուք ի՞նչ վկայություն եք տանում աշխարհին, անգամ եթե չեք զբաղվում ակտիվ ավետարանչական գործունեությամբ: Ձեզ ի՞նչ է պետք փոխել:

ԵԿԵՂԵՑՈՒ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱՆԴԱՄԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Եփեսացիս 4.12, Բ Կորնթացիս 5.15-20, Հովհաննես 4.35-41, Ա Թեսաղոնիկեցիս 1.5-8, Գործք առաքելոց 14.27:

Հիշելու համարը.

«Բայց դուք ընտիր ազգ եք, թագավորական քահանայություն, սուրբ ազգ, սեփական ժողովուրդ, որ քարոզեք նրա առաքինությունները, որ ձեզ խավարից կանչեց իր զարմանալի լույսի մեջ» (Ա Պետրոս 2.9):

Հիմնական միտքը.

Չափազանց հանախ ավետարանչությունն ու վկայությունը դիտարկվում են որպես բացառապես հովվի պարտականությունը: Այդպիսի տեսակետը սխալ է:

Ըստ Պետրոսի, Աստծո ժողովուրդը ընտրված և կոչված է լինելու «թագավորական քահանայություն»: Քանի որ քահանաներին հանձնարարված է ծառայությունը, իսկ մենք կանչված ենք լինել «քահանայություն», նշանակում է՝ մենք նույնպես պետք է մասնակցենք ծառայությանը: Առաջինը և ամենակարևորը մեր կյանքում՝ Աստված մեզ կանչում է Իր հետ փոխհարաբերությունների, և այդ փոխհարաբերությունների արդյունքում մենք շրջապատողների հետ կկիսվենք Աստծո մեծամեծ գործերով, որոնք Նա կատարել և կատարում է մեզ համար: Հենց սա է անձնական վկայության էությունը:

Այդ պատճառով մեզանից յուրաքանչյուրը կատարում է իր ծառայությունը, որի նպատակն է՝ փառավորել Նրա անունը, մեծարել Նրան, Ով կանչել է մեզ «խավարից դեպի իր զարմանահրաշ լույսը»:

Այս շաբաթ մենք կուսումնասիրենք եկեղեցու յուրաքանչյուր անդամի ծառայության հայեցակարգը, և կտեսնենք, թե ինչպես է ամեն մի առանձին մարդու փոքրաառությունը լրացնում ողջ եկեղեցու ծառայությունը: Ամենագլխավորը՝ մեզանից ամեն մեկն իր դերն է խաղում ավետարանման և ավետարանչության գործում:

Պետք է ծառայի յուրաքանչյուրը

Չափազանց հաճախ ստիպված ենք լինում լսել քրիստոնյաների տրտունջն այն մասին, որ նրանք այնքան տաղանդավոր չեն, որ ինչ-որ նշանակալի բան անեն Աստծո համար: Թեև սատանան ցանկանում է ստիպել մեզ, որ հենց այդպես մտածենք, Աստվածաշունչը սովորեցնում է. որ Աստված բոլոր քրիստոնյաներին ծառայություն կատարելու հնարավորություն է պարգևել՝ կատարել ծառայություն: Մեզ անհրաժեշտ է իմանալ, թե ինչ մենք կարող ենք անել, և Աստծո ողորմությամբ հասկանալ, թե ինչպես օգտագործենք եղած պարգևները Նրա փառքի համար:

Կարդացե՛ք Եփեսացիս 4.12 և Բ Կորնթացիս 5.15-20-ը: Այդ համարներն ի՞նչ են հաղորդում յուրաքանչյուր քրիստոնյայի ծառայության մասին: _____

_____

Պողոսը հստակ կերպով խոսում է այն մասին, որ սրբերը պետք է պատրաստ լինեն ծառայությանը: Հիսուսի զոհի միջոցով Աստծո հետ հաշտված յուրաքանչյուր մարդու վրա նույնպես դրված է հաշտության ծառայությունը: Այդպիսի մարդը հանդիսանում է Քրիստոսի դեսպան: Դեսպանը թագավորի կամ այլ պետության ղեկավարի անձնական ներկայացուցիչն է: Այդպիսի հայեցակարգն ընդգծում է անձնական փոխհարաբերությունները Քրիստոսի և բոլոր հաշտվածների միջև, ովքեր կործանվող աշխարհին տանում են լուրը Նրա սիրո և շնորհի մասին:

Տարբեր մարդիկ տարբեր կերպ են հասկանում «ծառայություն» բառը: Այսօր ծառայությունն ընկալվում է որպես հովվին վերաբերող ինչ-որ բան՝ ի վերջո, չէ՞ որ նա «ծառայում է»: Թեև հովվական ծառայության մեջ ներգրավված մարդիկ իսկապես որոշ յուրահատուկ պարտականություններ են կատարում և այդ ոլորտում հատուկ գիտելիքներ ունեն, սակայն Սուրբ Գիրքը միանշանակ ցույց է տալիս, որ հովվական աշխատանքի մի մասն է հանդիսանում եկեղեցու անդամներին ծառայության համար զինելը (նախապատրաստելը):

Նոր Կտակարանը վկայում է, որ առաջին քրիստոնյաները հետևում էին յուրաքանչյուր անդամի ծառայության հայեցակարգին: Ուր էլ նրանք գնային և ինչ հանգամանքներում էլ հայտնվեին, բոլորը քարոզում էին Տեր Հիսուսի մասին (տե՛ս Գործք առաքելոց 8.1-4):

Հիսուսը նաև ցույց է տալիս, որ մեզանից յուրաքանչյուրն ունի առանձնահատուկ ծառայություն, որը մենք պետք է կատարենք: Նա պնդում է, որ չէր եկել, որ Իրեն ծառայեն, այլ որ ծառայի ուրիշներին (տե՛ս Մատթեոս 20.28, Ղուկաս 22.27): Փրկիչն ընդգծել է, որ Իր հետևորդները պետք է ծառաներ լինեն (տե՛ս Մատթեոս 23.11, 20.26,27): Եթե դա ճշմարիտ ծառայություն չէ, ապա ի՞նչ է: Հիսուսը մեզ պարզապես չի կարգադրում ծառաներ լինել. Նա մեզ տանում է այն բանի ըմբռնմանը, որ ծառայությունը հանդիսանում է Իր հետ մեր կապի արդյունքը: Վերը բերված համարները նկարագրում են այն մարդու կյանքը, ով շփվում է տառապող Ծառայի՝ Հիսուս Քրիստոսի հետ: Նրանք նաև պնդում են, որ լինել Քրիստոսում նշանակում է շարունակել Նրա ծառայությունը:

Դուք ցանկանո՞ւմ եք ծառայել շրջապատողներին: Դա ձեր բնական ցանկությո՞ւնն է, թե՝ ձեզ առավել հատուկ է ինչ-որ բան պահանջել ուրիշներից, քան տալ նրանց: Դուք ինչ կարող եք անել՝ դեպի ծառայությունն առավել բարյացակամ դառնալու համար:

Երկուշաբթի *ապրիլի 9*

Աշխատողների կարիքը

Մեզ երբեմն ուղարկում են բերք հավաքելու այնտեղ, որտեղ ուրիշները վարել են հողը, ցանել սերմերը և ջրել ծիլերը: Թեև պատահում է, որ նույն մարդը վարում է, ցանում, ջրում և հավաքում բերքը միևնույն դաշտում, բայց դա, անշուշտ, կանոն չէ: Մեր արագորեն փոխվող աշխարհում մարդիկ մեկ հայտնվում են մեր ազդեցության ոլորտում, մեկ՝ դուրս են գալիս, և մենք պետք է պատրաստ լինենք շարունակելու ուրիշների սկսած ավետարանչական գործը:

Կարդացե՛ք Հովհաննես 4.35-41-ը: Թեև մարդու քրիստոնեական աճի մեջ հենց հունձքի փուլն է մեզ ամենից ավելի խանդավառում, բերված համարները մեզ ի՞նչ են ասում աշխատանքի բոլոր փուլերն անցած մշակների հետ միասին ուրախանալու անհրաժեշտության մասին: _____

_____

Սովորաբար, երբ խոսքը վերաբերում է բերքին, մենք ենթադրում ենք տարվա որոշակի եղանակ: Գրեթե ցանկացած մշակաբույս հասունանում է տարվա որոշակի եղանակի: Սակայն հոգևոր կյանքում հունձի որոշակի ժամանակ չկա: Հիսուսն այդ միտքն է շեշտում Հովհաննես 4.35-ում:

Հողագործների կարծիքով, բերքը կարող է հասունանալ միայն չորս ամիս հետո, բայց դաշտի այն մասը, որտեղ կան Հիսուսին ընդունելու պատրաստ մարդիկ, միշտ պատրաստ է հունձքին:

Հակոբի ջրհորի մոտ Հիսուսը ավետարանի սերմեր ցանեց սամարացի կնոջ սրտում: Նա, իր հերթին, սերմեր ցանեց Սյուքարի բնակիչների մեջ, և այդժամ սամարացիները եկան Հիսուսի մոտ՝ անցնելով չհասած ցորենի արտերի միջով: Ինչպես և աշակերտներին, Հիսուսը մեզ նույնպես կոչ է անում պատրաստ լինել բերք հավաքելու այս աշխարհի մշտապես հասունացող դաշտից:

Քննարկե՛ք Բ Պետրոս 3.9-ը: Ինչո՞ւ է Աստված այդքան ջերմորեն ցանկանում, որ Իր մշակները դաշտ դուրս գան: _____

_____

_____

Աստված ցանկանում է, որ մշակները դաշտ դուրս գան, որովհետև սիրում է մարդկանց և կարեկցում նրանց (տե՛ս Մատթեոս 9.36-38): Այսօր դիտելով աշխարհի դաշտը՝ մենք տեսնում ենք, որ բերքն առաջվա նման շա՜տ-շա՜տ է, իսկ աշխատավորները՝ քիչ: Հիսուսն աշակերտներին հրամայեց աղոթել, որ հնձվորներ դաշտ ուղարկվեն: Երբ մենք՝ ժամանակակից աշակերտներս, աղոթում ենք աշխատավորների մասին, Սուրբ Հոգին մեզ համար բացում է ուղիներ, որպեսզի մենք կարողանանք կատարել այն աշխատանքը, որի համար կանչված ենք:

Խորհե՛ք վերջին մի քանի օրերի մասին: Դուք հնարավորություն ունեցե՞լ եք վկայել ձեր հավատի մասին, ցանել մի քանի սերմ, որոնք, հնարավոր է, երբևէ կծլարձակեն և բերք կտան: Այդ հնարավորություններից որո՞նք եք դուք օգտագործել, և որո՞նք՝ բաց թողել:

Երեքշաբթի ***ապրիլի 10***

Առանձին անձինք աշխատում են միասին

Ցանկացած եկեղեցի պարզապես իրար հետ ոչնչով չկապված մարդկանց խումբ չէ, ովքեր շաբաթվա մեջ մի քանի ժամ նստում են նույն շենքում: Սուրբ Գրքի համաձայն՝ եկեղեցին մարդկանց հանրույթ է, ովքեր սերտորեն կապված են միմյանց հետ՝ նման մարմնի մասերի: Սակայն կա հավանականություն, որ մարդիկ կարող են կանոնավորապես հանդիպել՝ մաս չլինելով միասնական մարմնի, որի մասին գրում է Աստվածաշունչը: Թեև այդ տխուր փաստը կարող է համապատասխանել

եկեղեցական կյանքի շատ ոլորտների իրականությանը, սակայն մենք ջանում ենք կենտրոնանալ ավետարանչության և վկայության մեջ միասնական լինելու անհրաժեշտության վրա:

Քննարկե՛ք Եփեսացիս 4.16-ը: Ի՞նչ տեղի կունենար մարմնի աճի և եռանդունության հետ, եթե այն զրկվեր արմունկից, ձեռքի դաստակից կամ ծնկահոդերից: Ի՞նչ է ասում Պողոսի կողմից մեջբերված համեմատությունը եկեղեցու մասին՝ որպես հավատացյալների միասնական մարմնի, ում վրա դրվել է ավետարանական առաքելությունը:

Պողոս առաքյալը պնդում է, որ եկեղեցու մարմինն աճում է, երբ նրա բոլոր մասերը կատարում են իրենց աշխատանքը: Ի՞նչ է դա ասում այն եկեղեցիների մասին, որոնցում աճ չկա: Մեր առաջին արձագանքը կարող է լինել մեղադրելը նրանց, ովքեր, ինչպես մեզ թվում է, չեն կատարում աշխատանքի իրենց մասը: Դա կարող է ճիշտ լինել, բայց մտածե՛ք հետևյալի մասին. արդյոք լինո՞ւմ է այնպես, որ եկեղեցիներն իրենց անդամներին զրկում են մարմնի կյանքին մասնակցելուց:

Եթե եկեղեցու ղեկավարությունը չի հասկանում ծառայության մեջ բոլոր քրիստոնյաների մասնակցության սկզբունքը, նրանք նպատակասլաց կերպով չեն ձգտի շարքային անդամներին առավելագույնս ընդգրկել եկեղեցու կյանքի և ծառայության մեջ:

Կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 1.5-8-ը: Թեսաղոնիկեի եկեղեցին ինչպե՞ս վարվեց Պողոսից ստացված Ավետարանի հետ: ____

_____

_____

_____

Թեսաղոնիկեի եկեղեցին, ընդունելով Ավետարանը, սկսեց ստացած օրհնությունները կիսել ուրիշների հետ: Աստված առաջվա պես ցանկանում է, որ Իր եկեղեցին աշխատի հենց այդպես:

Երբ համայնքի յուրաքանչյուր անդամ աշխատում է եկեղեցական ավետարանչության ծրագրված ռազմավարության շրջանակներում, բազում օրհնություններն իրենց սպասել չեն տալիս: Այստեղ հատկապես ցանկալի է աջակցության և պատասխանատվության կարևորությունը: Աշխատելով թիմով՝ մենք կկարողանանք լրջորեն վերաբերվել այդ բաղկացուցիչներին: Թիմային ոգու անբավարարությունը բազում մեծարժեք ձեռնարկումներ է տապալել: Թեև յուրաքանչյուրն առանձին կարող է հատուկ պարգևներով ու տաղանդներով օժտված լինել, սակայն համատեղ նպատակասլաց աշխատանքն առաջվա նման միայն երազանք է մնում: Խմբային աշխատանքը դրդում է որոշակի

պատասխանատվության՝ ոչ թե քննադատության կամ դատապարտման իմաստով, այլ վերլուծության և գնահատման:

Դուք ինչպե՞ս կարող էիք առավել սերտորեն աշխատել եղեկեցու անդամների հետ ավետարանման աշխատանքում: Ինչո՞ւ է այդքան հեշտ դառնալ ինքնագոհ, ալարկոտ և սեփական անձի վրա կենտրոնացած:

Չորեքշաբթի *ապրիլի 11*

Աշխատել Աստծո հետ

Երեկ մենք խոսում էինք ողջ եկեղեցու համատեղ ավետարանչական աշխատանքի մասին: Անհրաժեշտ է նաև հասկանալ. մենք միասին աշխատում ենք, որպեսզի ավարտենք Աստծո առաջադրանքը: Այդ պատճառով, երբ եկեղեցին ինչ-որ ավետարանչական միջոցառումներ է քննարկում, նրա անդամները պետք է հասկանան, որ իրենք համագործակցում են Աստծո հետ, ով նրանց դրդում է ծառայության, ղեկավարում է այդ ծառայությունը, անհրաժեշտ ուժեր է տալիս և օրհնում է:

Կարդացե՛ք Գործք առաքելոց 2.47-ը և Ա Կորնթացիս 3.5-9-ը: Ինչպիսի՞ն էր բարի լուրի տարածման գործում եկեղեցու աշխատանքի արդյունքը, երբ նրա միջոցով աշխատում էր Ինքն Աստված:

_____

_____

Կարդացե՛ք Բ Պետրոս 3.9-ը և Տիտոս 2.11-ը: Ի՞նչն է դրդում քրիստոնյաներին և օգնում նրանց աշխատել Աստծո հետ միասին: _____

_____

Սուրբ Գիրքը լի է Իր արարչության պսակի՝ մարդու հանդեպ Աստծո սիրո մասին վկայություններով: Այդ պատճառով զարմանալի չէ, որ Նա Իր վրա է վերցրել մարդկության փրկության գործի նախաձեռնությունը: Ճշմարտությունն այն է, որ խաչը բովանդակում է մեր հանդեպ Աստծո սիրո բոլոր անհրաժեշտ ապացույցները և Նրա ցանկությունը՝ մեզ տեսնել Իր Արքայության մեջ: Իր շնորհով Աստված իսկապես դիպչում է մեզ և օրհնում է մեզ, և այդ զարմանալի շնորհը՝ դրսևորված խաչի վրա, մեր մեջ ցանկություն է առաջացնում կիսել այն, ինչ մենք ձրի ենք ստացել (տե՛ս Մատթեոս 10.8): Թեև ժամանակ առ ժամանակ աշակերտները փորձում էին աշխատել ինքնուրույն (տե՛ս Մատթեոս 17.14-21), ավելի

հաճախ նրանց փորձի մեջ միավորվում էին մարդկային և աստվածային աշխատանքը:

Հիսուսը կանչեց առաջին աշակերտներին և խոստացավ նրանց մարդկանց որսորդներ դարձնել: Նա նրանց սովորեցնում էր և տալիս ամեն անհրաժեշտը, այնպես որ նրանց ծառայության միջոցով շատ մարդիկ հավատացյալներ դարձան: Սակայն կար ևս մեկ աստվածային պարգև, որը նրանց պետք եկավ Հիսուսի՝ երկինք համբարձվելուց հետո՝ Սուրբ Հոգին, ով վաղ եկեղեցուն օժտեց զորությամբ իր վկայության և ավետարանչական առաքելության մեջ: Ավետարանի ժամանակակից ծառայողները նախկինի պես Աստծո գործակիցներն են շրջապատողների փրկության գործում: Մենք պետք է աղոթենք, որ Սուրբ Հոգին սովորեցնի մեզ Աստծո սերն ու հոգատարությունը ի հայտ բերել այնպես, որ դա դիպչի Փրկչի կարիքն ունեցող մարդկանց սրտերին: Մենք պետք է գիտակցենք, որ առանց Աստծո ի զորու չենք ոչինչ անել և միայն հավատով, հնազանդությամբ, հեզությամբ, մեզ համար մեռնելու և շրջապատողներին ծառայելու ցանկությամբ կդառնանք առավել հաջողակ վկաներ Աստծո ձեռքերում: Եսասիրությունը պետք է արմատախիլ արվի, որպեսզի Տերը կարողանա արդյունավետ կերպով օգտագործել մեզ:

Հինգշաբթի ***12 ապրիլի***

Հաշվետու լինելով եկեղեցուն

Այս շաբաթ մենք մտորում էինք Աստծո համար քրիստոնյայի կատարած աշխատանքի որոշ կարևոր բաղադրիչների մասին: Իսկ այժմ կշոշափենք «հաշվետու լինելու» թեման (այդ հարցն առավել մանրամասն կքննարկենք 12-րդ դասում): Եկեղեցուն հաշվետու լինելով ավետարանչական միջոցառումների անցկացման և վկայության մասին՝ մենք դրանով իսկ օրհնության և փոխադարձ աջակցության մթնոլորտ ենք ստեղծում: Հաշվետվություն ներկայացնողները կարող են ստանալ ողջ եկեղեցու աջակցությունը, իսկ ունկնդիրներն ստանում են օրհնություններ՝ գիտակցելով, թե ինչ է անում Աստված Իր ժողովրդի միջոցով:

Կարդացե՛ք Գործք առաքելոց 14.27-ը և 15.4-ը: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ էին եկեղեցում պատմում վերապրած ավետարանչական փորձառությունների մասին: _____

_____

Վերոհիշյալ համարների համատեքստից երևում է, որ հաշվետվությունները եկեղեցուն ներկայացվում էին տարբեր երկրներում ավետարանչական գործունեության երկարատև ժամանակահատվածից հետո: Հաշվետվություն ներկայացնելու այդպիսի ժողովը վկայում է բարի լուրի տարածման հարցում եկեղեցու շահագրգռվածության, ինչպես նաև՝ այդ ծառայությանը եկեղեցու աջակցության մասին: Ողջ Գործք առաքելոց գիրքը իրականացված ավետարանչական գործունեության մասին վաղ եկեղեցու հաշվետվություն է: Այն լի է ժամանակակից եկեղեցու համար դասերով: Հաշվետվության կարևորությունը հատկապես ակնառու կդառնա, եթե մենք պատկերացնենք, թե ինչ կլինի Գործք առաքելոց գրքի հետ, եթե նրանից հանենք ավետարանչական գործունեության մասին ողջ հաշվետվությունը:

Կարդացե՛ք Մարկոս 6.30-ը: Ի՞նչ եք կարծում, աշակերտներն ինչո՞ւ Հիսուսին պատմեցին այն մասին, ինչ իրենց հաջողվել էր անել: _____

_____

_____

_____

Ճիշտ է, որ անձնական վկայությունն ու ավետարանչությունը ինքնաբուխ են կատարվում, բայց ճիշտ է և այն, որ ողջ եկեղեցին պետք է նպատակաուղղվածսլաց մշակված մոտեցում ունենա: Եկեղեցու մշակած ընդհանուր ռազմավարությունն օգնում է տեսադաշտից չկորցնել գլխավոր նպատակը և նպաստում է մեր գործունեության օրինաչափ առաջընթացին: Այդպիսի ռազմավարությունը նաև գնահատելու և հաշվետու լինելու կանոնավոր հնարավորություն է ապահովում: Հաշվետու լինել՝ չի նշանակում պարզապես թվարկել արվածը: Հաշվետվության շնորհիվ եկեղեցին և վկայողներն իրենք կարող են ևս մեկ անգամ տեսնել, որ Աստծո գործակիցներն են:

Որոշ մարդիկ վախենում են հաշվետվություն ներկայացնել, քանի որ նրանց թվում է, թե դա նման է սեփական ձեռքերումները թվարկելուն, սակայն մեր բարեխիղճ հաշվետվության միջոցով փառավորվում է Աստված, իսկ Նրա եկեղեցին ամրապնդվում է զորությամբ: Առաջին քրիստոնյաները փառաբանում էին Աստծուն, երբ լսում էին Պողոս առաքյալի հաշվետվությունները (տե՛ս Գործք առաքելոց 21.19,20):

Եթե դուք հաշվետվություն ներկայացնելու լինեիք համայնքին ձեր վերջին ավետարանչական գործունեության մասին, ի՞նչ կասեիք: Ձեր պատասխանն ի՞նչ է ասում ձեր մասին: Ձեզ անհրաժե՞շտ են ինչ-որ փոփոխություններ:

Հետագա ուսումնասիրության համար

Ինչպե՞ս ընտրել ձեզ համապատասխանող ծառայությունը: Անցյալ շաբաթ ձեզ առաջարկվել է խորհել վկայության և եկեղեցու ավետարանչական գործունեության բոլոր տեսակների մասին, որոնց դուք կցանկանայիք մասնակցել և կհամաձայնեիք կատարել այդ աշխատանքը: Այս շաբաթ ձեզ սպասվում է ավետարանչական գործունեություն ընտրել և սկսել մասնակցել դրան: Ստորև բերված խորհուրդները, այդ հարցում կօգնեն ձեզ:

Ուսումնասիրե՛ք ավետարանչության տեսակների ցանկը, որոնց կցանկանայիք մասնակցել: Կրճատե՛ք այդ ցանկը մինչև ծառայության երկու կամ երեք ոլորտ, որպեսզի ծառայության այդ տեսակները համապատասխանեն ձեր ընդունակություններին: Լսե՛ք, թե ինչի կոչ է ձեզ անում Աստված:

Հետո կրճատե՛ք ձեր ցանկը՝ այն ժամանակին համապատասխան, որ դուք ամեն շաբաթ կկարողանայիք հատկացնել՝ կանոնավոր կերպով ծառայություն կատարելու համար: Նաև նպատակ դրեք՝ այդ ծառայությունը չընդհատել տասներկու ամսվա ընթացքում, որպեսզի կարողանաք առաջ գնալ ձեր ծրագրի իրականացման մեջ, գնահատել այն և կատարելագործել:

Ընտրեք ծառայությունը և հովվին ու անձնական ծառայության բաժնի ղեկավարին տեղեկացրե՛ք ընտրված ծառայությանը մասնակցելու ձեր ցանկության մասին: Պայմանավորվե՛ք նրանց հետ հանդիպման մասին՝ կիսվելու ձեր երազանքներով: Իմացե՛ք եկեղեցու ավետարանչական ծրագրերի մասին և խորհե՛ք, թե ինչպես դուք կարող եք ներգրավվել դրանցում, կամ ինչպես ձեր ընտրած ծառայությունը կարող է լրացնել այդ ծրագրերը:

Խոնարհությամբ խնդրեք հովվին և անձնական ծառայության բաժնի ղեկավարին՝ իրենց խոհերը կիսել այն մասին, թե որքանով եք դուք հարմար այդ ծառայությանը: Նրանք ձեզ հաջողություն են ցանկանում վկայության և ավետարանչության ցանկացած տեսակի մեջ, այդ պատճառով նրանց խորհուրդն անգին կլինի ձեզ համար:

Հարցեր քննարկման համար

1. Ստորև բերված մեջբերումն ինչպե՞ս է համաձայնեցվում բոլոր քրիստոնյաների քահանայության հետ: Այն համաձայնեցվո՞ւմ է այն

գաղափարի հետ, որ եկեղեցու բոլոր անդամները պետք է աշխատեն միասին: «Այս երկրի վրա Աստծո աշխատանքը երբեք չի ավարտվի, եթե մեր քույրերն ու եղբայրները՝ մեր եկեղեցու անդամները, չներգրավվեն այդ աշխատանքի մեջ և իրենց ջանքերը չմիավորեն ծառայողների ու եկեղեցու ղեկավարության հետ» (Է. Ուայթ, Ավետարանի ծառայողներ, 352):

2. Խմբում քննարկեք, թե ինչ ռազմավարություն կարող է օգտագործել ձեր եկեղեցին՝ օգնելու բոլոր անդամներին՝ հասկանալու իրենց կարևորությունը եկեղեցական ավետարանչության մեջ և վկայության մեջ: Դուք ի՞նչ կարող եք անել ձեր կողմից, որ եկեղեցու անդամներն առավելագույնս մասնակցեին ծառայությանը:

ՀՈԳԵՎՈՐ ՊԱՐԳԵՎՆԵՐ՝ ԱՎԵՏԱՐԱՆՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Ա Պետրոս 4.10, Հովհաննես 16.8,13, Ա Կորնթացիս 12.28-31, Գործք առաքելոց 2.10-47, 13.4,5:

Հիշելու համարը.

«Եվ նա մի քանիսին տվեց առաքյալներ լինել, մի քանիսին՝ մարգարեներ, մի քանիսին՝ ավետարանիչներ, մի քանիսին՝ հովիվներ և վարդապետներ: Սուրբերի կատարելության համար, պաշտոնի գործի համար, Քրիստոսի մարմնի շինության համար» (Եփեսացիս 4.11,12):

Հիմնական միտքը.

Հոգևոր պարգևները հատուկ հատկանիշներ կամ հատկություններ են, որոնք տրվում են եկեղեցու յուրաքանչյուր անդամի, որպեսզի դրանք օգտագործվեն ի փառս Աստծո և հանուն հոգիների փրկության:

Որպես եկեղեցի՝ մենք արդարացիորեն ընդգծում ենք մարգարեության պարգևի նշանակությունը, բայց պետք է ուշադիր լինել՝ բաց չթողնելու ծառայության համար անհրաժեշտ այլ հոգևոր պարգևների նշանակությունը: Բոլոր հոգևոր պարգևները առաջվա նման մնում են շատ կարևոր: Դա հստակ աստվածաշնչյան ուսմունք է, և որպես եկեղեցի՝ մենք պետք է լրջորեն վերաբերվենք հոգևոր պարգևներին, որպեսզի եկեղեցու անդամները կարողանան ստանալ և կատարելագործել դրանք: Ցավոք, եկեղեցու շատ անդամներ չեն օգտվում իրենց ստացած պարգևների առավելությունից: Դրա համար շատ պատճառներ կան: Երբեմն դրանում հենց իրենք են մեղավոր: Բայց, հնարավոր է, որոշ դեպքերում կարող էր ավելի շատ բան արվել՝ նրանց ոգեշնչելու համար, որ որոնեն իրենց պարգևները, իսկ հետո օգտագործեն դրանք ավետարանչության ծառայության համար՝ Սուրբ Հոգու ազդեցության ներքո: Ի՜նչ վատնողականություն է՝ ունենալ պարգևը և երբեք այն չօգտագործել ըստ նշանակության:

Օժտված քրիստոնյաները

Եթե դուք հարցնեք մեր եկեղեցու անդամներին, թե նրանք Աստվածաշնչում թվարկված պարգևներից որևէ մեկն ունե՞ն, նրանցից շատերը, որևէ եզրակացության գալուց առաջ երկար կմտածեն, թեև, ամենայն հավանականությամբ, արդեն օգտագործում են իրենց պարգևը: Նրանք պարզապես դա չեն գիտակցում: Որոշ մարդիկ, ովքեր որևէ վերլուծություն չեն կատարել սեփական հոգևոր պարգևներն ի հայտ բերելու ուղղությամբ, հիանալի ծառայություն են իրականացնում այնտեղ, որտեղ գտնում են իրենց կոչումը, և եկեղեցին նրանց աջակցում է դրանում: Հաճախ մարդկանց կողմից սեփական ընդունակությունները ի հայտ բերելուն աջակցող սեմինարները պարզապես ցույց են տալիս այն պարգևները, որոնք արդեն օգտագործվում են ծառայության մեջ: Այդ պատճառով միանգամայն հնարավոր է, որ մարդիկ կարող են Սուրբ Հոգու առաջնորդությամբ զարգացնել իրենց պարգևները՝ առանց այդ պարգևների նախնական որոնման և նույնականացման: Մյուս կողմից, ոմանց համար դժվար է ներգրավվել ծառայության մեջ, քանի որ նրանք իրենց չեն համարում ինչ-որ բանով օժտված: Կարևոր է սատարել նրանց, օգնել՝ տեսնելու իրենց պարգևը և դրդել այն կիրառելու ծառայության մեջ:

Կարդացե՛ք Ա Պետրոս 4.10-ը: Այդ համարն ի՞նչ է ասում նրանց մասին, ովքեր իրենց պարգևը նվիրել են Տիրոջը: _____

_____

_____

Մենք արդեն տեսանք, որ յուրաքանչյուր քրիստոնյա ունի իր սեփական ծառայությունը, այդ պատճառով չարժե զարմանալ, որ Աստված մեզ պարգևում է ամեն անհրաժեշտն այդ ծառայության կատարելագործման համար: Այսպիսով, ավետարանման մեծ հանձնարարությունն իբրև անմիջականորեն իրեն ուղղված Աստծո դիմում ընդունող յուրաքանչյուրն իր ծառայության մեջ կամրապնդվի Հոգով: Աստված գիտի, թե եկեղեցին ինչի կարիք ունի՝ Իր աշխատանքի կատարման՝ հոգիների փրկության համար, և Նա կբավարարի այդ կարիքներն հարկ եղած ժամանակ և հարկ եղած վայրում:

Կարդացե՛ք Ա Կորնթացիս 12.11-ը: Այդ համարը ցույց է տալիս, որ քրիստոնյաների վրա հոգևոր պարգևների հեղումը Սուրբ Հոգու գործունեության մի մասն է՝ սրբերին ամեն տեսակ բարի գործերի համար

պատրաստելու նպատակով (տե՛ս Եփեսացիս 2.10): Սուրբ Հոգին ոչ միայն քրիստոնյաների միջև բաշխում է հոգևոր պարգևները, այլև ուժ է պարգևում դրանց օգտագործման համար (տե՛ս Գործք առաքելոց 1.8):

Բոլոր աստվածաշնչյան հատվածները, որոնցում թվարկվում են հոգևոր պարգևները, տարբերվում են միմյանցից: Դա խոսում է այն մասին, որ այդ ցուցակները լրիվ չեն, կան նաև այլ պարգևներ, որոնք կարելի էր ավելացնել դրանց:

Խորհե՛ք «պարգև» կամ «պարգևներ» բառի մասին: Ի՞նչ է այն նշանակում: Դա ի՞նչ է ասում ձեզ Աստծո գործի մեջ, այլ ոչ թե միայն սեփական նպատակների իրականացման համար ձեր «պարգևի» օգտագործման պատասխանատվության մասին:

Երկուշաբթի ***ապրիլի 16***

Հոգին և Նրա պարգևները

Որոշակի չափով մարդու հոգևոր պարգևները որոշում են նրա տեղը համայնքում: Այլ խոսքերով՝ ի հայտ բերել հոգևոր պարգևները՝ նշանակում է իմանալ, թե որտեղ է Աստված ցանկանում ձեզ օգտակար տեսնել Իր մարմնում: Եղե՞լ է, որ ձեզ հրավիրեն մասնակցել ծառայության, որը ձեզ հետաքրքիր չի եղել, և որի հանդեպ բնավ ձգտում չեք զգացել: Գիտե՞ք արդյոք մարդկանց, ովքեր համաձայնել են մասնակցել եկեղեցու կյանքին, իսկ տարվա կեսին հրաժարվել են իրենց ծառայությունից, քանի որ իրենց զգացել են ոչ իրենց տեղում: Ամենայն հավանականությամբ, նման իրավիճակներում մարդկանց խնդրել են, կամ նրանք իրենք են փորձել զբաղվել ծառայությամբ, որին կանչված չեն և որը կատարել պարզապես չեն կարողանում: Թեև այդպիսի բան պատահում է, դա չպետք է կանոն դառնա:

Կարդացե՛ք Գործք առաքելոց 13.1-3-ը: Ի՞նչ տեղի ունեցավ Անտիոքի եկեղեցում, և ի՞նչ է դա մեզ ասում որոշակի ծառայության կանչված լինելու մասին: _____

_____

_____

Շատ կարևոր է, որ հենց Սուրբ Հոգին է մեզ կանչում ծառայել Աստծուն: Բառնաբասն ու Պողոսը կանչված էին Հոգու կողմից, և այդ նույն Հոգին նրանց ուժ էր պարգևում: 2-րդ համարը կարևոր տեղեկատվություն է բովանդակում: Այն բացում է մեզ, որ Բառնաբասն

ու Պողոսն արդեն ներգրավված էին Տիրոջ ծառայության մեջ՝ նախքան հատուկ ծառայության կոչը լսելը: Մենք գիտենք, որ դա իսկապես հատուկ ծառայություն էր, քանի որ Շմավոնն ու Մանայենն այդ ժամանակ կանչված չէին: Երկինք համբարձվելուց ոչ շատ առաջ Հիսուսը խոստացավ, որ Սուրբ Հոգին կլինի մեր Օգնականը: Հոգու գործառույթներից մեկը մեզ օգնելն է՝ տանելու բարի լուրը: Այդ պատճառով, եթե Նա մեզ որոշակի պարգևներ է ուղարկում ավետարանչական աշխատանքի ավարտման համար, նշանակում է՝ դրանք իսկապես կարևոր են, և մենք պետք է զարգացնենք դրանք:

Բերված համարներն ի՞նչ են հաղորդում մեզ հետ Սուրբ Հոգու փոխազդեցության մասին: Հովհաննես 16.8,13, Գործք առաքելոց 13.4, Հռոմեացիս 8.11, Գործք առաքելոց 1.8: _____

_____

_____

Հասկանալով, թե ինչու է Հոգին տալիս հոգևոր պարգևները, մենք գիտակցում ենք, թե որքանով են դրանք անհրաժեշտ նրանց փրկության համար, ում պետք է բերենք Քրիստոսի մոտ: Սուրբ Հոգու կոչի և պարգևների միջոցով յուրաքանչյուր քրիստոնյա այսպես թե այնպես, այս կամ այն չափով ներգրավված է ավետարանման մեծ աշխատանքում:

Թեև երբեմն մենք կարող ենք ինչ-որ առանձին պարգևներ համարել կարևոր կամ առանձնահատուկ, իրականում բոլոր պարգևները շատ նշանակալի են եկեղեցու կյանքի և առաքելության համար: Հարգանքով վերաբերվելով օժտված ավետարանչին, քարոզչին կամ ուսուցչին՝ պետք չէ մոռանալ նաև մյուս պարգևների կարևորության մասին:

Երեքշաբթի ***ապրիլի 17***

Ճանաչելով սեփական պարգևները

Դժվար չէ որոշել մեկ այլ մարդու պարգևը: Դուք կարող եք արագ իմանալ, թե որ ծառայության մեջ են հաջողակ ձեր հովիվը, ձեր եկեղեցու մյուս ծառայողները և համայնքի շարքային անդամները: Ձեզ պարզապես անհրաժեշտ է հետևել, թե ինչ են նրանք անում, ինչպես են ծառայում Աստծուն և մերձավորներին, ինչպես են մարդիկ արձագանքում նրանց աշխատանքին, և ո՛ր ծառայությունն է կրում Աստծո օրհնության առանձնահատուկ կնիքը: Սակայն երբ խոսքը վերաբերում է սեփական հոգևոր պարգևների որոշմանը, հարցը բարդանում

է: Անձնական հոգևոր պարգևների հայտնաբերման գործընթացը երբեմն ներկայացվում է որպես բավականին հասարակ գործ՝ լրացրեք հարցաթերթիկը, վերլուծեք յուրաքանչյուր կետը, և ձեր պարգևը գտնված է: Եկեղեցու շատ անդամներ հենց այդպես էլ փորձել են ի հայտ բերել իրենց հոգևոր պարգևները, բայց հիասթափվել են, երբ համայնքը նրանց չի վստահել այն ծառայությունը, որում նրանք կցանկանային կիրառել իրենց պարգևները: Հոգևոր պարգևների մասին լավ նախապատրաստված սեմինարը, հնարավոր է, պարզագույն եղանակն է՝ սկսելու որոշել սեփական հոգևոր պարգևները: Սակայն ճիշտ կլինի այն ընկալել որպես միայն առաջին քայլը որոնման մեջ, ինչն էլ ցույց են տալիս գրագետ կազմակերպված սեմինարները:

Կարդացե՛ք Ա Կորնթացիս 12.28-31-ը: Այստեղ Պողոսն ի՞նչ է ասում հոգևոր պարգևների մասին: _____

_____

_____

Այս համարները մեզ կոչ չեն անում ձգտել դեպի մեկ կամ երկու պարգև, որոնք, որպես կանոն, համարվում են լավագույնները: Տվյալ հատվածում Պողոսը ցույց է տալիս, որ հոգևոր պարգևները բաշխվում են տարբեր իրավիճակներում ծագող կարիքին համապատասխան, որոնց հետ բախվում է եկեղեցին: Այդ պատճառով լավագույն պարգևները կլինեն նրանք, որոնք ծառայում են յուրաքանչյուր առանձին համայնքի կարիքներին և ամրապնդում են եկեղեցու անդամներին: Լրջորեն մոտենալով սեփական հոգևոր պարգևների որոշմանը՝ չի կարելի թերագնահատել եկեղեցու մյուս անդամների կարծիքը: Երբ ընտրական հանձնաժողովը տարբեր թեկնածուություններ է առաջարկում առաջիկա տարում այս կամ այն ծառայության համար, նա փնտրում է մարդկանց, ովքեր արդեն հետաքրքրություն և ընդունակություն են դրսևորել ծառայության որոշակի տեսակների հանդեպ: Թեև ընտրական հանձնաժողովը կարող է նաև թերի ըմբռնել որևէ հոգևոր պարգևի առկայությունը, այնուամենայնիվ, նա փնտրում է մարդկանց, ովքեր ընդունակ են այս կամ այն ծառայությանը:

Երբ ինչ-որ մեկը համոզված է, որ դուք իսկապես հաջողությամբ գլուխ կհանեք որևէ ծառայությունից, դուք կարող եք դա ընկալել որպես ձեր հոգևոր պարգևի մատնանշում: Ձեր կողմից իմաստուն կլինի՝ լսել այդպիսի կարծիքը և աղոթել այդ մասին:

Հոգևոր պարգևների մասին սեմինարից ստացված արդյունքը, եղբայրակիցների քաջալերանքի հետ մեկտեղ, ինչպես նաև ծառայության որոշակի տեսակի շրջանակներում անցկացված փորձաշրջանի

դրական արդյունքները՝ այս ամենը կարող է հուշել ձեզ, թե ինչի է Տերը կանչում և ինչ տաղանդներով է օժտել ձեզ:

Ձեր կարծիքով, ի՞նչ տաղանդներով եք դուք օժտված: Ինչո՞ւ եք դուք այդպես կարծում:

Չորեքշաբթի *ապրիլի 18*

Այլ պարգևներ

Մտորելով հոգևոր պարգևների, վկայության և ավետարանչության մասին՝ մենք հակված ենք գլխավորապես կենտրոնանալ ավետարանչի, քարոզչի և ուսուցչի պարգևի վրա: Թեև բոլոր պարգևները չէ, որ անմիջականորեն ավետարանչական բնույթ են կրում, սակայն, օգտագործվելով եկեղեցու ներսում, դրանք այս կամ այն չափով ազդեցություն կգործեն նրա ավետարանչական առաքելության վրա:

Եվս մեկ անգամ կարդացե՛ք Գործք առաքելոց 6.1-4-ը: Այդ մարդկանց վրա պատասխանատվություն էր դրված՝ կատարել ծառայությունը, որ այսօր կատարում են սարկավագները: Ի՞նչ պատճառներ էին առաքյալներին ստիպում հրաժարվել այդ աշխատանքի կատարումից: Մենք ինչպե՞ս պետք է հասկանանք այստեղ շարադրված սկզբունքը: _____

_____

_____

_____

Նորընտիր սարկավագները վաղ եկեղեցու ընդհանուր ավետարանչական աշխատանքին մասնակցում էին նրանով, որ առաքյալներին ազատեցին, որպեսզի նրանք կարողանային իրենց ողջ ժամանակը նվիրել ավետարանչությանն ու քարոզին: Այդ պատճառով, թեև սարկավագի աշխատանքը նկատելի էլ չէր ավետարանչության առաջին պլանում, սակայն վարագույրի հետևում նրանք որոշակիորեն մասնակցում էին նույն ծառայությանը: Մենք լիովին կարող ենք ենթադրել, որ սարկավագների ծառայությունը, որը կարիքավոր այրիներին օգնելն էր, մարդկանց դրդում էր ունկնդրել Ավետարանի քարոզին: Միայն Աստված գիտի, թե որքան բարիք բերեցին նրանք իրենց ծառայությամբ: Եկեղեցու հաջող գործունեության համար անհրաժեշտ են ղեկավարներ և վարչարարներ՝ կազմակերպման, ֆինանսների և այլ ոլորտներում: Նրանք, ովքեր իրենց տարբեր ընդունակություններով ծառայում են Աստծուն, պետք է հասկանան, որ թիմի անդամներ են, և

որ նրանց ներդրումը կարևոր է եկեղեցու ընդհանուր ավետարանչական գործունեության համար:

Կարդացե՛ք Գործք առաքելոց 2.40-47-ը: Ի՞նչ հոգևոր պարգևներ ի հայտ եկան տվյալ իրավիճակում, և որո՞նք էին դրա արդյունքները ոչ միայն վկայության, այլ նաև աշակերտության մեջ: Ինչպիսի՞ կարևոր դասեր մենք կարող ենք քաղել այս պատումից:

«Ավելացնում էր» բառը Գործք առաքելոց 2.47-ում օգտագործվում է հասարակության մեջ մուտք գործելու իմաստով: Նորադարձներն, անշուշտ, դառնում էին եկեղեցու մասը և, անհրաժեշտ հոգատարություն ստանալով, միանում էին ընդհանուր հոգևոր ընտանիքին: Այդ պատճառով մենք կարող ենք եզրակացնել, որ վարչարարության, ղեկավարման, հյուրընկալության, հովվական ծառայության ոլորտներում հոգևոր պարգևները նույնպես կարելի է ներառել պարգևների ցանկի մեջ: Դա անհատական հոգևոր պարգևների զարգացման լավ օրինակ է ողջ եկեղեցու համար: Դրանց միջոցով պահպանվում է մյուս անդամների կատարած ավետարանչական ծառայությունը:

Խորհե՛ք այն մասին, թե եկեղեցական ծառայության մեջ ինչ տեղ եք զբաղեցնում դուք: Ո՞րն է ձեր դերը: Ինչպե՞ս է այն ներդաշնակվում եկեղեցու հիմնական առաքելության հետ:

Հինգշաբթի ***ապրիլի 19***

Պարգևները և քրիստոնեական պատասխանատվությունը

Անձնական հոգևոր պարգևների որոշումն անհրաժեշտ է ոչ թե պարզապես մեր անձնական հետաքրքրասիրությունը բավարարելու, այլ առաջինը նրա համար, որ հասկանանք, թե ինչ է սպասում Տերը մեզանից, և ինչպես մենք կարող ենք լավագույնս ծառայել եկեղեցու մարմնում: Դա, իհարկե, մեծ պատասխանատվություն է, բայց մեզ անհրաժեշտ է կատարել այն, ինչ մեզ հանձնարարել է Աստված:

Համեմատե՛ք Հռոմեացիս 12.4, Ա Կորնթացիս 12.12 և Եփեսացիս 4.16-ը: Այդ համարներն ի՞նչ են հաղորդում հոգևոր պարգևների և եկեղեցու մարմնի մասին: _____

_____

_____

Կարևոր է նշել, որ երեք հիմնական գլուխները, որոնցում թվարկվում են հոգևոր պարգևները, դրանց մասին խոսում են եկեղեցու մարմնի համատեքստում: Դա ցույց է տալիս, որ թեև մարդը կարող է վկայության կամ ավետարանչության մեջ ներգրավված լինել անձնական մակարդակով, ինչպես դա եղավ Փիլիպպոսի և եթովպացի ներքինիի դեպքում (Գործք առաքելոց 8), սակայն մենք բոլորս կանչված ենք մեր պարգևները զարգացնելու եկեղեցու միջոցով: Ինչպես արդեն ասել ենք, ինչ էլ անի եկեղեցին, նա պետք է դա անի Սուրբ Հոգու ղեկավարությամբ և առաջնորդությամբ: Մենք պարտավոր ենք փնտրել Աստծո կամքը և գործել այն բանին ներդաշնակ, ինչը մեզ բացում է Հոգին: Մենք չպետք է ընկնենք կազմված ծրագրերի թակարդը և հետո միայն աստվածային հավանությունը փնտրենք: Հաճախ մենք հարցնում ենք. «Ի՞նչ կարող է անել մեր եկեղեցին Աստծո համար»: Ավելի լավ կլիներ որոշել, թե Աստված արդեն ինչ է անում Իր ժողովրդի մեջ, և ներգրավվել այդ աշխատանքում:

Մատթեոս 10.19, 20, Գործք առաքելոց 13.4, 5, 16.6,7-ում ի՞նչ է ասվում այն մասին, թե ինչպես էր Սուրբ Հոգին ղեկավարում աշակերտներին: _____

_____

_____

Աշակերտներն ամենագետ Սուրբ Հոգուն թույլ էին տալիս ղեկավարել իրենց ծառայությունը: Նրանք երբեմն փորձում էին դուրս գալ ինչ-որ ավետարանչական դաշտ, սակայն Սուրբ Հոգին նրանց մեկ այլ վայր էր ուղարկում: Ավելի շուտ, Պողոսը տեսիլքներ էր ստանում, որոնցում Սուրբ Հոգին նրան հատուկ ցուցումներ էր տալիս, թե որտեղ պետք է աշխատեն աշակերտները (տե՛ս Գործք առաքելոց 16.9,10):

Անհրաժեշտ է պատասխանատու կերպով օգտագործել հոգևոր պարգևները: Դրա համար լավագույն ճանապարհը Սուրբ Հոգու ձայնին ուշադիր լինելն է: Մենք պատասխանատու ենք եկեղեցու միաբանության համար, իսկ դրան կարելի է հասնել, եթե մենք առաջնորդվենք Սուրբ Հոգով: Հոգին ուղղորդում է ինչպես առանձին մարդկանց, այնպես էլ ողջ եկեղեցուն: Առաջնորդելով մեկ անդամին՝ Նա ղեկավարում է նաև ամբողջ եկեղեցին: Հոգին առանձին մարդկանց չի առաջնորդում ողջ մարմնի ընթացքին հակառակ:

Մեզ նվիրելով Քրիստոսի ծառայությանը՝ մենք կարող ենք սպասել վիթխարի և փառավոր բաների, քանի որ Աստված մեզ վրա կհեղի Սուրբ Հոգին: Մեզանից յուրաքանչյուրի և ողջ եկեղեցու համար ամենագլխավորը Հոգու պարգևները ստանալուն պատրաստ լինելն է:

Հեպագա ուսումնասիրության համար

Ձեր եկեղեցում ուսուցման համար հնարավորություններ գտեք կամ կազմակերպեք:

Եթե դուք որոշել եք, թե ինչպես եք վկայելու և մասնակցելու ավետարանչական աշխատանքին, ինչպես նաև՝ հասցրել եք դա քննարկել ձեր հովվի և բաժինների ղեկավարների հետ, եկել է ժամանակը՝ ուշադրություն դարձնել ձեր նախապատրաստությանն առաջիկա ծառայության համար: Դուք կձգտեք օգտագործել ամեն մի հնարավորություն Հիսուսի մոտ ուղղորդելու մարդկանց, այդ պատճառով ուսուցումն ունի մեծ նշանակություն: Հիշե՛ք. աշխատելով թիմում՝ դուք ավելի շուտ աջակցություն, քաջալերանք կստանաք ու կհասնեք հաջողության, քան միայնակ գործելով: Ստորև բերված են խորհուրդներ, որոնք այդ հարցում ձեզ կօգնեն:

Խորհրդակցելով հովվի և ավետարանչական բաժնի ղեկավարի հետ՝ քննարկե՛ք, թե ուսուցողական ինչպիսի միջոցառումներ կարելի է ձեռնարկել: Հնարավոր է՝ ինչ-որ բան տեղի կունենա ոչ ձեր եկեղեցում: Ուսումնասիրե՛ք մարզի կամ տարածքի մակարդակով սեմինարներին մասնակցելու հնարավորությունը: Հնարավոր է նույնիսկ, որ ձեզ ուղարկեն ինչ-որ ուսուցման սեմինարների:

Եվս մեկ հնարավորություն՝ հովվին կամ այլ ղեկավարների խնդրեք ուսուցողական հանդիպումներ կազմակերպել տեղական եկեղեցու հիմքի վրա: Եթե ֆինանսական դժվարություններ ծագեն կամ քիչ մարդիկ ցանկություն հայտնեն մասնակցել հանդիպումներին ուրիշ քաղաքներում, ինչո՞ւ շրջանի բոլոր եկեղեցիներից ցանկացողներին չհրավիրել և այդ հանդիպումները չկազմակերպել ձեր քաղաքում:

Ձեր կողմից ընտրված ոլորտում ավետարանչության և վկայության ուսուցում անցնելով ուսումնասիրե՛ք բոլոր մատչելի ռեսուրսները: Ռեսուրսներին և դրանց օգտագործման հնարավորություններին ծանոթանալը ձևավորում է ծառայությանը ձեր նախապատրաստման կարևոր մասը:

Ձեր ավետարանչական ծառայության կարևորագույն բաղադրիչ է հոգևոր նախապատրաստությունը: Ծառայելով Աստծուն՝ դուք կսկսեք ավելի լավ գիտակցել սեփական հոգևոր կարիքները: Խնդրելով և ստանալով Սուրբ Հոգու զորությունը՝ դուք կկարողանաք է՛լ ավելի արդյունավետ կերպով աշխատել:

Հարցեր քննարկման համար

1. «Աստված եկեղեցում տարբեր պարգևներ է հաստատել: Դրանցից յուրաքանչյուրն էլ թանկարժեք է, և բոլորը կարող են իրենց դերը խաղալ Քրիստոսի մոտալուտ գալստյանը մարդկանց նախապատրաստման մեջ» (Է. Ուայթ, Ավետարանի ծառայողները, 481): Վերլուծե՛ք, թե ձեր եկեղեցում ի՞նչ նշանակություն է տրվում հոգևոր պարգևներին: Դուք ի՞նչ կարող եք անել՝ ընդգծելու յուրաքանչյուր պարգևի կարևորությունը:
2. «Բոլոր մարդիկ նույն պարգևները չեն ստանում, բայց Տիրոջ յուրաքանչյուր ծառայի Հոգու որևէ պարգև է խոստացված» (Է. Ուայթ, Քրիստոսի առակները, 327): Մենք ինչպե՞ս կարող ենք եկեղեցու բոլոր անդամներին ոգևորել, որպեսզի նրանք որոշեն, զարգացնեն և օգտագործեն իրենց հոգևոր պարգևները: Ինչո՞ւ է դա այդքան կարևոր:

ԱՎԵՏԱՐԱՆՉՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿԵՆՍԱՈՃ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Բ Կորնթացիս 3.2,3, Մատթեոս 9.36-38, Ա Կորնթացիս 9.20-22, Մարկոս 5.1-19, Հովհաննես 17.11-19:

Հիշելու համարը.

«Եվ Հոպպեում աշակերտ եղած մի կին կար, անունը՝ Տաբիթա, որ թարգմանվում է Այծեմնիկ. սա լիքն էր բարի գործերով և ողորմություններով, որ անում էր» (Գործք առաքելոց 9.36):

Հիմնական միտքը.

Գիտակցում ենք մենք դա, թե ոչ, բայց յուրաքանչյուր քրիստոնյա իր կյանքով է քարոզում բարի լուրը:

Հաճախ են կրկնում այն միտքը, որ քրիստոնեությունը պարզապես մի շարք կանոնների և ուսմունքների հետևելը չէ, դա նաև մեր կենսակերպն է կամ կենսաոճը: Չէ՞ որ մեր հավատն անպայման ազդեցություն է գործում մեր որոշումների և մեր ողջ կյանքի վրա:

Ճիշտ է նաև այն, որ իրենց քրիստոնյա անվանողները շրջապատի մարդկանց սևեռուն ուշադրության կենտրոնում են, ովքեր նրանց կյանքը համեմատում են նրա հետ, ինչ այդ մարդիկ դավանում են: Անգամ եթե մենք մտադիր չենք որևէ մեկին ինչ-որ հարցում խրատել, այնուամենայնիվ, մեզ հետևողներն անում են իրենց եզրակացությունները: Այդ պատճառով հարցն այն չէ, թե *մենք ազդեցություն գործո՞ւմ ենք շրջապատող մարդկանց վրա*, այլ, ավելի շուտ, այն, թե *ինչ ազդեցություն ենք գործում նրանց վրա և ինչ ենք նրանց հաղորդում մեր կյանքով:* Թեև մենք միշտ պետք է հիշենք շրջապատի մարդկանց վրա ակամա ազդեցության կարևորության մասին, նաև պետք է ծրագիր կազմենք՝ նպատակ ունենալով օգնել նրանց՝ տեսնելու հավատի և գործերի միջև կապը: Այս շաբաթ մենք կմտորենք այն մասին, թե ինչպես կարող է քրիստոնեական կենսակերպն օգնել վկայելու հավատի նշանակության մասին մեր ամենօրյա կյանքում:

Անխոս քարոզներ

Ինչպե՞ս մենք կկարողանայինք Հիսուսի աշակերտներին ճանաչել առաջին դարում:

Քահանաներին և փարիսեցիներին կարելի էր ճանաչել նրանց հագուստով: Հագուստով կարելի էր ճանաչել նաև ձկնորսին, գյուղացուն կամ հռոմեական զինվորին: Բայց դուք ինչպե՞ս կճանաչեիք քրիստոնյային:

Կարդացե՛ք Հովհաննես 13.35-ը: Ըստ Հիսուսի խոսքերի՝ ի՞նչ հատուկ ձևով կարելի է ճանաչել Նրա հետևորդներին: Գործնականում ինչպե՞ս է դա արտահայտվում: _____

_____

Հիսուսն ընդգծել է. եթե մենք սիրում ենք միմյանց, մարդիկ իմանում են, որ մենք Նրա աշակերտներն ենք: Ինչպե՞ս են նրանք իմանում այդ մասին: Նրանց կիսամոզի սերը գործողության մեջ: Հիսուսի և եղբայրակիցների հանդեպ սերը ցույց է տալիս մեր արձագանքը Աստծո կամքին, և, իր հերթին, վերաբերմունքը միմյանց հանդեպ: Ավելին, անհավատների հանդեպ ցուցաբերված սերն ու հոգատարությունը ցույց կտան նաև նրանց հանդեպ մեր վերաբերմունքը: Շատ ծնողներ նշում են, որ արդեն կյանքի վաղ տարիքից երեխաներն ինչ-որ ներքին «ստի դետեկտոր» են զարգացնում: Այդ պատճառով մենք պետք է հասկանանք, որ շատ մարդիկ, ում հետ մենք շփվում և ում վկայում ենք, նույնպես կարող են բավականաչափ ճշգրտորեն որոշել տարբերությունը ճշմարիտ հոգևոր փորձառության և կեղծ հոգևորության միջև:

Կարդացե՛ք Բ Կորնթացիս 3.2,3-ը: Պողոսն ի՞նչ է ասում այն մասին, որ Աստված ցանկանում է օգտագործել Իր ժողովրդին, որպեսզի նա ազդեցություն գործի շրջապատող մարդկանց կյանքի վրա: _____

_____

Մենք չպետք է թերագնահատենք ինչպես կանխամտածված, այնպես էլ այն ակամա ազդեցությունը, որ մենք գործում ենք մեզ շրջապատող մարդկանց վրա: Քրիստոնեական կյանքը նման է Հիսուս Քրիստոսի կողմից գրված և այս աշխարհին հասցեագրված նամակի: Աստվածային շնորհով նորոգված սիրտը կհայտնի Ավետարանի զորությունը, որը կարող է վերափոխել կյանքը և այդպիսով վկայել Տիրոջ մասին:

Ի՞նչ ազդեցություն են ձեզ վրա թողնում մարդիկ, ում գործերը չեն տարբերվում նրանց խոսքերից: Ի՞նչ ազդեցություն են ձեզ վրա թողնում մարդիկ, ովքեր ասում են մի բան, բայց անում են մեկ այլ բան: Դուք ինչպե՞ս կարող եք միշտ հիշել, որ ձեր արարքներն այսպես թե այնպես ազդում են շրջապատի մարդկանց վրա:

Երկուշաբթի *ապրիլի 23*

Կարեկցելով մարդկանց

Ամեն օր մենք թռուցիկ կերպով հանդիպում ենք մեզ անծանոթ տարբեր մարդկանց: Մենք փողոցում անցնում ենք նրանց կողքով, նրանց կողքին նստում ենք կանգառում կամ միասին հերթ ենք կանգնում: Երբեմն, անցնելով կողքով, մենք անգամ նկատում ենք նրանց ներկայությունը թեթևակի գլխով անելով կամ հոնքը բարձրացնելով: Թեև մենք երբեք չենք կարողանա անձամբ ծանոթանալ մեզ հանդիպող բոլոր մարդկանց հետ, Աստված ցանկանում է, որ նրանք բոլորն իրենց կյանքում ընդունեն Իրեն: Մի ժամանակ ինչ-որ մեկի համար մենք կարող ենք դառնալ այդ մարդու փրկության վերաբերյալ Աստծո ծրագրի մի մասը:

Կարդացե՛ք Մատթեոս 9.36-38-ը: Այստեղ պատմվում է այն մասին, որ Հիսուսը որոշակի հանգամանքներում մարդկանց հանդեպ կարեկցանք է դրսևորել: Սակայն մարդկանց հանդեպ Նրա զգացմունքները չէին սահմանափակվում միայն նման իրավիճակներով: Ի՞նչ է ասել Հիսուսը, և այդ խոսքերն ինչպե՞ս կարելի է կիրառել ձեր մասնագիտական ծառայության վերաբերյալ:

Մարդիկ, ում այն ժամանակ տեսել է Հիսուսը, թշվառ վիճակում էին: Նրանք այնքան ճնշված էին, որ կորցրել էին իրենց կրոնական փորձառության վերջին փշրանքները: Նրանք, ում Աստված հանձնարարեց հոգ տանել Իր ժողովրդի հոգևոր բարօրության մասին, անտեսել էին իրենց պարտականությունները: Որպես հետևանք՝ մարդիկ ցրված էին և հուսահատության մեջ էին ընկել: Հիսուսը կարեկցում էր, քանի որ գիտեր, որ նրանց հոգևոր հովիվ է անհրաժեշտ:

Այն բազմաթիվ մարդկանցից, ում հետ մենք առնչվում ենք ամեն օր, նվիրված են Հիսուս Քրիստոսին, սակայն անհամեմատ ավելի շատ են նրանք, ովքեր հուսահատ են և բարի Հովվի կարիքն ունեն: Նրանց

անհրաժեշտ է բերել Քրիստոսի մոտ: Հիսուսը, Նրա աշակերտները և էլի մի քանի հետևորդներ մասնակցում էին ավետարանչական ծառայությանը, բայց բերքի հասնելուն զուգընթաց աճում էր նաև մեծաթիվ աշխատողների կարիքը: Թեև Հիսուսի հրավերը՝ աղոթել մեծաթիվ մշակների մասին, կարելի է հասկանալ որպես ավետարանչական դաշտերը գնալու կոչ, այն նաև ցույց է տալիս, որ Աստված լրացուցիչ աշխատողների կարիք ունի, և Նա կլրացնի այդ կարիքը: Եկեղեցիների մեծ մասը շրջապատված է այնպիսի հսկայական ավետարանչական դաշտերով, որ այնքան էլ խելամիտ չէր լինի ողջ աշխատանքը դնել միայն եկեղեցու միայն մի քանի անդամների վրա: Կարեկցելով մեր շուրջն ապրող մարդկանց՝ մենք կրկին զգում ենք այն մասին աղոթելու կարիքը, որ հունձքի Տերն աշխատողներ ուղարկի և, հնարավոր է, մեր աղոթքին ի պատասխան գիտակցենք մեր ներուժը՝ որպես Տիրոջ համար աշխատողներ: Կենտրոնանալով ավետարանման և ավետարանչության վրա՝ կարևոր է կանոնավորապես ուշադրություն դարձնել մեր համայնքի հնարավոր բերքին: Մեր շուրջն ապրող մարդիկ, որոնցից շատերն արդեն փնտրում են Աստծուն, անձամբ զգում են բարերար ազդեցությունը մեր կողմից ցուցաբերվող կարեկցանքի շնորհիվ:

Քննարկե՛ք «կարեկցել» բառի նշանակությունը: Ձեզ ի՞նչ են սովորեցրել ձեր սեփական տառապանքները, կարեկցանքի հանդեպ սեփական կարիքը: Դուք ինչպե՞ս կարող եք սովորել ավելի շատ կարեկցանք դրսևորել ձեզ շրջապատող մարդկանց հանդեպ:

Երեքշաբթի ***ապրիլի 24***

Նրանց տեղում լինելով

Կարևոր է ուշադրություն դարձնել հետևյալին. մի՛ ձգտեք մարդկանց տալ այն, ինչը, ինչպես մեզ թվում է, անհրաժեշտ է նրանց, այլ ջանացե՛ք հասկանալ, թե նրանք ինչն են համարում կարևոր և առաջնային: Ի՞նչն է նրանց անհանգստացնում: Ի՞նչ են ցանկանում իրենք իրենց:

Կարդացե՛ք Ա Կորնթացիս 9.20-22-ը: Այդ համարներն ի՞նչ են ասում մեզ տարբեր մարդկանց հանդեպ Պողոսի մոտեցման և նրանց կարիքների ու հոգսերի մեջ ներթափանցելու ցանկության մասին: Դա ինչպե՞ս կարող է օգնել մեզ մեր շրջապատող մարդկանց ավետարանելու հարցում: (Տե՛ս նաև Եբրայեցիս 4.15): _____

Փոխզիջում չթույլատրելով սկզբունքային հարցերում՝ Պողոսը պատրաստ էր մեկնել ուր ասես և անել ամեն հնարավորը՝ մարդկանց համոզելու ավետարանչական ճշմարտության մեջ: Այլ խոսքերով՝ նա ինքն իրեն դնում էր նրանց տեղը, որպեսզի ավելի լավ հասկանա նրանց և ավելի մատչելի պատմի Հիսուս Քրիստոսի մասին: Մենք հաճախ փորձում ենք մարդկանց տալ այն, ինչը, մեր կարծիքով, անհրաժեշտ է նրանց: Սակայն նախ մենք պետք է որոշենք, թե նրանք իրենք ինչն են իրենց համար անհրաժեշտ համարում: Իրեն ուրիշների տեղը դնել՝ նշանակում է փորձել հասկանալ կյանքը նրանց տեսանկյունից՝ իր բոլոր բարդություններով և խնդիրներով, հասկանալ նրանց ուրախությունները ու վշտերը: Այլ կերպ ասած՝ հանդիպել նրանց այնտեղ, որտեղ նրանք գտնվում են: Հենց դա էր անում Հիսուսը: Նրա երկրային կյանքն անցնում էր նրանց հետ, ում Նա եկել էր փրկելու: Փրկիչը կարող էր հասկանալ մեր ցավերն ու ապրումները, քանի որ Նա Ինքն անցել էր այդ ամենի միջով: Նա ապրել է մեծագույն հիասթափություններ, տարել է կեղծ մեղադրանքներ, մերժում ու անարդարացի պատիժ: Նա եղել է «Աստված մեզ հետ»՝ այդ բառի բուն իմաստով՝ մտնելով մեր կյանքի մեջ:

Ավելին, դառնալով մեզանից մեկը՝ Հիսուսը կարող է մարդկանց հանդիպել այնտեղ, որտեղ նրանք գտնվում են: Կարդալով ավետարանյան պատումը՝ մենք հայտնաբերում ենք, որ Տերն ավետարանչության և վկայության տարբեր մեթոդներ էր օգտագործում: Նա շփվում էր մարդկանց հետ՝ ելնելով նրանց կյանքի իրավիճակներից: Հակոբի ջրհորի մոտ հանդիպելով կնոջը՝ Փրկիչը խոսում էր կյանքի ջրի մասին: Գյուղացիներին ու ագարակատերերին Նա պատմում էր սերմեր ցանելու, բերքը հավաքելու և եղանակի մասին: Ձկնորսներին պատմում էր ձկան, ուռկանների և փոթորկի մասին: Հիսուսը հիանալիորեն ներկայացնում էր խոշոր հոգևոր ճշմարտությունները՝ ելնելով առօրյա կենսական իրավիճակներից, և Նրա ունկնդիրներն իմանում էին կյանքի ջրի և ավետարանական սերմեր աճեցնելու անհրաժեշտության մասին: Նրանցից շատերը անգամ դարձան մարդկանց որսորդներ:

Չորեքշաբթի ***ապրիլի 25***

Սրտաբացությունը՝ որպես կենսակերպ

Գոյություն ունի մի արտահայտություն, որը մենք հաճախ օգտագործում ենք ավետարանման մասին խոսելիս: Այն մոտավորապես

հետևյալ կերպ է հնչում՝ «Մարդկանց չի հետաքրքրում, թե որքան գիտենք մենք, քանի դեռ նրանք չգիտեն, թե որքանով են իրենք մեզ պետք»: Բանն այն է, որ մենք կարող ենք սովորեցնել և քարոզել ամեն ինչի մասին, ինչը մեզ կարևոր է թվում, սակայն, եթե մարդիկ իրենց չհասկացված, չսիրված և մերժված են զգում, մեր վկայությունը հսկայական դժվարությունների կհանդիպի՝ անկախ մեր պերճախոսությունից կամ ծրագրի խելամիտ և հետևողական շարադրումից: Դա տանում է սրտաբացության պարզ գաղափարին: Սրտաբացությունը ենթադրում է ընդունում, բարյացակամություն, բացսրտություն, հոգատարություն, առատաձեռնություն և ընկերասիրություն: Այդպիսի որակներ է Աստված ցանկանում տեսնել քրիստոնյաների՝ միմյանց հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև նրանց հետ հարաբերություններում, ում նրանք ցանկանում են բերել Տիրոջ մոտ:

Մարկոս 5.1-19-ում կարդացե՛ք դիվահարի մասին պատմությունը: Հիսուսի խոսքերն ինչպե՞ս են ընդգծում, որ մարդիկ առավել հաճույքով կընդունեն բարեկամների, քան կողմնակի մարդկանց վկայությունը: Մենք ինչպե՞ս կարող ենք այդ սկզբունքը կիրառել մեր անձնական վկայության և ծառայության մեջ: _____

_____

_____

_____

Հիսուսը կարող էր այդ մարդուն ուղարկել իր հայրենի քաղաքը և պատվիրել նրան՝ բոլորին պատմել իր ապաքինման մասին: Սակայն այն փաստը, որ Հիսուսը նրան ուղարկեց անմիջապես «յուրայիններին» մոտ, ընդգծում է ճշմարտությունն այն մասին, որ այն մարդիկ, ում հետ մենք արդեն փոխհարաբերություններ ենք կառուցել, առավել ընկալունակ են այն լուրի նկատմամբ, որով մենք ցանկանում ենք կիսվել նրանց հետ Հիսուսի սիրո, Նրա ողորմության և փրկության մասին լուրով: Մեր բարեկամներն այդ ցնցող լուրով կկիսվեն իրենց մտերիմների հետ, և այդպես Ավետարանի լուրը կտարածվի: Այս գործընթացի կարևոր բաղադրիչն է հանդիսանում այն, որ մենք բարեկամներ ունենք ոչ քրիստոնյաների շրջանում: Քանի որ շատերն աշխատում են աշխարհիկ կառուցվածքներում, նրանք, բնականաբար, շատ ծանոթներ ունեն, բայց ծանոթները դեռևս բարեկամներ չեն: Սակայն ծանոթները կարող են բարեկամներ դառնալ այսպես կոչված ավետարանյան սրտաբացության կամ հյուրընկալության շնորհիվ, ինչը, իր հերթին, կյանքի արդյունք է, որն աչքի է ընկնում հյուրասիրությամբ: Այլ խոսքերով՝ ավետարանյան հյուրընկալությունն առիթից

առիթ հյուրընկալությունը չէ, այլ կենսակեպ (տե՛ս նաև Ղուկաս 14.12-14):

Ինչպե՞ս դուք կարող եք առավել հյուրասեր լինել շրջապատողների նկատմամբ: Դուք ինչպե՞ս կարող եք սովորել առավել զոհաբերող և անշահախնդիր լինել՝ պատասխանելով նրանց կարիքներին, ում ձգտում եք բերել փրկության:

Հինգշաբթի ***ապրիլի 26***

Ընդլայնելով բարեկամների շրջանակը

Խիստ բացառիկ դեպքերում ծարավ հոգին կգնա քրիստոնյայի մոտ և կհարցնի. «Ես ի՞նչ պետք է անեմ, որ փրկվեմ»: Ամենից հաճախ քրիստանյաներն իրենք են ստիպված լինում գնալ կորած գառին փնտրելու: Ոմանք համարում են, որ եկեղեցին հիշեցնում է ամրոց, որից մի քանի մարդ արշավի են ելնում՝ մարդկանց դարձի բերելու նպատակով, և հետո նրանց նախազգուշացնում են՝ հեռու մնալ այն աշխարհից, որից նրանք փրկվել են: Կարևոր չէ, թե իրականում այդպե՞ս է դա, թե՞ մեզ է այդպես թվում: Խնդիրն այն է, որ եկեղեցու շատ անդամներ եկեղեցուց դուրս համարյա չունեն քիչ թե շատ նշանակալի փոխհարաբերություններ: Թեև մեզ համար կարևոր է աշխարհիկ ազդեցությունից խուսափելը, սակայն նման մեկուսացումը մեզ զրկում է մարդկանց բարի լուրը տանելու հնարավորությունից:

Ուշադիր կարդացե՛ք Հովհաննես 17.11-19-ը: Այս համարներն ի՞նչ են ասում աշխարհում քրիստոնյայի տեղի մասին: (Տե՛ս նաև Կողոսացիս 4.2-6): _____

_____

_____

_____

Այս համարներից մենք կարող ենք Հիսուսի աշակերտների և աշխարհի վերաբերյալ պարզել հետևյալ փաստերը.

– նրանք աշխարհում են (հմ. 11),
– նրանք աշխարհից չեն (հմ. 14, 16),
– նրանք դեռևս չպետք է վերցվեն աշխարհից (հմ. 15),
– Հիսուսը նրանց ուղարկել է աշխարհ (հմ. 18):

Մենք բոլորս ծնվում ենք այս աշխարհում ապրելու համար: Եվ քանի դեռ մենք աշխարհում ենք, Աստված մեզ համար աշխատանք ունի, որն անհրաժեշտ է կատարել այստեղ: Ինչպես և Իր առաջին

աշակերտներին, Հիսուսը մեզ ուղարկել է աշխարհ, որ մենք պատմենք Նրա մասին և փրկության խոստման մասին, որը Նա առաջարկում է ողջ մարդկությանը: Մենք բոլորս պետք է նպատակասլաց կերպով ընդլայնենք մեր ավետարանչական դաշտը: Հնարավոր է, որ մեզ անհրաժեշտ է ինչ-որ բան փոխել մեր կյանքում, որպեսզի ավելի մոտիկից ծանոթանանք ոչ քրիստոնյաների հետ: Դա չի նշանակում, որ մենք պետք է զոհաբերենք մեր սկզբունքները, համոզմունքները և արժեքները: Դա նշանակում է, որ մենք հնարավորություն ենք որոնում՝ շփվելու մարդկանց հետ, բարեկամանալու և ժամանակի ընթացքում նրանց բերելու ճշմարտությանը: Հաճախ մենք առավելություն ենք տալիս հրավերներն առաքելուն, որոնցով մարդկանց հրավիրում ենք գալ մեզ մոտ: Բայց չէ՞ որ Հիսուսը մեզ հրամայել է գնալ նրանց մոտ: Այդ պատճառով մեզ անհրաժեշտ է հարցնել ինքներս մեզ՝ մենք չափից ավելի շատ չե՞նք փակվել աշխարհի հանդեպ՝ կորցնելով արդյունավետորեն վկայելու հնարավորությունը:

Նայե՛ք ինքներդ ձեզ. հակված չե՞ք դուք չափազանց ինքնամեկուսացման, աշխարհից հեռացման: Իսկ, կարող է պատահել, ձեզ, ընդհակառակը, հարմարավե՞տ է այնտեղ: Դուք ինչպե՞ս կարող եք սովորել լինել աշխարհում՝ վկայելու Քրիստոսի մասին, և միևնույն ժամանակ լինել «ոչ այս աշխարհից»:

Ուրբաթ ***ապրիլի 27***

Հետագա ուսումնասիրության համար

Վերլուծե՛ք, թե որտեղ և ինչպես է ձեր ծառայությունը համապատասխանում եկեղեցու ընդհանուր ծրագրերին:

Այն ժամանակ, երբ եկեղեցու բաժինների մեծ մասը կարող են ծառայության լավ պլանավորված ծրագրեր ունենալ և բավականաչափ զբաղված լինել, մեծ հավանականություն կա, որ բաժինների մասնակիցները կարող են գործնականում ոչինչ չիմանալ այն մասին, թե ինչ է տեղի ունենում եկեղեցու կյանքի մյուս ոլորտներում: Ավելին, եկեղեցում կարող է անգամ գոյություն չունենալ ընդհանուր ավետարանչական ծրագիր, որի մասին կիմանային բոլոր բաժինները և որին կմասնակցեին: Հանուն փոխադարձ քաջալերանքի, աջակցության և արդյունավետ գնահատականի՝ լավ կլիներ, որ ձեր ավետարանչական ծառայությունը հանդիսանար եկեղեցու ընդհանուր ռազմավարության մի մասը: Ստորև բերված խորհուրդները կօգնեն ձեզ՝ հասնել դրան:

Հանդիպե՛ք ձեր հովվին, երեցներին կամ ավետարանչական բաժնի ղեկավարներին, որպեսզի ավելի լավ իմանաք առաջադրված ավետարանչական նպատակների ու ծրագրերի մասին, ինչպես նաև այն մասին, ինչ արվում է դրանց իրականացման համար: Հիշե՛ք, որ դուք փորձում եք որոշել, թե ինչպես ձեր ծառայությունը կարող է դառնալ եկեղեցու ընդհանուր ծրագրերի մի մասը, և ցանկանում եք օգնել հասնելու առաջադրված նպատակներին:

Դուք կարող եք հայտնաբերել, որ թեև ձեր եկեղեցին ակտիվորեն զբաղված է ավետարանչական ծառայությամբ, նրա ծրագրերն ու ռազմավարությունը փաստաթղթերում ամրագրված չեն: Եթե դա այդպես է, հանդիպման մասին պայմանավորվե՛ք հովվի, երեցների կամ ավետարանչական բաժնի ղեկավարների հետ և խնդրեք նրանց կիսվել իրենց ավետարանչական նպատակներով: Անհրաժեշտ նշումներ կատարեք զրույցի ընթացքում: Այդպիսով, դուք կառուցում եք ձեր ավետարանչական տեսիլի պատկերը, որը կօգնի նշել ավետարանման նպատակներն ու ուղիները:

Այս փուլում դուք կարող եք որոշում ընդունել՝ միանալ արդեն գործող ավետարանչական ծառայությանը: Սակայն եթե ձեր ընտրած ծառայությունը ինչ-որ նոր բան է վկայության և ավետարանչության մեջ, դուք ստիպված կլինեք մարդկանց մի ոչ մեծ խումբ հավաքել, ովքեր կկիսեն ձեր տեսիլը: Ամրագրե՛ք ձեր ավետարանչական նպատակներն ու ռազմավարությունները:

Հարցեր քննարկման համար

1. «Շատ հաճախ ամբիոնից քարոզվող ճշմարտության ազդեցությանը հակասում է իրենց դրա պաշտպանները համարող մարդկանց կյանքի ազդեցությունը» (Է. Ուայթ, Վկայություններ եկեղեցու համար, հտ. 9, էջ 21): Ի՞նչ վկայություն է բացահայտվում ձեր կյանքում: Համապատասխանո՞ւմ է այն ձեր քարոզին:
2. Խորհե՛ք ընդհանուր առմամբ ձեր համայնքի մասին: Ինչպե՞ս է այն փոխհարաբերվում հասարակության հետ: Եթե վաղը ձեր եկեղեցին անհետանար, ինչպե՞ս դա կանդրադառնար հասարակության վրա: Ինչ-որ բան փոխվո՞ւմ է դրա գոյության արդյունքում:

ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՎԵՏԱՐԱՆՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Մատթեոս 25.35-40, Ա Կորնթացիս 3.1-3, Ա Պետրոս 2.2, Հովհաննես 6.54-66, Ղուկաս 8.4-15:

Հիշելու համարը.

«Կաթ խմեցրի ձեզ, և ոչ թե կերակուր, որովհետև պակավին չէիք կարող, և հիմա էլ չեք կարող» (Ա Կորնթացիս 3.2):

Հիմնական միտքը.

Ցանկացած ավետարանչության և վկայության մեջ ամենից առաջ անհրաժեշտ է բացահայտել ավետարանական պարզ ճշմարտությունները:

Հետևողական ավետարանչությունն իրենից ներկայացնում է ռազմավարություն, որի համաձայն՝ մարդիկ եկեղեցական ծրագիրն անցնում են մեկը մյուսի հետևից: Միևնույն ժամանակ, ծրագրերի թեմաները պետք է դասավորված լինեն ճիշտ հաջորդականությամբ: Դրան պետք է շատ լրջորեն մոտենալ, այլապես կարելի է ավելի շատ վնաս պատճառել, քան օգուտ տալ: Մեր հիշելու համարը ցույց է տալիս, որ Պողոսը հասկանում էր այն փաստը, որ չափից ավելի ջանքեր գործադրելով՝ հնարավոր է ոչնչացնել այն ամենը, ինչ արդեն արվել էր: Մենք կարող ենք այնքան բարդ նյութ մատուցել, այն էլ՝ սխալ հաջորդականությամբ, որ ունկնդիրը կա՛մ «շնչահեղձ կլինի» այդ ողջ բազմության մեջ՝ ի վիճակի չլինելով ընդգրկել նշանակության ողջ խորությունը, կա՛մ էլ կկորչի սովորածը սեփական կյանքում կիրառելու նրա ցանկությունը: Այդ պատճառով, ինչպես նորածնի սնուցումն սկսվում է կաթից, և աստիճանաբար ավելացվում է առավել պինդ սնունդը, այնպես էլ Քրիստոսում նորածինները պետք է այնպիսի հոգևոր սնունդ ստանան, որը նրանց զարգացող հոգևոր ըմբռնումը կարող է ընկալել: Այս շաբաթ մենք կհետազոտենք, թե ինչպես են տրամախաչվում ավետարանական ռազմավարությունն ու ծրագրերը, ինչպես նաև՝ ինչպես են դրանք մեկ տարվա ընթացքում սատարում և լրացնում իրար:

Հետևողականությունն ավետարանչության մեջ և պահանջմունքների որոշումը

Ինչպես արդեն նշվել է, անձնական և հասարակական պահանջմունքների ուսումնասիրությունը և որոշումը պետք է ազդի մարդկանց հանդեպ մեր մոտեցման վրա, ինչպես նաև այն ծրագրերի ու ծառայությունների վրա, որոնք մենք կատարում ենք անմիջականորեն նրանց համար: Հասկանալով մարդկանց առօրյա պահանջմունքները՝ մենք կարող ենք նախատեսել մի շարք ծրագրեր, որոնք ուղղված են ինչպես առանձին մարդու, այնպես էլ՝ ողջ հասարակության հիմնական կարիքների բավարարմանը:

Կարդացե՛ք Ղուկաս 9.11-ը: Այս համարն ի՞նչ է ասում մարդկանց ինչպես ֆիզիկապես, այնպես էլ հոգևորապես բժշկելու Հիսուսի ցանկության մասին: Մենք ինչպե՞ս կարող ենք այդ սկզբունքը կիրառել նրանց նկատմամբ, ում փորձում ենք հասցնել ճշմարտությունը: _____

_____

_____

Իհարկե, Հիսուսի մոտ եկողներից շատերը առաջին հերթին շահագրգռված էին ֆիզիկական տառապանքներից ազատելու Նրա ընդունակությամբ: Հիսուսը բժշկում էր նրանց, բայց նաև ուշադրություն էր դարձնում այն կարիքին, որի մասին, հնարավոր է, ոչ բոլորն էին կռահում: Դա հոգևոր ապաքինման կարիքն է:

Թեև Աստծո ժողովուրդն այսօր արձագանքում է մարդկանց անձնական և հասարակական կարիքներին, նրան անհրաժեշտ է հետևել Հիսուսի օրինակին և օգնել շրջապատի մարդկանց ՝ նրանց ուշադրությունը հրավիրելով հոգևոր հարցերի վրա:

Կարդացե՛ք Մատթեոս 25.35-40-ը: Ի՞նչ լուր է բովանդակվում բերված համարներում: Որքանո՞վ լուրջ ենք մենք ընկալում այդ բառերը, թե՞ դրանց մեջ սոսկ այլաբանություն ենք տեսնում: Եթե մենք իսկապես հավատայինք այդ խոսքերին, որքանո՞վ այլ կերպ կվարվեինք: _____

_____

_____

Ցանկացած ծառայություն նրանց, ում սիրում է Հիսուսը և ում համար տվել է Իր կյանքը, ծառայություն է Իրեն՝ Հիսուսին: Վերը բերված

հատվածը ցույց է տալիս, թե որքանով սերտորեն է Փրկիչը կապված Իր արարչագործության հետ: Երբ Նրա արարածը տառապում է, Նա անհանգիստ է և խորապես կարեկցում է տառապողին: Նույն կերպ պետք է վարվենք նաև մենք: Մատթեոս 25.35-40 հատվածը ցույց է տալիս, որ առօրեական պահանջմունքների լուծմանը մասնակցությունը պարտադիր չէ, որ ներգրավված լինի որոշակի եկեղեցական ռազմավարության մեջ: Իմանալով մարդու կարիքի մասին՝ մենք պետք է օգնենք՝ անկախ այն բանից, թե իր հետևողական ռազմավարության որ փուլում է եկեղեցին այժմ գտնվում: Այն ժամանակ, երբ ոմանք առաջ կշարժվեն ծրագրից ծրագիր՝ սեփական հոգևոր հետաքրքրությունների զարգացմանը զուգընթաց, ուրիշներին հոգևոր սնունդն անհրաժեշտ կլինի անմիջապես: Այդ դեպքում եկեղեցին կարիք չունի թողնել իր նախատեսած ծրագրերն ու միջոցառումները, բայց այն պետք է ի վիճակի լինել արձագանքել ցանկացած ծագող կարիքի: Դա հնարավոր կլինի ուսանված անձնակազմի մշտական և համարժեք միջոցների առկայության դեպքում:

Երեքշաբթի ***ապրիլի 30***

Կաթը և պինդ սնունդը

Համեմատե՛ք Ա Կորնթացիս 3.1-3 և Ա Պետրոս 2.2-ը: Ի՞նչ եք կարծում, հատկապես ի՞նչ էին ցանկանում ընդգծել Պողոսն ու Պետրոսը, երբ խոսում էին կաթի, պինդ սննդի ու աճի անհրաժեշտության մասին: Աստվածաբանական իմաստով դուք ի՞նչն եք համարում կաթ, ի՞նչը՝ պինդ կերակուր: _____

_____

_____

Ակնհայտ է, որ Կորնթոսի եկեղեցու անդամները Պողոսի կողմից իրենց համայնքի կազմակերպվելուց հետո շատ առաջ չէին գնացել հոգևոր զարգացման մեջ: Հետևաբար, երբ նա քարոզում էր նրանց, նրա լուրը հնչում էր որպես իրենց՝ Աստծուն նվիրվելու և հոգևորապես աճելու կոչ, որպեսզի նրանք կարողանային ընկալել Ավետարանի խորը ճշմարտությունները: Նրա այդ քարոզն ավելի շուտ ավետարանչական էր, քան ուսուցանող: Պողոսն առավել խորը թեմաներով չէր քարոզում այնքան ժամանակ, քանի դեռ մարդիկ բավականաչափ հասուն չէին դարձել հոգևոր իմաստով, որպեսզի կարողանային հասկանալ այդ ճշմարտությունները և արձագանքել դրանց: Այսօր շփվելով մարդկանց

հետ՝ մենք չպետք է մոռանանք Պողոսի ռազմավարության մասին: Մենք պետք է մարդկանց բերենք Քրիստոսի մոտ և միայն դրանից հետո ակնկալենք, որ նրանք կընդունեն Նրա Խոսքի խորը, կյանքը վերափոխող ճշմարտությունները: Երբ մենք խոսում ենք ավետարանական հետևողականության մասին, դա կարող է նշանակել ինչպես երկարատև ռազմավարություն, այնպես էլ՝ կարճատև ժամանակահատված: Եթե մարդիկ անցել են ծրագրերի պարբերաշրջանը և պատրաստ են արձագանքել Աստծո կոչին, նրանց կարելի է առաջարկել այցելել ավետարանչական հանդիպումների լրիվ շարքին կամ սկսել նրանց հետ դասերով ուսումնասիրել Աստվածաշունչը: Ինչ ծրագիր էլ դուք ընտրեք, սկզբունքը նույնն է մնում. նախ կաթը՝ ավետարանչական պարզ թեմաներ, որպեսզի շփում սկսվի), իսկ հետո՝ պինդ սնունդ (առավել խորը, քննող ճշմարտություններ, որոնք տանում են անսասան նվիրման):

Կարդացե՛ք Հովհաննես 16.12-ը: Ի՞նչ կարևոր սկզբունք ենք մենք գտնում տվյալ համարում: Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել կիրառել այդ սկզբունքը շրջապատի հետ մեր փոխհարաբերություններում: _____

_____

_____

Եկեղեցու նորադարձ անդամն այնքան ոգևորված էր իրեն բացված ճշմարտությամբ, որ ցանկանում էր բոլորին պատմել դրա մասին: Հաճախ առաջին խոսքը, որով նա ցանկանում էր կիսվել, դառնում էր «գազանի դրոշմի» թեման: Հնարավոր է, որ նա ղեկավարվում էր ամենաբարի մտադրություններով, բայց նրա օրինակով մենք կարող ենք տեսնել, թե որքան կարևոր է ճշմարտությունը հետևողականորեն դասավանդելը:

Աստվածաշնչյան ո՞ր ճշմարտություններն էին ձեզ համար հատկապես դժվար ընդունելի սկզբում: Ժամանակի ընթացքում դուք ինչպե՞ս կարողացաք հասկանալ դրանք: Դուք ի՞նչ եք սովորել այդ փորձից, ի՞նչն օգնեց ձեզ՝ առավել ուշադիր դառնալ ձեր ավետարանչական ծառայության մեջ:

Երեքշաբթի *Մայիսի 1*

Քննող ճշմարտություններ

Քննող ճշմարտությունն աստվածաշնչյան ուսմունք է, որը հաս-

կանալով՝ մարդը պետք է նշանակալի փոփոխություններ կատարի իր տեսակետների կամ ապրելակերպի մեջ: Որոշ քննող ճշմարտություններ, այնպիսիք, ինչպես շաբաթը պահելը կամ անմաքուր սննդից հրաժարվելն են, ազդում են ինչպես հայացքների, այնպես էլ կենսակերպի վրա: Դա ևս մեկ անգամ ընդգծում է անհրաժեշտությունը՝ մարդկանց տանել Քրիստոսին ընդունելուն, իսկ հետո արդեն համոզել նրանց ինչ-որ բան անել Նրա համար:

Հովհաննես 6.55-67 համարը հաղորդում է, որ որոշ մարդիկ հեռացան Հիսուսից, երբ բախվեցին քննող ճշմարտությանը: Ինչո՞ւ Հիսուսի հետևորդներից ոմանք ժամանակի ընթացքում լքեցին Նրան: Դրանում ի՞նչ դաս կա անձամբ մեզ համար: Ի՞նչ «փորձող ճշմարտություններ» կան, որոնք, հնարավոր է, մինչև այժմ էլ կանգնած են Հիսուսին ձեր լիակատար նվիրման ճանապարհին:_____

_____

_____

_____

Շատերը, դառնալով Հիսուսի առաջարկած սննդի վկաներն ու մասնակիցները, հետևում էին Նրան՝ կրկին սնունդ ստանալու համար: Իսկ երբ Հիսուսը փորձեց նրանց ուշադրությունը հրավիրել հոգևոր իրողությունների վրա՝ օգտագործելով Իր մարմնի ու արյան պատկերը, շատերը երես թեքեցին Նրանից: Դա տեղի ունեցավ ոչ թե այն պատճառով, որ նրանք չկարողացան հասկանալ միայն Քրիստոսի միջոցով փրկվելու մասին ճշմարտությունը, այլ նրանք պարզապես չցանկացած ընդունել այն: Դա փորձության ժամանակ էր, և երբ նրանց սեփական պատկերացումները չհամընկան այն բանի հետ, ինչ ասում էր Քրիստոսը, նրանք գերադասեցին հեռանալ:

Կարդացե՛ք Հովհաննես 14.15-ը: Ի՞նչ «քննող ճշմարտություն» է ներկայացված բերված համարում:

Սա մարտահրավեր է նրանց, ովքեր ասում են, թե սիրում են Հիսուսին, ինչը նրանցից պահանջում է լրջորեն վերաբերվել Նրան նվիրվելու հարցին: Վաղ թե ուշ կգա ժամանակը, երբ դավանվող հավատը կստուգվի գործելու կոչով: Իրականությունն այն է, որ ավետարանչության գործընթացի ցանկացած փուլում մարդիկ կարող են երես թեքել՝ բախվելով քննող ճշմարտություններին: Սակայն փորձը ցույց է տալիս, որ մարդիկ առավել հեշտությամբ ու դրականորեն են արձագանքում քննող ճշմարտությանը, եթե նրանք արդեն ջերմ փոխհարաբերություններ են ստեղծել Փրկչի հետ: Դա ևս մեկ անգամ հաս-

տատում է այն փաստը, որ ճիշտ հաջորդականությունը տանում է լավագույն արդյունքների:

Հիսուսը շատ բան էր ցանկանում պատմել Իր աշակերտներին, սակայն գիտեր, որ նրանք դեռ չեն հասկանա դա (տե՛ս Հովհաննես 16.12): Նրա խոստումն այն մասին, որ Սուրբ Հոգին կսովորեցնի նրանց ամեն տեսակ ճշմարտություն (Հովհաննես 16.13), տարածվում է նաև մեր ժամանակների վրա, ինչպես նաև՝ բոլոր նրանց վրա, ում մենք ձգտում ենք բերել Քրիստոսի մոտ:

Թեև մենք շնորհը ձրի ենք ստանում, այդ պարգևի ընդունումից բխող նվիրումը մեզ վրա երբեմն կարող է շատ թանկ նստել: Դուք ինչպե՞ս կարող եք օգնել այն մարդուն, ով չի համարձակվում այդպիսի գին վճարել: Դուք ի՞նչ իմացաք նվիրման գնի մասին: Դրանով կիսվե՛ք այն մարդու հետ, ով վերապրում է նույն փորձությունները:

Չորեքշաբթի ***մայիսի 2***

Չափելով հոգևոր աճը

Անցկացնելով Աստվածաշնչի ուսումնասիրության դասախոսություններ, սեմինարներ և դասընթացներ՝ մենք չենք կարող երաշխավորել, որ ազդեցություն ենք գործել դրանց ներկա եղած մարդկանց կյանքի վրա: Շատ մարդիկ ավետարանչական հանդիպումների բազում դասընթացներ են լսել, եղել են Հայտնության սեմինարներին, ուսումնասիրել աստվածաշնչյան դասընթացը, և, թեև ձեռք են բերել աստվածաշնչյան ճշմարտությունների մտավոր ըմբռնում, դա ամենևին չի նշանակում, որ նրանք սկսել են իրենց կյանքում կիրառել ներկայացված ճշմարտությունները:

Մենք ինչպե՞ս կարող ենք որոշել, որ մարդիկ, ում հետ զրուցում ենք, իրենց կյանքում զգում են ճշմարտության վերափոխող ազդեցությունը: Կարևոր մեթոդներից մեկը, որի օգնությամբ կարելի է որոշել հոգևոր աճի մակարդակը, հարցերի ու պատասխանների մեթոդն է: Հարցերի ու պատասխանների օգնությամբ կարելի է գնահատել մարդու կողմից հոգևոր հարցերի ըմբռնումը և նրա հոգևոր աճը: Լավ է բաց հարցեր տալ, որոնց հարկավոր է պատասխանել ավելի ծավալուն, ոչ թե ասել «այո» կամ «ոչ»:

Ահա մի քանի տիպային հարցեր:

Ի՞նչ եք կարծում, այս համարներն ի՞նչ են ասում մեզ այսօր: Դուք

աստվածաշնչյան ճշմարտությամբ ինչպե՞ս կկիսվեիք ձեր ընկերոջ հետ: Դուք ինչպե՞ս եք ընկալում Աստծո խոստումները ձեր վերաբերյալ: Ձեր կարծիքով, ձեր կյանքում ինչպիսի՞ փոփոխություններ պետք է տեղի ունենան շրջապատի անձանց նկատմամբ այն բանից հետո, ինչ դուք իմացաք: Այդ ճշմարտություններն ինչպե՞ս են ձեզ օգնում՝ ավելի շատ սիրել Հիսուսին: Այն ամենից, ինչ դուք իմացաք, ի՞նչը ձեզ վրա հատուկ տպավորություն թողեց: Ի՞նչն է ձեզ հատուկ հույս պարգևում: Ի՞նչն է ձեզ ամենից ավելի վախեցնում: Աստվածաշնչի ուսումնասիրությունը, մյուս ավետարանչական ծրագրերի հետ միասին, պետք է կազմակերպվի ճիշտ տրամաբանական հաջորդականությամբ: Այսինքն՝ ամենապարզ և հասկանալի թեմաներն առաջարկվում են սկզբում, առավել բարդերը՝ հետո, երբ Աստվածաշունչն ուսումնասիրող մարդու ըմբռնումն ընդլայնվում է: Յուրաքանչյուր դասից հետո կարևոր է մանրակրկիտ ընտրված հարցեր տալ՝ գնահատելու հոգևոր ըմբռնումն ու հոգևոր աճը:

Ուսումնասիրե՛ք հետևյալ համարները և խորհե՛ք, թե ինչո՞ւ Աստված, ում ամեն ինչ հայտնի է, այդպիսի հարցեր է տալիս: Ծննդոց 3.9,13, Մատթեոս 16.13-15, 22.41-46, Մարկոս 9.33, Ղուկաս 2.46: Դա ի՞նչ է ասում այն մասին, թե որքան կարևոր միջոց կարող են լինել հարցերը, որոնց օգնությամբ մարդիկ աճում են աստվածային շնորհի մեջ: _____

_____

_____

_____

Հինգշաբթի ***մայիսի 3***

Նախապատրաստություն հունձքին

Մարդուն նրա հոգևոր ճանապարհին ցուցաբերված աջակցությունը նման է բերքահավաքի նախապատրաստությանը: Ցանկացած այգեպան գիտի, որ կա որոշակի ժամանակ և որոշակի հաջորդական գործողություններ, որոնք անհրաժեշտ է կատարել ցանկալի բերք ստանալու համար: Մենք պետք է փորենք հողը, հեռացնենք մոլախոտերը, ցանենք սերմերը և ջրենք բանջարանոցը: Կարևոր է նաև բույսերի համար անհրաժեշտ շրջակա միջավայր ստեղծելը. օրինակ՝ մի բույսին անհրաժեշտ է ավելի շատ արևի լույս, մյուսին՝ ստվեր: Ավելին, բույսերն անհրաժեշտ է պաշտպանել թռչուններից և բանջարանոցային

վնասատուներից: Այլ խոսքերով՝ բանջարանոցի բույսերի համար անհրաժեշտ է հոգ տանել՝ սկսած սերմերից և վերջացրած հասուն պտղատու բույսով: Միևնույն գործընթացը տեղի է ունենում մարդկանց հետ՝ նրանց հոգևոր ճանապարհին: Այն սկսվում է մկրտությունից շատ առաջ և շարունակվում անգամ այն բանից հետո, երբ մարդն ուխտ է կնքում Աստծո հետ: Իդեալական տարբերակում մարդու համար անհրաժեշտ է հոգ տանել այնքան ժամանակ, մինչև որ նա ինքը կկարողանա հոգ տանել ուրիշների մասին: Այս ճշմարտությունը ևս մեկ անգամ ցույց է տալիս, թե որքան կարևոր է ծրագրել գործողությունների հաջորդականությունը, որն ապահովում է անհրաժեշտ ժամանակի ընտրությունը, նյութի ընտրությունը, ուսուցման համար ստեղծում է լավագույն, անվտանգ միջավայր:

Ղուկաս 8.4-15-ում կարդացե՛ք սերմնացանի առակը և Հիսուսի տված բացատրությունը: Ի՞նչ կոչ է մեզ անում այդ առակը՝ բարի հողի վրա ընկած սերմին հոգ տանելու վերաբերյալ՝ մինչև դրա հասունացումը: (Տե՛ս նաև Հովհաննես 16.7,8,13): _____

_____

_____

_____

Հիսուսի բացատրությունն առակի վերաբերյալ բացահայտում է որոշ հետաքրքրաշարժ փաստեր: 12-րդ համարում ասված է, որ որոշ մարդիկ սկսեցին հավատալ, սակայն սատանան նրանց շեղեց ճանապարհից նախքան նրանց հավատի ամրապնդվելը: 13-րդ համարը պատմում է նրանց մասին, ովքեր լուրն ուրախությամբ ընդունեցին: Որոշ ժամանակ նրանք հավատում էին, սակայն երբ վրա հասավ փորձությունը, նրանք այլ ճանապարհ ընտրեցին: 14-րդ համարը նկարագրում է մարդկանց մեկ այլ խումբ, ովքեր լսեցին լուրը, բայց այդպես էլ չկայացան որպես հասուն քրիստոնյաներ: Շատ մարդիկ ինչ-որ ժամանակ գալիս էին դեպի Հիսուսը և Նրա թագավորությունը, սակայն այդ ճանապարհի տարբեր հատվածներում ինչ-որ բան էր տեղի ունենում, որը խանգարում էր նրանց հոգևոր աճին ու առաջընթացին:

Լավ բերք հավաքելու համար բավական չէ պարզապես սերմերը ցանել: Եկեղեցու և յուրաքանչյուր առանձին քրիստոնյայի խնդիրն ավետարանչական սերմեր ցանելն է, իսկ հետո քայլ առ քայլ այդ սերմերը խնամելը, քանի դեռ դրանք վերջնականապես չեն հասունացել:

Առակի ո՞ր մասն է ամենից լավ փոխանցում ձեր հոգևոր փորձառությունը: Ի՞նչ որոշումներ դուք կարող եք ընդունել՝ ձեր իրավիճակը շտկելու համար:

Հետագա ուսումնասիրության համար

Նպատակային լսարանի որոնում ավետարանման համար:

Հիմա դուք արդեն հասկանում եք, որ ավետարանչական ռազմավարությունը, որին մենք հետևում ենք շաբաթ շաբաթի հետևից, եռամսյակից ավելի կպահանջի, որպեսզի հաշվի առնենք և իրականացնենք ամեն բան: Օրինակ, մենք չէինք ակնկալի, որ երրորդ դասում հիշատակված ավետարանչական հնարավորությունները կգտնվեն, կծրագրվեն և կանցկացվեն մեկ շաբաթվա ընթացքում: Սակայն քանի դեռ դուք մտորում եք, թե ինչ ուսուցում պետք է անցնել, և ինչպես է ձեր ծառայությունն ընդգրկվում եկեղեցու ընդհանուր ծրագրերի մեջ, կարևոր է նաև խորհել, թե որ տեսակի մարդկանց եք դուք ցանկանում ավետարանել:

Ահա մի քանի խորհուրդ, որոնք կօգնեն ձեզ.

1. Խորհրդակցե՛ք ձեր եկեղեցու հովվի, երեցների և ավետարանչական ծառայության պատասխանատուների հետ՝ ձեր ընտրած ավետարանչական ծրագրի և ավետարանման լսարանի մասին: Կանխավ ձեզ համար նպատակային լսարան ընտրելով՝ դուք կկարողանաք կենտրոնանալ գործընթացի բոլոր տեսանկյունների վրա: Օրինակ, մանկական ծրագրի համար տեղին կլինի գովազդել այն դպրոցներում և շրջաններում, որտեղ առավելապես երիտասարդ ընտանիքներ են ապրում: Այլ նպատակային լսարաններ կարող են իրենց մեջ ներառել թոշակառուներին, գործազուրկներին, ուսանողներին և այլն:
2. Նպատակային լսարանի ընտրությունը կօգնի ձեզ օգնականների, վայրի, ժամանակի և հետագա ռազմավարության ընտրության հարցում: Դա նաև կօգնի ձեզ ճիշտ գնահատել ձեր ծրագրի վերջնական արդյունքները, և դուք կանխավ կիմանաք, թե ինչի և ում համար պետք է աղոթեք:
3. Պարտադիր չէ նպատակային խումբը փնտրել եկեղեցու սահմաններից դուրս: Մտածե՛ք եկեղեցի այցելող, սակայն չմկրտված մարդկանց, չմկրտված երիտասարդների և նրանց մասին, ովքեր կանոնավոր կերպով այցելում են եկեղեցական ծրագրերին ու միջոցառումներին:

Հարցեր քննարկման համար

1. «Սրտում ընդունված մեկ ճշմարտությունը հող է նախապատրաստում մեկ այլ ճշմարտության համար» (Է. Ուայթ, Վկայություններ եկեղեցու համար, հտ.6, էջ 49): Ի՞նչ հաջորդականությամբ պետք է ներկայացվի ճշմարտությունը, որպեսզի առավելագույն ազդեցություն գործի մեր նպատակային լսարանների վրա: Ինչո՞ւ Յիսուս Քրիստոսի զոհը միշտ պետք է առաջին տեղը զբաղեցնի մեր ավետարանման մեջ:
2. «Քրիստոսն իր աստվածային սիրով դեպի Իրեն էր քաշում լսողների սրտերը, և նրանց կողմից Իր ասածն ընկալելու ընդունակ դառնալուն զուգընթաց՝ Նա նրանց առջև բացում էր Աստծո թագավորության մեծագույն ճշմարտությունները: Մենք նույնպես պետք է սովորենք մեր աշխատանքը հարմարեցնել մարդկանց տրամադրությանը, որպեսզի նրանք հասկանան մեզ» (Է. Ուայթ, Ավետարանչություն, 57): Մենք ինչպե՞ս կարող ենք դրսևորել մեր սերը նրանց հանդեպ, ում ասում ենք Աստծո խոսքի մասին: Ինչպե՞ս խուսափել մեր ունկնդիրներին չափից դուրս սիրաշահելու վտանգից:

ԱՆՁՆԱԿԱՆ ԱՎԵՏԱՐԱՆՉՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Գործք առաքելոց 4.13,14, Հովհաննես 1.37-50, Սաղմոս 139, Ա Պետրոս 3.1-15, Հովհաննես 4.37,38:

Հիշելու համարը.

«Դուք եք իմ վկաները, ասում է Տերը, և իմ ծառան, որին ես ընտրել եմ, որպեսզի գիտենաք և հավատաք ինձ, և հասկանաք, որ Ես եմ. ինձանից առաջ մի աստված չկազմվեց» (Եսայիա 43.10):

Հիմնական միտքը.

Փրկության վստահության ցնծությունն ունեցող քրիստոնյաները կցանկանան օգնել մյուս մարդկանց՝ վերապրել նույն ուրախությունը:

Թեև շատ մարդիկ Հիսուսի մասին բարի լուրը լսել են եկեղեցու ձեռնարկած ավետարանչական ծրագրերի միջոցով, կարևոր է հասկանալ, որ եկեղեցու յուրաքանչյուր անդամի անձնական ազդեցությունը մեծ նշանակություն ունի ընդհանուր եկեղեցական ծրագրի հաջողության համար: Վերջին տասնամյակների հետազոտությունները ցույց են տվել, որ ընկերները, ազգականները, հարևաններն ու ծանոթները Սուրբ Հոգու զորության շնորհիվ, առավել ազդեցիկ գործոններ են հանդիսացել առ Քրիստոս մարդկանց դարձի գալու գործում: Հետազոտությունները նաև ցույց են տվել, որ նորադարձների մոտ 83 տոկոսը, ովքեր հետագայում մնում են եկեղեցում, համարում են, որ դրա վրա նշանակալի ազդեցություն են գործել իրենց քրիստոնյա բարեկամները, ազգականները և ծանոթները: Մկրտությունն ընդունելուց առաջ որևէ ավետարանչական ծրագրի այցելած մարդկանց 64 տոկոսը հրավերն ստացել են իրենց լավ ծանոթ մարդկանցից:

Այս շաբաթ մենք ևս մեկ անգամ կվերլուծենք փոխազդեցության որոշ աստվածաշնչյան օրինակներ, կվերանայենք Հիսուսի հետ մեր փոխհարաբերությունները և շրջապատող մարդկանց վրա մեր գործած ազդեցությունը:

Իմ Աստված և ես

Հիսուսի հետ մեր անձնական փոխհարաբերությունները ուղղակի առնչություն ունեն Նրա մասին վկայության մեջ մեր հաջողության վրա: Այնքա՜ն հեշտ է վկայության և ավետարանչության մի քանի սկզբունք սովորել և մարտի նետվել՝ հուսացած սեփական ուժերին և իմաստությանը: Բայց մենք պետք է հիշենք. դա Նրա աշխատանքն է, և մենք այն կատարում ենք Աստծո զորությամբ: Մենք ուզում ենք պարզապես գիտելիքնե՞ր փոխանցել, թեկուզ և կարևոր, թե՞ ցանկանում ենք կենսականորեն կարևոր հոգևոր փոխհարաբերություններ կառուցել: Եվ ինչպե՞ս մենք կարող ենք ուրիշներին փոխանցել այն, ինչ մենք չունենք ինքներս:

Իհարկե՛, միշտ կարելի է օրինակներ բերել, երբ առ Հիսուս ուրիշների դարձի գալու համար Աստված օգտագործում էր անգամ թույլ հավատով մարդկանց, ովքեր գտնվում էին ուրացության սայթաքուն ճանապարհին: Օրինակ, մի քանի տարի առաջ մի մեծ քաղաքում մի երիտասարդ կին դարձավ Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցու անդամ: Նա իր կողմից անում էր ամեն հնարավորը, որպեսզի դեպի ճշմարտությունը դարձի բերի իր եղբորը: Մի քանի տարի անց նրա եղբայրն ընդունեց մկրտությունը, իսկ դրանից մի ամիս հետո կինը թողեց եկեղեցին և հրաժարվեց իր հավատից: Թեև այսպիսի դեպքեր էլ են լինում, սակայն անհերքելի ճշմարտություն է այն փաստը, որ որքան ավելի ամուր է Հիսուսի հետ մեր կապը, այնքան ավելի զորեղ կլինի մեր վկայությունը:

Կարդացե՛ք Գործք առաքելոց 4.13,14-ը: Այս համարներն ի՞նչ են հաղորդում Պետրոսի ու Հովհաննեսի և Հիսուսի միջև և ինչպե՞ս այդ փոխհարաբերությունները օգնեցին առաքյալներին իրենց ծառայության մեջ: Խորհեցե՛ք «ճանաչում էին նրանց, որ Հիսուսի հետ էին» բառերի իմաստի մասին: Ինչպե՞ս կարելի է բնութագրել այն մարդուն, ով «Հիսուսի հետ է»: _____

_____

_____

_____

_____

Աստծո խոսքում տրված դասը բավականին պարզ է: Մտորելով մեր սեփական ավետարանչական դաշտերի մասին, գնահատելով բերքի

հասունության աստիճանը և աշխատողների ահռելի կարիքը, մենք պետք է թույլ տանք Տիրոջը՝ մտերմիկ, սերտ փոխհարաբերություններ կառուցել մեզ հետ: Այդ փոխհարաբերությունները մեզ ուժ կտան, որն այլ կերպ մենք չենք ունենա:

Ինչպիսի՞ն են Տիրոջ հետ ձեր անձնական փոխհարաբերությունները: Ձեր ներկայությունը, խոսքը, մարդկանց հանդեպ վերաբերմունքն ինչպե՞ս են ներկայացնում Աստծո հետ ձեր փոխհարաբերությունները: Այս հարցերին պատասխանելիս ազնիվ եղեք ինքներդ ձեզ հետ:

Երկուշաբթի *մայիսի 7*

Իմ անձնական ավետարանչական դաշտը

Նայելով մարդկանց մեծ բազմությունը՝ Հիսուսը խղճահարություն զգաց նրանց հանդեպ (տե՛ս Մատթեոս 9.36): Մենք երբեմն մտածում ենք, որ Հիսուսը պարզապես տեսնում էր բազմությունը, բայց իրականում Նա տեսնում էր յուրաքանչյուրին առանձին: Մենք նույնպես պետք է հիշենք, որ այն բազմությունները, որոնց կողքով մենք ամեն օր անցնում ենք և որոնց մեջ ապրում ենք, բաղկացած են առանձին մարդկանցից: Մեր եկեղեցին կարող է բազմությունից մարդկանց հետ մտերմանալ միայն այն ժամանակ, երբ եկեղեցու անդամները անձնական մակարդակով փոխհարաբերվում են նրանց հետ, ովքեր ընկնում են նրանց ազդեցության ոլորտի մեջ:

Այն մարդիկ, ում հետ մենք այսպես թե այնպես շփվում ենք, իրականում հանդիսանում են մեր ավետարանչական դաշտը: Սկսած սեփական ընտանիքից՝ մենք կարող ենք ավետարանել ազգականներին, ընկերներին և ծանոթներին: Երբեմն որոշ ժամանակով մեր ազդեցության ոլորտում կարող են նաև կողմնակի մարդիկ հայտնվել և այդպիսով նույնպես դառնալ մեր ավետարանչական դաշտի մի մասը:

Կարդացե՛ք Հովհաննես 1.37-42-ը: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ Անդրեասն առաջին հերթին իր եղբորը հայտնեց, որ հանդիպել է Մեսիային:

Անդրեասը Հովհաննես Մկրտչի աշակերտն էր, և, քանի որ Հովհաննեսի ծառայությունը կայանում էր Մեսիայի ճանապարհը նախապատրաստելու մեջ, միանգամայն հասկանալի էր, որ որոշ աշակերտներ նրա մոտից անցան Հիսուսի մոտ: Հիսուսի հետ շփումն այնքան ոգևորեց Անդրեասին, որ նա իսկույն ևեթ գնաց որոնելու իր

ամենամերձավոր մարդուն՝ եղբորը, ում հետ Գալիլեայի ծովում ձուկ որսալով բազում երկար գիշերներ էր լուսացրել:

Կարդացե՛ք Հովհաննես 1.43-50-ը: Ինչի՞ մասին են պատմում այդ համարները: Ի՞նչ միջանձնային փոխհարաբերություններ են այստեղ պատկերված: Փիլիպոսն ինչպե՞ս պատասխանեց Նաթանայելի կասկածամտությանը: Մենք ի՞նչ դասեր կարող ենք քաղել այս պատմությունից, որոնք կօգնեն մեզ՝ հասկանալ անձնական վկայության մեխանիզմը: _____

_____

_____

Թվում է, թե այդ «սոցիալական կապի» շնորհիվ էր, որ Հիսուսին հետևելու լուրը ակնթարթորեն տարածվեց Կափառնայումի և Բեթսայիդայի գավառներում: Ուշադրություն դարձրե՛ք, որ Փիլիպոսը չէր վիճում, երբ Նաթանայելը կասկածեց, թե Մեսիան կարող էր գալ փոքրիկ աննշան գյուղից: Ի պատասխան Նաթանայելը լսեց մի պարզ հրավեր. «Ե՛կ և տե՛ս»:

Ձեր անմիջական շրջապատից դուք ո՞ւմ կարող էիք լավագույնս վկայել Քրիստոսի մասին: Դուք ի՞նչ ստիպված կլինեք զոհաբերել՝ նրանց համար լավագույն վկան դառնալու համար:

Երեքշաբթի ***Մայիսի 8***

Իմ հնարավորությունը

Երբ մեզ կոչ են անում մասնակցել ավետարանչական ծառայությանը, մենք իսկույն ցույց ենք տալիս այլ մարդկանց, ովքեր, մեր կարծիքով, առավել ընդունակ և օժտված են, քան մենք: Նրանք մեզ թվում են առավել վստահ և պատրաստված: Սակայն Աստվածաշունչը սովորեցնում է, որ Աստված փնտրում է ոչ միայն ամենահամապատասխան մարդկանց, այլ Նրան գլխավորապես անհրաժեշտ են մարդիկ, ովքեր ցանկանում են մասնակցել ծառայությանը՝ անկախ իրենց ընդունակություններից և տաղանդներից:

Դրա լավ օրինակ է Մովսեսին ուղղված Աստծո կոչը, ում հրամայվեց իսրայելի ժողովուրդը ազատագրել եգիպտական ստրկությունից: Մովսեսը բազմաթիվ պատճառներ էր տեսնում, որ դա կարող էր ինչ-որ մեկ ուրիշն անել (տե՛ս Ելից 3.11, 4.10): Մովսեսին թվում էր, թե իր բերած փաստարկները լիովին համոզիչ են՝ հրաժարվելու համար Աստծո հանձնարարած գործից:

Ավետարանչական գործունեությամբ զբաղվելու կոչին ի պատասխան՝ ժամանակակից քրիստոնյաները պատասխանում են Մովսեսի նման. «Ո՞վ եմ ես, որ այդպիսի գործ անեմ», «Իսկ եթե նրանք ինձ հարցե՞ր տան, որոնց ես չեմ կարող պատասխանել», «Ես չեմ կարող գեղեցիկ խոսել»: Մենք կարող ենք ժպտալ՝ հիշելով Մովսեսի պատմությունը, ով մտածում էր, թե Աստված պետք է վերանայի կադրերի ընտրության ռազմավարությունը: Աստված գիտեր, թե ինչ հնարավորություն ուներ Մովսեսը, և, չնայելով նրա վախերին ու ապրումներին, տեսնում էր, որ դա ամենահարմար մարդն է հատուկ հանձնարարության կատարման համար:

Մովսեսին ուղղված՝ Աստծո ժողովուրդը դուրս բերելու կոչը համոզում է մեզ այն բանում, որ Աստված մեզ գիտի անսահմանորեն ավելի լավ, քան մենք ինքներս ճանաչում ենք մեզ: Աստված չի կենտրոնանում մեր անցյալ անհաջողությունների վրա: Նա տեսնում է մեր հնարավորությունը: Յուրաքանչյուր քրիստոնյա հսկայական հնարավորություն ունի, որպեսզի իր նեղրումն ունենա Աստծո աշխատանքի մեջ:

Մյուս կողմից, մենք պետք է զգույշ լինենք՝ ինքնավստահորեն Աստծուց առաջ չվազելու համար: Թեև մենք իսկապես պետք է հետազոտենք մեր սրտերը՝ նպատակ ունենալով գիտակցել, թե ինչ հոգևոր վիճակում ենք մենք գտնվում, սակայն պետք է հասկանանք, որ մարդկային սիրտը կարող է չափազանց կանխակալ լինել ինքնագնահատման կապակցությամբ: Այդ պատճառով անհրաժեշտ է խնդրել Աստծուն՝ փորձել մեզ և ցույց տալ մեր իսկական վիճակը, որը ազդում է մեր հնարավորության վրա:

Կարդացե՛ք Սաղմոս 139-ը: Ինչո՞ւ է Դավիթը խնդրում Աստծուն՝ փորձել իր սիրտը: Դրանում ի՞նչ դաս կա մեզ համար՝ ոչ միայն վկայության, այլև առհասարակ մեր քրիստոնեական կյանքի համար: Մենք ի՞նչ կարող ենք քաղել այս սաղմոսից: Նրանում ի՞նչ մխիթարություն, հույս և քաջալերանք կա մեզ համար: Միևնույն ժամանակ, ի՞նչ է նրանում ասվում այն փոփոխությունների մասին, որոնք պետք է տեղի ունենան մեր կյանքում: _____

Չորեքշաբթի ***մայիսի 9***

Ազնիվ վկան

Իսկապե՞ս գործերը խոսքերից ավելի բարձր են խոսում: Այո՛, հենց այդպես է: Բայց եթե լուրը կարող է փոխանցվել գործերով, առանց

խոսքի, ապա, նշանակում է, ոչ պակաս զորեղ լուրը կարող է փոխանցվել նաև բացառապես բառերով: Սակայն էլ ավելի հզոր է այն լուրը, որը միավորում է միմյանց համահունչ գործերն ու խոսքերը: Ասել, թե սիրում ես Աստծուն, իսկ հետո վարվել այնպես, ասես թե չես սիրում՝ երկերեսանիություն է: Վատթարագույն վկայությունն է՝ երբ խոսքերն ու գործերը աններդաշնակ են:

Մեծ նշանակություն ունի ձեր կյանքի հետևողականությունը: Ձեր հազարատները և ընկերները կարող են չլսել, թե ինչ եք դուք իրենց ասում, սակայն նրանք անպայման կնկատեն, թե ձեր խոսքերը ներդաշնա՞կ են ձեր արարքների և ձեր կյանքի հետ:

Կարդացե՛ք Ա Պետրոս 3.1-15-ը: Այս համարներն ի՞նչ ես ասում քրիստոնեական կյանքի զորության և անհավատներին առ Քրիստոս դարձի բերելու նրա հնարավորության մասին: Պատկերացրե՛ք, թե ի՞նչ զորությամբ կուղեկցվեր մեր վկայությունը, եթե մենք ապրեինք այնպես, ինչպես մեզ ցուցված է այդ հատվածում: Մեր վկայության վերաբերյալ ի՞նչ հատուկ լուր կա 15-րդ համարում: (Տե՛ս նաև Մատթեոս 5.16): _____

_____

_____

_____

Պատկերացնենք, թե ինչ համարտություն կարող էր ծագել, երբ հեթանոս կինն ընդուներ Հիսուսին՝ որպես իր Փրկչի, իսկ նրա ամուսինը մնար հեթանոսության մեջ: Այդպիսի վիճակում գտնվելով՝ նա կարող էր վիճաբանել ու փնթփնթալ: Բայց Պետրոսը նրան առաջարկում է հավատարիմ լինել Աստծուն, շարունակել աղոթել և հուսալ, որ իր ազնվաբարո կյանքը անհավատ ամուսնուն կբերի Փրկչի մոտ: Այլ խոսքերով, օրեցօր նրա կատարած արարքները կարող են հզոր վկայություն դառնալ:

Մեր ճրագին թույլ տալով շողալ՝ մենք դրանով իսկ օգտագործում ենք բոլոր հնարավորությունները, որպեսզի օգնենք կործանվող տղամարդկանց և կանանց՝ գտնել Աստծո արքայություն տանող ճանապարհը: Մեզ շրջապատող մարդիկ պետք է ոչ թե պարզապես լսեն մեր բարի խոսքերը, նրանք պետք է տեսնեն նաև մեր բարի գործերը, քանի որ նրանք այդպես մեր միջոցով կտեսնեն Աստծո զորությունը: Իսկ Հոգին կդրդի նրանց՝ ընդունել մարդու կյանքում Աստծո ներկայության հնարավորությունը և տեսնել Նրա կողմից շռայլվող օրհնությունները: Մարդիկ պետք է համոզվեն, որ քրիստոնեությունը ոչ թե պարզապես անվանում է, այլ ոգեշնչող փոխհարաբերություններ, որոնք մենք վա-

յելում ենք: Օրինակների օգտագործումը ուսուցման կարևոր մեթոդ է, և քրիստոնյաները գիտակցաբար, թե անգիտակցորեն, այդպիսի օրինակ են ծառայում: Մենք մեր արարքներով և բնավորությամբ վկայում ենք նույնիսկ ավելին, քան խոսքերով կամ դավանանքով: Հնարավոր է, որ սա ահաբեկող հայտարարություն է, սակայն այն ճիշտ է:

Հինգշաբթի ***մայիսի 10***

Իմ ներդրումն ընդհանուր գործի մեջ

Այս շաբաթ մենք խոսում ենք անձնական ավետարանչական դաշտերի և ավետարանչության ու վկայությանն անձնական հնարավորությունների մասին: Բայց ոչ պակաս կարևոր է հասկանալ այս ճշմարտությունը. քանի որ եկեղեցին բաղկացած է առանձին անդամներից, յուրաքանչյուրի ջանքերը ներդրում են հանդիսանում եկեղեցու ընդհանուր ավետարանչության մեջ: Դուք ծանո՞թ եք իր ավետարանչական ծառայության մեջ ձեր համայնքի ռազմավարությանը: Հնարավոր է, որ ձեզ կհաջողվի ձեր ավետարանչական դաշտից մարդիկ հրավիրել՝ այցելելու ինչ-որ եկեղեցական ծրագրերի: Մյուս կողմից, ձեր եկեղեցու ավետարանչական ծառայության ղեկավարները գիտե՞ն, թե ինչ եք դուք անում ձեր ավետարանչական դաշտում: Նրանք կարող էին սատարել ձեզ աղոթքներով և անհրաժեշտ ռեսուրսներով:

Կարդացե՛ք Հովհաննես 4.37,38-ը: Մենք ի՞նչ քաջալերություն կարող ենք ստանալ Հիսուսի խոսքերից. «Ուրիշ է ցանողը, և ուրիշ՝ հնձողը»: Ինչի՞ մասին է Նա այստեղ խոսում, և այդ ճշմարտությունն ինչպե՞ս է արտացոլվել ձեր անձնական փորձում: _____

_____

_____

Միանգամայն հնարավոր է, որ տվյալ դեպքում Հիսուսը խոսում է Իր իսկ, Հովհաննես Մկրտչի և սամարացի կնոջ ցանած ավետարանչական սերմերի մասին: Աշակերտները դեռ պետք է քաղեին ուրիշների սերմածը, և իսկապես մոտենում էր ժամանակը, երբ ցանողներն ու հնձողները պիտի ուրախանայի միասին:

Երբ Հիսուսն ասաց. «Ուրիշ է ցանողը, ուրիշ՝ հնձողը», Նա ի նկատի չուներ, որ մենք կա՛մ ցանում ենք, կա՛մ հնձում: Թեև մեր եկեղեցիները, հնարավոր է, հիմնական շեշտը դնում են հնձողների վրա, ահա թե որն է ճշմարտությունը. որտեղ սերմող չի եղել, այնտեղ հնձողն անելիք չունի: Մենք բոլորս կոչված են սերմել և հնձել, և ցանկացած եկեղեցում

բազում տարբեր հնարավորություններ կան թե՛ մեկի, թե՛ մյուսի համար: Հնարավոր է, որ ձեր անձնական ավետարանչական դաշտում ձեր ցանքը կհավաքվի ընդհանուր եկեղեցական գործունեության արդյունքում: Կարող է լինել նաև այնպես, որ ուրիշների ցանած սերմերի պտուղները հենց դուք կհնձեք, երբ դուք կհայտնվեք նրանց ավետարանչական դաշտում:

Դատելով այն մասին, թե ինչպես է յուրաքանչյուրն առանձին մասնակցում ընդհանուր գործին (տե՛ս Ա Կորնթացիս 12.12-27), կարևոր է նկատել, որ հողագործությունը հիշեցնում է մեզ այն մասին, որ նախքան սերմերը ցանելը ինչ-որ մեկը հողը նախապատրաստում է առաջիկա ցանքի համար:

Անկասկած է, որ ցանքն ու հունձը հանդիսանում են գործընթացի մի մասը, որը շարունակվում է նաև այն բանից հետո, երբ մարդը միանում է եկեղեցուն: Հունձը չպետք է մնա դաշտերում, այն անհրաժեշտ է հավաքել ամբարներում:

Դուք ինչպե՞ս կարող եք առավել եռանդուն մասնակցություն ցուցաբերել ձեր եկեղեցու ցանքին և հունձին: Դուք նկատե՞լ եք, որ ծառայությունը ամրապնդում է ձեր սեփական հավատը: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ է այդպես տեղի ունենում:

Ուրբաթ ***մայիսի 11***

Հետագա ուսումնասիրության համար

Հոգևոր նախապատրաստությունը անձնական ծառայությանը:

Չժխտելով Աստվածաշնչի և ավետարանչության ու վկայության ստանդարտ մեթոդների իմացության նշանակությունը՝ մենք պետք է հիշենք նաև անձնական հոգևոր նախապատրաստության կարևորությունը: Անձնական հոգևոր աճի անքակտելի մասն է, անտարակույս, Սուրբ Հոգին, և, զգալու համար ավետարանչական ծառայության այդ զորությունը, մենք պետք է Նրան ներս թողնենք մեր կյանք:

Երբ քրիստոնյաները սկսում են ծառայել իրենց Աստծուն, նրանց առավել հստակ են բացահայտվում իրենց սեփական հոգևոր կարիքները: Այդ ժամանակ նրանք սկսում են նախանձախնդրորեն խնդրել ու ստանալ է՛լ ավելի շատ Սուրբ Հոգու զորություն՝ ծառայությունը շարունակելու համար:

Այստեղ ամենաանհրաժեշտը հանդիսանում է սեփական կամքն ամեն օր Աստծուն ենթարկելը, ամենօրյա պատրաստակամությունը՝

մահանալ սեփական անձի համար, ամենօրյա շփումը Նրա շնորհի հետ, ինչը մեզ պարգևված է Քրիստոսում և այն, ինչ Նա մեզ խնդրում է այդ պարգևին ի պատասխան:

Հարցեր քննարկման համար

1. Հոգիների փրկության վերաբերյալ Էլեն Ուայթը հետևյալ կարևոր խոսքերն է գրել. «Հաջողությունը կախված կլինի ոչ այնքան ձեր գիտելիքներից և սխրանքներից, որքան մարդկանց սիրտը տանող ճանապարհը գտնելու ձեր ընդունակությունից» (Ավետարանի ծառայողներ, 193): Ինչի՞ վրա է նա հատուկ ուշադրություն հրավիրում: Հաճա՞խ ենք մենք հանդիպում մարդկանց, ովքեր չեն ընդունում մեր լուրի օգտին խոսող ուժեղ, համոզիչ ապացույցները: Հաճա՞խ է մեր ուսմունքը, անկախ նրա աստվածաշնչյան կամ տրամաբանական հիմնավորվածությունից, անկախ նրանից, թե ինչքան է այն լավատեսական և խելամիտ, որ ոչ մի ազդեցությյուն չի թողնում փակ սրտով մարդու վրա: Այդ դեպքում որքա՞ն կարևոր է ապրել այն բանին համապատասխան, ինչ մենք քարոզում ենք, ոչ թե պարզապես դավանաբանություն քարոզել:
2. Ստորև բերված մեջբերման մասին խորհեցե՛ք շրջապատողներին ավետարանելու ձեր մեթոդների համատեքստում. «Շնորհաբեր լույսի վերջին ճառագայթները, ողորմության վերջին լուրը, որ պետք է տրվի աշխարհին, Նրա սիրո էության հայտնությունն է: Աստծո զավակները պետք է ցույց տան Նրա փառքը: Իրենց սեփական կյանքում և բնավորության մեջ նրանք պետք է հայտնեն, թո ինչ է Աստծո շնորհը կատարել իրենց համար» (Է. Ուայթ, Քրիստոսի առակները, 415, 416): Մենք ինչպե՞ս կարող ենք «Նրա փառքը ցույց տալ» մեր գործնական կյանքում: Վերջին 24 ժամվա ընթացքում դուք հաճա՞խ եք ձեր կյանքում ցույց տվել Նրա փառքը: Ձեր հավատի մասին վկայո՞ւմ է ձեր կենսակերպը: Ինչպե՞ս կարող է ձեր ողջ եկեղեցին «ցույց տալ Նրա փառքը»:

ՀԱՄԱՏԵՂ ԱՎԵՏԱՐԱՆՉՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Ժողովող 4.9-12, Սաղմոս 37, Փիլիպեցիս 1.5-18, Եփեսացիս 4.15,16, Կողոսացիս 1.28,29:

Հիշելու համարը.

«Եվ այն բաները, որ ինձանից լսեցիր շատ վկաներով, հանձնիր հավատարիմ մարդկանց, որ կարող լինեն ուրիշներին սովորեցնել» (Բ Տիմոթեոս 2.2):

Հիմնական միտքը.

Աստծո ճշմարտության տարածումը ոչ միայն ծառայողների խնդիրն է: Ճշմարտությունը պետք է հռչակեն բոլորը, ովքեր իրենց անվանում են Քրիստոսի աշակերտներ:

Ինչպես մենք արդեն նշել ենք, շատ կարևոր է, որ բոլոր քրիստոնյաները գիտակցեն իրենց Աստծո կողմից պարգևված հնարավորությունը: Սուրբ Գիրքը բազմիցս հիշատակում է այն քրիստոնյաներին, ովքեր օգտագործել են իրենց պարգևները՝ ավետարանչական աշխատանք կատարելով նշանակված ծառայողների հետ կողք կողքի:

Գործք առաքելոց 13.13 համարում Ղուկասն օգտագործում է «Պողոսը և նրա հետ լինողները» արտահայտությունը, որը բացահայտում է, որ Պողոս առաքյալը այն ավետարանչական խմբի ճանաչված առաջնորդն էր, որի մեջ մտնում էր և Բառնաբասը (հմ. 1): Ղուկասը հայտնում է, որ ժամանակին Պողոսն ու Բառնաբասը ավետարանչական աշխատանքը միասին էին կատարում (Գործք առաքելոց 13.50, 14.1):

Երբեմն դժվար է ներառվել եկեղեցական ավետարանչական նախագծերի մեջ, եթե համայնքում կարգավորված չէ օժտված մարդկանց որոնումը, ում կարելի էր ներքաշել աշխատանքի մեջ:

Անցյալ շաբաթ մենք խոսել ենք եկեղեցու շարքային անդամների անձնական ավետարանչական ծառայության մասին: Այս շաբաթ քննարկենք ժամանակակից եկեղեցական ռազմավարության և դրան եկեղեցու անդամների մասնակցության որոշ կողմերը:

Թո՛ղ ձախ և աջ ձեռքերը իմանան

Մարդկանց մեծամասնությունը եկեղեցում ինչ-որ բանով զբաղված են, մյուսները տարբեր պատճառներով համեմատաբար քիչ են անում: Ցավոք, մարդիկ չգիտեն, թե մեծ հաշվով ինչով է զբաղվում իրենց համայնքը և ինչպիսին են նրա ծրագրերը: Հետևաբար, նրանք չեն տեսնում, թե ինչպես նրանց մասնակցությունը այս կամ այն ծառայությանը կարող է նպաստել եկեղեցու ընդհանուր նպատակներին:

Կարդացե՛ք Ժողովող 4.9-12-ը: Սողոմոնն ի՞նչ է ասում համատեղ աշխատանքի մասին: Նրա խոսքերն ինչպե՞ս կարելի է կիրառել ձեր պարագաներում:

Այդ համարները նկարագրում են ցանկացած իրավիճակում փոխօգնության, աջակցության և հոգատարության առավելությունները: Այն, ինչ ճշմարիտ է երկու կամ երեք մարդու փոխհարաբերություններում, ճշմարիտ է նաև տեղական եկեղեցու վերաբերմամբ: Ժողովող 4.9-12-ում նկարագրված օրհնությունները իրացնելու համար մարդը պետք է իմանա, թե ինչով են զբաղվում իր աշխատակիցները: Եթե նա չգիտի, թե ինչ են անում և ծրագրում մյուսները, ինչպե՞ս նա կարող է իմանալ, թե երբ և ինչ կպահանջվի իրենից: Խորհելով այս պահերի շուրջ համայնքի վկայության և ավետարանչության համատեքստում, մենք ևս մեկ անգամ համոզվում ենք, որ եթե համայնքի անդամների մեծամասնությունը չգիտի, թե ինչով է համայնքը զբաղվում, նրանք չեն կարող հարկ եղած պահին սատարել նրան և անհրաժեշտ օգնություն ցուցաբերել: Տխուր է, բայց աջակցության բացակայությունից ավետարանչության և վկայության առաջավոր դիրքերում գտնվող մարդիկ երբեմն զգում են, որ ոչ ոք գործ չունի այդ կենսականորեն կարևոր ծառայության հետ: Իսկ խնդիրն այն է, որ մյուսները պարզապես չգիտեն տեղի ունեցողի մասին:

Ստորև բերված համարները պատմում են այն մարդկանց մասին, ովքեր իրեն ծառայությամբ սատարել են Ավետարանի գործին: Նրանց ծառայությունն ի՞նչ կերպ էր աջակցում եկեղեցու ողջ առաքելությանը: Գործք առաքելոց 16.14,15,33,34: _____

_____

_____

Այն, ինչ առաջին հայացքից թվում է եկեղեցական ռազմավարության հետ առնչություն չունեցող, վերջին հաշվով կարող է կենսակա-

նորեն անհրաժեշտ լինել վկայության և ավետարանչության ողջ գործընթացի համար: Ժամանածներին կացարան և սնունդ տրամադրող եղբայրներն ու քույրերը նույնքան կարևոր գործ են անում, որքան նրանք, ովքեր մարդկանց հրավիրում են ծրագրերին: Եկեղեցու շատ անդամներ ուրախությամբ աջակցություն կցուցաբերեն, եթե իմանան ծրագրի և դրա կարիքների մասին, ինչպես նաև՝ եթե համոզված լինեն, որ իրենց ներդրումը կդառնա ողջ եկեղեցական ծրագրի կարևոր մասը: Տվյալ համատեքստում աջ ձեռքը պետք է իմանա, թե ինչ է անում ձախը:

Մտածե՛ք համայնքի ավետարանչական գործունեության մասին: Ձեզ ի՞նչ է հայտնի ընդհանուր եկեղեցական նպատակների և ռազմավարությունների մասին: Դուք գիտե՞ք, թե ընթացիկ ավետարանչական ծրագրի իրականացման որ փուլում է գտնվում ձեր եկեղեցին: Ինչպե՞ս կարող եք առավել ակտիվ մասնակցություն ունենալ մեծ հանձնարարության կատարման համար համայնքի գործունեության մեջ:

Երկուշաբթի ***մայիսի 14***

Համապեղ ծրագրում

Հաճախ վկայության և ավետարանչության նպատակների և ռազմավարությունների ծրագրմանը միայն մի քանի մարդ է մասնակցում: Հետո, երբ արդեն ամեն բան որոշված է, այդ մի քանի հոգին սկսում են եկեղեցու մյուս անդամներին ներքաշել արդեն կազմված ծրագրերի իրականացման մեջ: Անհամեմատ ավելի լավ է՝ ամենասկզբից մեծաքանակ մարդկանց ներգրավել: Ահա թե ինչու է Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցու ղեկավարությունը պնդում, որ համայնքի խորհրդի գլխավոր հոգսը հանդիսանում է ավետարանչության ծրագրումն ու ամրապնդումը նրա բոլոր մակարդակներում:

Կարդացե՛ք Ա Կորնթացիս 14.40-ը: Պողոսն ի՞նչ է ասում ծրագրման անհրաժեշտության մասին: Ինչպիսի՞ն կարող են լինել սխալ ծրագրման կամ դրա բացակայության հետևանքները: ___

_____

_____

Համայնքները կարող են մի շարք սխալներ թույլ տալ ավետարանչական աշխատանքի ծրագրման մեջ: Նրանք կարող են առաջադրել նպատակներ, բայց չնշել դրանց հասնելու ռազմավա-

րությունը, կարող են մշակել ռազմավարություն՝ չունենալով հանդերձ հստակ նպատակներ, կամ էլ՝ նրանք կարող են նպատակներ առաջադրել և ռազմավարություն մշակել՝ չնախատեսելով արդյունքների գնահատման գործընթաց: Նպատակներն ու ծրագրերը համընթաց են գնում, սակայն նախ սկզբում ի հայտ են գալիս նպատակները, որպեսզի հնարավոր լինի այդ նպատակներին հասնելու համար մշակել ծրագրեր: Իսկ արդյունքների գնահատման գործընթացը օգնում է եկեղեցուն՝ չշեղվել ուղուց՝ առաջընթաց արձանագրելով նշված նպատակներին հասնելու մեջ:

Հարկ է հիշել, որ եկեղեցու անդամները պետք է զգան իրենց պատկանելությունը նպատակներին՝ արդեն իսկ ծրագրման ամենավաղ փուլում: Մարդիկ, ովքեր նշում են նպատակները և մասնակցում են ռազմավարական ծրագրմանը, մյուսներից ավելի են շահագրգռված նպատակադրվածի իրականացման մեջ: Այդ պատճառով կարևոր է, որպեսզի հնարավորինս շատ մարդիկ մասնակցեն ծրագրման փուլին և դրան պատկանելության զգացում ունենան: Եթե դա տեղի չի ունենում, ապա, ամենայն հավանականությամբ, երկարաժամկետ ծրագրերը կդառնան միայն մի քանի մարդու ձեռքբերումը, ովքեր ստիպված կլինեն միայնակ պայքարել դրանց իրականացման համար: Այդ դեպքում հաջողությունը քիչ հավանական է:

Կարդացե՛ք Սաղմոս 37-ը: Ի՞նչ վստահություն է մեզ տալիս այդ սաղմոսը մեր ավետարանական ծառայության մեջ: Ի՞նչ սկզբունքներ և խոստումներ մենք կարող ենք քաղել այդ սաղմոսից: _____

_____

_____

_____

Երեքշաբթի ***մայիսի 15***

Աշխատելով թիմում

Տրամաբանական է ենթադրել, որ եղել են դեպքեր, երբ վաղ եկեղեցու յուրաքանչյուր աշակերտ իր հավատով կիսվում էր ինքնուրույնաբար, սակայն մեծամասամբ մենք նրանց գտնում ենք ավետարանչական ծառայությունը այլ աշակերտների հետ կատարելիս՝ այլ հավատացյալների աջակցությամբ: Որոշակի առանձնահատկություն կա ընդհանուր ծրագրի վրա կատարվող աշխատանքում թիմի մյուս անդամների սատարում ու քաջալերում ստանալու մեջ:

Աստվածաշնչի էջերում մենք հանդիպում ենք արդյունավետ վկայության ու ավետարանչության ճշգրիտ օրինակը, և մեզ չպետք է զարմացնի, որ անգամ այսօր, երբ Աստված ինչ-որ մեկին ընտրում է կարևոր ծառայություն կատարելու համար, Նա ոգևորում է նաև առաջնորդի շուրջ հավաքված թիմին:

Կարդացե՛ք Մատթեոս 10.2-4, Մարկոս 3.16-19 և Ղուկաս 6.12-16-ը: Ի՞նչ պարզ դասեր մենք կարող ենք քաղել այս հատվածներից: _____

_____

Անկասկած, առաջին քրիստոնյաները աշխատում էին խմբերում, և դրանում մեծ իմաստ կա: Բացի նրանից, որ յուրաքանչյուրն ունի առանձնահատուկ պարգևներ, որոնք, հնարավոր է, չունեն ուրիշները, որոշակի պաշտպանիչ դեր է խաղում նաև թվաքանակը: Պատասխանատվության զգացում է ծագում՝ ուրիշները նայում են ձեզ, նրանք կարող են ձեզ արժեքավոր խորհուրդներ տալ, ձեզ ետ պահել տարբեր շեղումներից, որոնք կարող են հասցնել ողբերգական նահանջի: Միմյանց հանդեպ ուշադիր և հոգիների փրկության ընդհանուր նպատակը հետապնդող հավատարիմ եղբայրների ու քույրերի միաբան թիմը իրենից իդեալական հիմք է ներկայացնում ավետարանման համար:

Կարդացե՛ք Փիլիպպեցիս 1.5-18-ը: Փիպիպպեի քրիստոնյաներին Պողոսի արտահայտած երախտագիտության մեջ ի՞նչն է ցույց տալիս, որ այդ մարդիկ մասնակցում էին հասարակական վկայությանն ու ավետարանչությանը: _____

_____

Սկզբում Պողոսը Փիլիպպեցիս թղթում խոսում է նրանց մասնակցության մասին ավետարանմանը (հմ. 5): Նրանք պաշտպանում և ամրապնդում էին ավետարանումը (հմ, 7), անվախաբար քարոզում էին Աստծո Խոսքը (հմ. 14): Առաքյալը նաև իր ուրախությունն է արտահայտում այն կապակցությամբ, որ նրսանք անդադար քարոզում են Քրիստոսին (հմ. 15-18): Հիշե՛ք. Պողոսը դիմում է եկեղեցու, ոչ թե առանձին մարդու: Քրիստոսին առանձին մարդիկ էին քարոզում, սակայն այն փաստը, որ Պողոսը գովում է եկեղեցին, վկայում է այն մասին, որ այդ ավետարանչական ծառայությունը համատեղ էր:

Ինքնուրույն մասնակցելով վկայությանը՝ դուք երբևէ զգացե՞լ եք այնպիսի գայթակղություն, որը չէր ծագի, եթե դուք աշխատեիք համախոսհերի խմբի հետ: Եթե դուք մտադիր եք աշխատել այլ մարդկանց հետ նույն խմբում, ինչո՞ւ է կարևոր զարգացնել խոնարհությունն ու պատասխանատվության զգացողությունը:

Յուրաքանչյուրը կատարում է իր մասը

Երբ միասնական եկեղեցին կենտրոնացած է ընթացիկ ավետարանչական աշխատանքի կատարման վրա, Տերը օրհնում է այդ միավորված աշխատանքները: Աստվածաշնչի ուշադիր ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե Նոր Կտակարանում որքան շատ է գրված այն մասին, թե ինչպես քրիստոնյաները պետք է ապրեն և աշխատեն համաձայնությամբ: Սուրբ Գրքում բազմիցս հանդիպում է «միմյանց» արտահայտությունը: Մեզ հրամայված է սիրել միմյանց (Հովհաննես 15.12), ներել միմյանց (Եփեսացիս 4.32), աղոթել միմյանց համար (Հակոբոս 5.16): Բացի դրանից, շատ համարներ են խոսում եկեղեցու՝ որպես կոլեկտիվի մասին, նրա կողմից կատարվող աշխատանքի և համապատասխան աճի մասին:

Կարդացե՛ք Եփեսացիս 4.15,16-ը: Համատեղ աշխատանքն ինչպե՞ս է նպաստում եկեղեցու աճին ու շինությանը: _____

_____

_____

Պողոսն ասում է մեզ, որ Աստծո կամքը կայանում է նրանում, որպեսզի մենք աճենք Հիսուս Քրիստոսում: Դա ցույց է տալիս, որ մենք բոլորս միասին քայլում ենք հոգևոր ճանապարհով և որոշակի չափով դա մեր անձնական հոգևոր ուղին է: Սակայն համարը բացատրում է, որ յուրաքանչյուրի աճը ազդեցություն կգործի ողջ մարմնի թվական և հոգևոր աճի վրա:

Քրիստոսում քրիստոնյաների աճին զուգահեռ տեղի է ունենում ինչոր զարմանալի, անգամ գերբնական բան: Եկեղեցու ընդհանուր գործի մեջ յուրաքանչյուրի ներդրման շնորհիվ հավատացյալները միավորվում և կապվում են միմյանց հետ: Եկեղեցին հասնում է լավագույն արդյունավետության, երբ յուրաքանչյուրը կատարում է աշխատանքի իր մասը: Ի՞նչ էին անում առաջին քրիստոնյաները՝ Երուսաղեմում սպասելով խոստացված Սուրբ Հոգում (Գործք առաքելոց 1.12-14): Պատասխանը պետք է ցույց տա մեզ, թե ինչ է նշանակում համատեղ երկրպագությունը: Իսկապես, նրանք մեծ հանձնարարությունը կատարելու պատրաստ եղան միայն Սուրբ Հոգու թափումից հետո: Այդ խումբը, որը բաղկացած էր մոտավորապես հարյուր քսան մարդուց, միավորվել էր աղոթքի մեջ և կենումէ ր աղոթքի մեջ: Անկասկած, նրանց միավորում էր Սուրբ Հոգու մասին Հիսուսի խոստումը՝ մշտապես դրդե-

լով համատեղ հավաքվել աղոթքի համար՝ սպասելով այն զորությանը, որ պետք է օգներ նրանց՝ կատարել Տիրոջ հանձնարարությունը: Որպես եկեղեցի մենք պետք է նույնը անենք:

Խորհեցե՛ք այսպիսի հարցի շուրջ. ընդհանուր առմամբ որքա՞ն ժամանակ և ջանքեր է ծախսում ձեր համայնքը ավետարանման, վկայության և ավետարանչության համար՝ այն ժամանակի և ջանքերի համեմատությամբ, որոնք ծախսվում են ներքին եկեղեցական միջոցառումների, երկրպագությունների, երաժշտական ձևավորման և այլնի վրա: Շաբաթ օրը քննարկե՛ք դա:

Հինգշաբթի *մայիսի 17*

Համախմբվածության և միասնականության կարևորությունը

Լավ արտահայտություն կա այն մասին, որ քրիստոնեությունը, որը չի սկսվում անձից, առհասարակ չի սկսվում, և քրիստոնեությունը, որը չի ավարտվում սեփական անձով, չի ավարտվում առհասարակ: Այս արտահայտությունն ընդգծում է եկեղեցու մարմնի հետ յուրաքանչյուր նորադարձի միավորման կարևորությունը: Արդարացի կլիներ նշել, որ վկայության և ավետարանման նման, միավորման գործը նույնպես չի կարող հանձնարարվել միայն եկեղեցու որոշ անդամների: Միավորման համար պատասխանատվությունը կրում է ողջ եկեղեցին:

Կարդացե՛ք Կողոսացիս 1.28,29-ը: Նորադարձների առջև ի՞նչ հատուկ նպատակ էր դնում Պողոսը: _____

_____

_____

Քրիստոնեական հասունությունը, ողջ լիությամբ Աստծով լցվելը (Եփեսացիս 3.19) յուրաքանչյուր եկեղեցու նպատակն է: Օգնել նորադարձներին՝ հոգևորապես աճել՝ նույնքան կարևոր է, որքան նրանց Քրիստոսի մոտ՝ Նրա եկեղեցի բերելը: Ավելին, իր անդամների միավորման համար համայնքի ծախսած ջանքերը կօգնեն ամրապնդել նրա ավետարանչական գործունեության արդյունքները: Որևէ ավետարանչական նախագիծ սկսելուց առաջ պետք է ժամանակ հատկացնել եկեղեցու նախապատրաստության համար: Դամտածելու ժամանակն է, թե ինչ փոխադրամիջոց պետք կլինի, ով կզբաղվի երեխաների հետ ծրագրի անցկացման ընթացքում, ով կդիմավորի հյուրերին, կմաս-

նակցի աղոթքի խմբի աշխատանքին և պատասխանատու կլինի հրավիրատոմսերի համար: Պողոս առաքյալը մեր ուշադրությունն է հրավիրում միավորման՝ որպես եկեղեցու նախապատրաստության սև մեկ կարևոր մասը:

Մտորե՛ք հետևյալ հարցերի շուրջ: Նորադարձներն ինչպե՞ս կարող են ներգրավվել համայնքի կյանքի և նրա ծրագրերի մեջ: Եկեղեցին ինչպե՞ս կարող է մուտք գործել նորադարձների կյանք և օգնել նրանց հոգևոր աճին: Փոխկապակցվա՞ծ են այդ երկու գործընթացները, և եթե այո, ապա ինչպե՞ս: _____

_____

_____

Մենք հաճախ համարում ենք, որ դարձի բերելու և հաջորդիվ նորադարձի եկեղեցուն միանալու համար կատարվող աշխատանքը այն մարդու պարտականությունն է, ով նրան բերել է Աստծո մոտ: Միայն պատկերացրե՛ք, թե որքան դժվար կլիներ Պողոս առաքյալին՝ սատարել իր ծառայության արդյունքում բոլոր դարձի եկածներին, և դուք կհամոզվեք, որ դա աստվածաշնչյան ուղին չէ: Ճշմարտության մեջ հաստատելը միայն մեկ կամ երկու նշանակված ղեկավարների գործը չէ, դա ողջ եկեղեցու գործն է:

Մենք հաճախ ցավում ենք, որ եկեղեցի եկած մարդիկ չափազանց շուտ լքում են այն: Դա ողբերգություն է, որն ունի հավիտենական հետևանքներ:

Խորհեցե՛ք ձեր եկեղեցու նոր դարձի եկած մարդկանց մասին: Ինչե՞ս դուք (ոչ թե հովիվը կամ երեցը, այլ հենց դուք) կարող եք օգնել այդ մարդկանց՝ դառնալ եկեղեցական համայնքի անբաժանելի մասը և հաստատվել եկեղեցու ուսմունքի մեջ:

Ուրբաթ ***մայիսի 18***

Հետագա ուսումնասիրության համար

Իրական ավետարանչական նպատակները:

Ե՛վ ողջ Եկեղեցին, և՛ ծառայություն իրականացնող ոչ մեծ թիմերը պետք է հոգան այն մասին, որ մեր բոլոր ավետարանչական նպատակները իրատեսական լինեն: Ստորև բերված են հիմնական պահերը, որոնց վրա անհրաժեշտ է ուշադրություն դարձնել:

Արժեքային մարտահրավերը: Այսօր շատ եկեղեցական ռազմավարություններում մեծ նշանակություն ունեն ֆինանսները: Խորհե-

ցե՛ք գովազդային նյութի, տարածքի վարձակալության, սննդի, փոխադրամիջոցի և փոստային ծախսերի մասին: Դա միայն մի քանիսն են այն հնարավոր ծախսերից, որոնք անհրաժեշտ են այս կամ այն ավետարանչական ծրագրի անցկացման համար:

Հասանելիություն: Հասանելի՞ են առաջադրված նպատակները: Դուք ունե՞ք միջոցներ, ժամանակ, աջակցություն, սարքավորումներ և մարդիկ՝ ծրագրված արդյունքին հասնելու համար: Ավելի լավ է սկսել ոչ մեծ ծրագիր, որն աստիճանաբար, ձեր թիմին այլ, ձեզ աջակցություն ցուցաբերելու պատրաստ մարդկանց միանալուն զուգահեռ, կկարողանա վերաճել ինչ-որ մի ավելի խոշորածավալ բանի:

Կենսունակությունը: Եթե վկայության և ավետարանչության ծրագիրը հաջողություն է վայելում, ապա այն, անկասկած, անհրաժեշտ է կրկնել: Ճիշտ այդպես կարող է պարզվել, թե ձեր ծառայությունը հանդիսանում է ներկայումս գործող ռազմավարության մի մասը: Այդ դեպքում ձեզ անհրաժեշտ է լավ ծրագրել, որպեսզի կազմակերպվի ամեն անհրաժեշտը՝ իրականացվող ծառայությանն աջակցման համար:

Գնահատումը: Համոզվե՛ք, որ դուք գնահատում եք ծառայության բոլոր կողմերը՝ նրա մասնակիցներին, ֆինանսները, նախապատրաստված միջոցառումները, արդյունքները և այլն: Այստեղ ամենևին էլ ամենի ինչ չէ, որ թվարկված է: Մշտական ծառայությունների համար անհրաժեշտ է գնահատման որոշակի ժամկետներ սահմանել և պահպանել դրանք: Անպայման վերլուծե՛ք, թե այդ ծրագիրն ինչպես է ներգրավվում եկեղեցու ավետարանչական ծառայության ընդհանուր ռազմավարության մեջ:

Հարցեր քննարկման համար

1. Վերադարձե՛ք չորեքշաբթի օրվա թեմայում առաջադրված հարցի պատասխաններին: Ավետարանումն ինչպե՞ս կարող է միաբանել ներքին դժվարություններ վերապրող եկեղեցին: Դուք ինչպե՞ս կարող եք օգնել ձեր եկեղեցուն՝ ուշադրությունը փոխադրել ներքին խնդիրներից դեպի ավետարանման աշխատանքը: Ինչո՞ւ է դա այդքան կարևոր:
2. Խորհեցե՛ք ստորև բերված մեջբերման մասին: Ձեր եկեղեցու անդամները ի՞նչ չափով են ներգրավված համատեղ ավետարանչական ծառայության մեջ: Դուք ի՞նչ դեր կարող եք կատարել հասարակական ավետարանչություն սովորեցնող միջոցառումների կազմակերպման մեջ: Անձամբ դուք ինչպե՞ս եք վերաբերվում թիմային աշխատանքին: «Եթե

աշխատանքը կատարվում է այնտեղ, որտեղ արդեն կա քրիստոնյաների համայնք, ծառայողը պետք է իր հիմնական ջանքերն ուղղի ոչ այնքան անհավատներին դարձի բերելուն, որքան իր եկեղեցու անդամների նախապատրաստությանը՝ իրենց ուժերի սահմաններում ծառայություն իրականացնելուն» (է. Ուայթ, Ավետարանի ծառայողները, 196): Ձեր եկեղեցու քանի՞ անդամ է լավ պատկերացնում,՝թե ինչպես է անհրաժեշտ աշխատել հոգիներ դարձի բերելու համար: Եթե ոչ շատերը, ապա ինչպե՞ս կարելի է փոխել այդ իրավիճակը:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԱՎԵՏԱՐԱՆՉՈՒԹՅԱՆՆ ՈՒ ՎԿԱՅՈՒԹՅԱՆԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Մատթեոս 4.19, 11.1-11, 10.1-14, Ա Պետրոս 5.8, Բ Պետրոս 3.9:

Հիշելու համարը.

«Եվ ասաց նրանց. իմ հետևից եկե՛ք, և ես ձեզ մարդկանց որսորդ կդարձնեմ» (Մատթեոս 4.19):

Հիմնական միտքը

Որքան էլ կարևոր է նախապատրաստությունը, նախքան մենք կկարողանանք արդյունավետ կերպով վկայել մեր հավատի մասին, մեզ անհրաժեշտ է սերտ փոխհարաբերություններ կառուցել Հիսուսի հետ:

Քիչ հավանական է, որ իր փրկության հանդեպ անձնական վստահություն չունեցող մարդը կկարողանա այլ մարդկանց Հիսուսի հետ սերտ, փրկարար փոխհարաբերությունների բերել (թեև նաև այդպես էլ է պատահում): Նա կարող է շրջապատողներին համոզել հավատալ աստվածաշնչյան ուսմունքներին և փաստերին, տարեթվերին և իրադարձություններին: Նման փաստարկները կարող են անգամ հանգեցնել նրան, որ մարդիկ լրջորեն փոխեն իրենց կենսակերպը:

Սակայն, նույնիսկ եթե բարի գործերը կարող են կատարվել Հիսուս Քրիստոսից կտրված, անհրաժեշտ է, որպեսզի վկայության և ավետարանչության ցանկացած նախապատրաստություն ներառի ինչպես դավանաբանական, այնպես էլ հոգևոր տեսանկյունները: Ճշմարիտ ավետարանիչ լինելու համար մարդը պետք է հաստատապես համոզված լինի «հավիտենական Ավետարանի» մեջ: Հենց դա է, որ մեզ տանում է դեպի հավատ, ապաշխարություն, վերստին ծնունդ, վստահություն և աշակերտություն:

Այս շաբաթ մենք կտեսնենք, որ ավետարանչությանը և վկայությանը մարդկանց հոգևոր և տեղեկատվական նախապատրաստությունը իսկապես աստվածաշնչյան սկզբունք է: Մենք պետք է դրդենք մարդկանց՝ այդ սկզբունքը կենսագործել իրենց կյանքում:

Ուսուցման անհրաժեշտությունը

Մատթեոս 9.37 համարում Հիսուսն ընդգծեց, որ հունձքը շատ է, իսկ մշակները՝ քիչ: Այսօր հունձքն անհամեմատ շատ է, իսկ աշխատողներն առաջվա նման համեմատաբար քիչ են: Անհրաժեշտ է դաշտեր ուղարկել խնամքով նախապատրաստված և ուսուցանված հնձվորների: Այժմ ճշմարտությունը, որ Սուրբ Հոգու ազդեցությունը մնում է հաջող վկայության և ավետարանչության հիմնական գործոնը, նույնքան ճշմարիտ է, որքան և այն փաստը, որ Աստծո կողմից ծառայության կանչված մարդիկ պետք է նախապատրաստված լինեն ուսուցման, դիտման և պրակտիկայի միջոցով: Եփեսացիս 4.11,12-ի համաձայն՝ անհրաժեշտ է որոշակի քայլեր ձեռնարկել՝ մարդկանց տարատեսակ ծառայությունների նախապատրաստելու համար: Աստված խոստացել է ղեկավարներին օրհնել առանձնահատուկ պարգևներով, որոնց օգնությամբ նրանք կարող են լինել առաջնորդներ, ովքեր ընդունակ կլինեն մարդկանց նախապատրաստել ծառայության իրականացմանը: Կարևոր է նաև նշել, որ եթե ավետարանիչները, հովիվներն ու ուսուցիչներն իրենք են կատարում ողջ աշխատանքը, նրանք չեն հետևում Սուրբ Գրքի պատվերին:

Ծառայությանը պատրաստվող յուրաքանչյուր անձ պետք է համոզված լինի, որ Աստծո կամքը աշխարհը մեղքից փրկելն է, որ Աստծո կողմից եկեղեցուն հանձնարարված աշխատանքը կործանվող աշխարհին ավետարանելն է, և որ Նրա եկեղեցին աճի այս աշխարհում:

Կարդացե՛ք Մատթեոս 4.19 և Մարկոս 1.17-ը Մատթեոս 28.19-ի համատեքստում: Ի՞նչ նշանակություն ունի այն փաստը, որ Հիսուսի առաջին գրի առնված պատվերն էր՝ «Եկե՛ք իմ հետևից, և ես ձեզ մարդկանց որսորդներ կդարձնեմ»: Այդ բառերն ի՞նչ պետք է նշանակեն մեզ՝ Յոթերորդ օրվա ադվենտիստներիս համար այսօր, երեք հրեշտակների պատգամի մեր ըմբռնման համատեքստում: Մենք իսկապե՞ս «մարդկանց որսորդներ» ենք, թե՞ մեզ հուզում է միայն այն, ինչ տեղի է ունենում մեր «նավակներում»: _____

_____

_____

_____

_____

Կարևոր է ուշադրություն դարձնել այն բանին, որ Հիսուսն աշակերտներին պարզապես կոչ չարեց լինել մարդկանց որսորդներ: Նա չասաց՝ «Եկե՛ք իմ հետևից, և մարդկանց որսորդներ եղե՛ք»: Նա ասաց. «Եկե՛ք Իմ հետևից, և ես ձեզ մարդկանց որսորդներ կդարձնեմ»: Հիսուսի հետ շփման հենց սկզբից այդ մարդիկ հասկացան, որ իրենց կյանքում ուսուցման կարևոր գործընթաց է սկսվում: Հիսուսը նրանց հրավիրում էր մուտք գործել մի մթնոլորտ, որտեղ նրանք կկարողանային սովորել կատարել այն խնդիրը, որի համար Նա կանչել էր նրանց: Աշակերտները դեռ շատ բան պետք է սովորեին դիտման և գործնական կյանքի շնորհիվ: Միայն այն ժամանակ, երբ նրանք սովորեցին իրենց տարածքում ամեն ինչ անել ինչպես հարկն է, Հիսուսը նրանց հանձնարարեց գնալ ողջ աշխարհով մեկ: Առանց համապատասխան նախապատրաստության, հրահանգավորման և աշխատողի անձնական հոգևոր զարգացման Ավետարանը շրջապատողներին տանելու խնդիրը գործնականում անիրագործելի է:

Երկուշաբթի ***մայիսի 21***

Ուսուցում դիտման միջոցով

Տիրոջը ծառայել ցանկացողներին ուսուցանելու երկու տեսանկյուն կա, և դրանցից մեկը բխում է մյուսից: Նախ անհրաժեշտ է ճանաչել Հիսուսին, իսկ հետո կիսվել Նրա մասին լուրով և նրանով, ինչ Նա առաջարկում է ողջ մարդկությանը:

Կարդացե՛ք Հիսուսի կողմից հինգ հազար մարդու կերակրելու պատմությունը (Մատթեոս 14.13-21, Մարկոս 6.30-44, Ղուկաս 9.10-17, Հովհաննես 6.1-14): Թվարկե՛ք այն ամենը, ինչ աշակերտները տեսել էին այդ օրը, ինչը նրանց օգնել էր նախապատրաստվել հետագա ինքնուրույն ծառայությանը: Կարդացե՛ք նաև այս պատմության վերաբերյալ Էլեն Ուայթի մեկնաբանությունները «Դարերի փափագը» գրքից, 364-371: _____

_____

_____

_____

Որքա՜ն հուզիչ էր դա՝ ոչ թե պարզապես լսել բոլոր քարոզիչներից մեծագույնին, ով պատմում էր Աստծո թագավորության մասին (Ղուկաս 9.11), այլև տեսնել Նրա կատարած հրաշքները, որոնք յուրաքանչյուր սրտում դեպի այդ թագավորությունը ձգտում էին առաջ բերում:

Դիտման միջոցով ուսուցումը հարմար է բոլորին: Գիրք կարդալը կամ դասերին հաճախելը միշտ պետք է հիմնված լինեն դիտման և մասնակցության վրա: Հովհաննես Մկրտչի աշակերտներից Հիսուսն ակնկալում էր, որ նրանք սովորեն դիտելով:

Ուսումնասիրե՛ք Մատթեոս 11.1-11-ը: Ի՞նչ տեսան Հովհաննես Մկրտչի աշակերտները, և, համաձայն Հիսուսի ակնկալիքների, նրանք ի՞նչ պետք է պատմեին Հովհաննեսին իրենց դիտումներից հետո: Ի՞նչ էր Հիսուսը սովորեցնում ոչ միայն Հովհաննեսին, այլ նաև Իր աշակերտներին: _____

_____

_____

Հովհաննես Մկրտիչը Հիսուսին ներկայացրեց ժողովրդին որպես Աստծո Գառի, ով վեր է առնում աշխարհի մեղքը: Բայց հետո Հովհաննեսին բանտարկեցին, նա քարոզելու հնարավորություն չուներ և Հիսուսի ծառայության մասին լսում էր միայն երրորդ անձանց միջոցով: Բանտում նրա սրտում որոշ կասկածներ ծագեցին Հիսուսի վերաբերյալ: Երբ մենք կասկածում ենք, պետք է Հիսուսին դիմենք, և հենց այդպես էլ վարվեց Հովհաննեսը: Հիսուսը Հովհաննեսի աշակերտներին ուղարկեց պատմելու այն մասին, ինչ նրանք լսել և տեսել էին: Նրանց պատմածը քաջալերեց Հովհաննեսին, ամրապնդեց նրա հավատը Հիսուսի հանդեպ՝ որպես Մեսիայի և աշխարհի Փրկչի:

Մեծ մասամբ մենք չենք կարող այնպիսի հրաշքներ գործել, ինչպիսիք գործում էր Հիսուսը: Բայց, պատրաստ լինելով մեռնել մեզ համար և ապրել մերձավորների համար, մենք ի՞նչ կարող ենք անել մեր միջավայրում, ինչը կարտացոլեր Հիսուսի գործերը, որոնք Նա կատարում էր երկրի վրա:

Երեքշաբթի **մայիսի 22**

Սովորել գործնականում

Կարելի է գրքեր կարդալ սիրած մարզաձևի մասին, հեռուստացույցով խաղեր և մրցումներ դիտել, բայց եթե մարդը ցանկանում է մարզիկ լինել, ապա պետք է մարզահագուստ հագնի և խաղադաշտ դուրս գա: Մենք դա անվանում ենք անձնական փորձառություն, ուսուցում գործնականում, առանց որի մարդը պարզապես պատրաստ չէ առաջադրանքի կատարմանը: Այդ համապարփակ ճշմարտությունը կիրառելի է նաև քրիստոնեական վկայության և ավետարանչության վե-

բաբերյալ: Երբեմն մենք լսում ենք, թե ինչպես են մարդիկ ասում, որ չեն ցանկանում մասնակցել ծառայությանը, քանի որ պատրաստ չեն դրան: Նրանք պետք է հասկանան, որ ակտիվ մասնակցությունը նախապատաստության կարևորագույն մասն է: Պետք է սկսել քչից՝ քայլ առ քայլ բարդացնելով պահանջը. ահա այն ուղին, որով անհրաժեշտ է գնալ: Մեր հմտությունը, փորձն ու վստահությունը կաճեն Սուրբ Հոգու առաջնորդությանը զուգընթաց:

Մատթեոս 10.1-14 համարները պատմում են այն մասին, թե ինչպես էր Հիսուսը նախապատրաստում Իր աշակերտներին, իսկ հետո՝ ուղարկում ծառայության: Որքան էլ նրանց իրավիճակը տարբերվում էր մերից, մենք ի՞նչ կարող ենք սովորել այդ պատումից: Աշակերտների նախապատրաստության մեջ ի՞նչ ներդրում ունեցավ նրանց գործնական ծառայությունը: _____

_____

_____

_____

Հիսուսն աշակերտներին սովորեցնում էր յուրահատուկ «դպրոցում»: Նա նաև նրանց Իր հետ էր վերցնում, երբ ինչ-որ տեղ էր գնում, և նրանք սովորում էին՝ հետևելով Նրա ծառայությանը: Իսկ այն բանից հետո, երբ Հիսուսն աշակերտներին օժտեց հիվանդներին բժշկելու, մեռյալներին հարություն տալու և դևեր հանելու զորությամբ (հմ. 8), Նա նրանց ինքնուրույն ծառայություն հանձնարարեց: Բայց ուշադրություն դարձրեք նրանց ստացած հրահանգների առատության՝ նախքան Փրկիչը նրանց կուղարկեր ծառայությունն իրականացնելու: Հիսուսը բացատրեց աշակերտներին, թե ինչի մասին է անհրաժեշտ քարոզել, ինչպիսի հրաշքներ գործել, ինչը հարկ չկա վերցնել իրենց հետ, ում տանը կանգ առնել, ինչ անել, եթե ինչ-որ տեղ նրանց չընդունեն, և շատ ուրիշ բաներ: *Միայն մարդկանց հետ փոխգործողությամբ է հնարավոր շատ կարևոր դասեր քաղել:* Այդ հատվածը լավագույնս պատկերում է ուսուցումը աշխատավայրում: Աշակերտները չէին կարող ծառայել նրանց, ում հետ ոչ մի փոխհարաբերություն չունեին: Մենք երբեք չպետք է մոռանանք այդ մասին:

Կարդացե՛ք Ղուկաս 10.1-11-ը: Ի՞նչ ընդհանուր բան կա այն պատվերների միջև, որ Հիսուսը տվեց տասներկու և յոթանասուն աշակերտներին: Ի՞նչ սկզբունքներ մենք կարող ենք սովորել Նրա տված պատվերներից: _____

_____

_____

Թեև սկզբում Հիսուսը յոթանասուն աշակերտներին ուղարկում էր այն վայրերը, ուր Ինքն էր մտադիր գնալ (հմ. 1), Նա գիտեր, թե ինչի կհանդիպեն նրանք և մյուս ավետարանիչները, երբ Նրա համբարձումից հետո կջանան ինքնուրույն տարածել բարի լուրը: Հիսուսի՝ յոթանասուն աշակերտներին տված պատվերները վկայում են, որ Տերը նրանց պատրաստում էր այն բանին, ինչին նրանք պետք է բախվեին:

Ձեզ շա՞տ արդարացումներ է հաջողվում գտնել, որպեսզի չվկայեք ձեր հավատի մասին, երբ այդպիսի հնարավորություն է ծագում: Ո՞ր արդարացումն է «ամենահամոզիչը» ձեզ համար:

Չորեքշաբթի *մայիսի 23*

Սովորել սխալներից

Մեզ երբեմն չի հաջողվում հասնել բոլոր առաջադրված նպատակներին որևէ ավետարանչական աշխատանքի մեջ: Դա նշանակո՞ւմ է, որ մենք կատարյալ անհաջողություն ենք կրել: Իհարկե, ո՛չ: Կործանվողներին դեպի փրկություն տանելու նպատակով մշակված ցանկացած ռազմավարության դեպքում մեզ կուղեկցեն ինչպես հաջողությունը, այնպես էլ անհաջողությունը: Խնդիրը կարող է լինել նաև չափազանց մեծ սպասումների մեջ: Օրինակ, եթե մեզ չի հաջողվել կատարել մկրտվողների թվի ծրագիրը, հնարավոր է, որ մենք մեր առջև պարզապես անիրական նպատակներ ենք դրել: Թե՞ մեր գործունեությունն ուղղված էր միայն սերմեր ցանելուն, այլ ոչ թե հունձքին: Մի խոսքով, որքան էլ մենք շատ ցանկանանք մտածել, որ բերքն արդեն հասունացել է և պատրաստ է հունձքին, ըստ ամենայնի, կարող է պարզվել, որ դեռևս ցանքի ժամանակն է: Մենք չենք կարող ամեն ինչ իմանալ:

Կարդացե՛ք Ա Պետրոս 5.8-ը: Ի՞նչ ուժ է հակազդում մարդկանց՝ Աստծո արքայություն բերելու ձեր փորձերին: Այդպիսի սպառնալիքի իմացությունն ինչպե՞ս է օգնում մեզ՝ ավելի լավ նախապատրաստվել և իրականացնել վկայության և ավետարանչության ռազմավարությունը: _____

_____

_____

Հոգիները դեպի փրկություն բերելու մեր բոլոր փորձերի մեջ մենք հանդիպում ենք գերբնական հակառակորդին, որը մարդկանց եռանդուն կերպով տրամադրում է Ավետարանի դեմ: Երբ մենք կատարում ենք Տիրոջ գործը, այդ հակառակորդը կարող է խնդիրներ ստեղծել,

խոչընդոտել Աստծո գործում մեր գործադրած ջանքերին: Մեր միակ պաշտպանությունը լիակատար նվիրումն է Քրիստոսին՝ կյանքի յուրաքանչյուր պահի: Ինչպես դա տեղի ունեցավ Ադամի ու Եվայի հետ Եդեմի այգում, անկումը կամ անհաջողությունը կարող է ստիպել մեզ փոխադարձ հանդիմանության խոսքեր արտասանել, որոնք սատանայի ամենից ավելի հաջող գործիքներից են, որ աններդաշնակություն են մտցնում Աստծո ժողովրդի մեջ: Մեղավորներ փնտրելու փոխարեն՝ ավելի լավ է զբաղվել լուրջ, ազնիվ և խորը վերլուծությամբ՝ հիշելով այն մասին, որ անգամ Հիսուսը՝ մեծագույն Քարոզիչը և Ավետարանիչը, չկարողացավ մուտք գործել այն բոլոր սրտերը, ում դիմում էր:

Համեմատե՛ք Ղուկաս 10.17-ը և Մատթեոս 17.14-20-ը: Ինչպե՞ս վարվեցին աշակերտները՝ անհաջողություն կրելով իրենց ծառայության մեջ:

Մեր անհաջողությունների պատճառով հուսահատության մեջ ընկնելու փոխարեն՝ մենք կարող ենք սովորել առաքյալներից: Թեև նրանց ուժ էր տրված՝ ընդդիմանալ չար հոգիներին, և նրանք հաջողությամբ հանում էին դրանց, սակայն նրանց երբեմն չէր հաջողվում գործնականում կիրառել Հիսուսի պարգևած ընդունակությունները: Այդպիսի դեպքերում նրանք գալիս էին Հիսուսի մոտ և խնդրում բացատրել, թե ինչ տեղի ունեցավ և ինչու (տե՛ս Մատթեոս 17.19): Սրանում է ամփոփվում կարևոր սկզբունքներից մեկը. մեր անհաջողության պատճառի, ինչպես նաև՝ «ինչպե՞ս պետք է վարվեինք» հարցին պատասխանի որոնման բաղադրիչներից մեկն այդ իրավիճակը Տիրոջը հանձնելն է:

Ձեզ ի՞նչ են սովորեցրել շրջապատողներին վկայելու հարցում վերապրած ձեր անհաջողությունները: Ինչպե՞ս դա կարող է օգնել ձեզ ապագա ավետարանչական գործունեության մեջ: Մերժվելու վախը հաճա՞խ է ձեզ խանգարում այդ ծառայության մեջ:

Հինգշաբթի ***մայիսի 24***

Սովորել հաջողությունների միջոցով

Երկու ոլորտ գոյություն ունի, որտեղ մենք կարող ենք սովորել հաջողության միջոցով: Առաջինը կարելի է անվանել գործնական (կամ մեթոդական), իսկ երկրորդը՝ հոգևոր փոխազդեցություն: Թեև ինչ-որ մեկը կարող է արդարացիորեն առարկել, որ հոգևոր տեսանկյունը տեղ ունի և՛ մեկ, և՛ մյուս ոլորտներում, մենք այդ ոլորտները կդիտարկենք առանձին-առանձին, որպեսզի ավելի լավ բացատրենք, թե ինչ է

անհրաժեշտ սովորել հաջողությունից:Գործնական կամ մեթոդական ոլորտում մենք սովորում ենք նրանից, ինչ իրականում անում ենք: Օրինակ, մենք մեր տարածաշրջանում աստվածաշնչյան դասեր անցնելու ամենակիրառելի հաջորդականությունն ենք մշակում: Մենք գնահատում ենք, թե որտեղ ամենից լավ կլիներ անցկացնել դրանք, որոշում ենք, թե որ գովազդն ամենամեծ թվով մարդկանց կհետաքրքրքրի, դիտարկում ենք բազմաթիվ այլ հնարավորություններ, որոնք լավագույնս համապատասխանում են մեր տեղանքին: Հոգևոր փոխգործողությունն ընդգծում է այն փաստը, որ Աստված խորապես ներգրավված է քրիստոնյայի ավետարանչական գործունեության մեջ: Չէ՞ որ Աստծո կամքն է, որպեսզի բոլորը փրկվեն:

Կարդացե՛ք Բ Պետրոս 3.9-ը: Ի՞նչ կարևոր դաս մենք պետք է քաղենք Պետրոսի խոսքերից, որոնք մեզ անհրաժեշտ է մշտապես հիշել և կիրառել ցանկացած ավետարանչական ծառայության մեջ: Տե՛ս նաև Ա Կորնթացիս 3.6-ը: _____

_____

_____

Իմաստ չունի ցանելը, եթե հետո ոչ ոք չի ջրելու սերմերը: Նաև անօգուտ է ջրել այն վայրերը, որտեղ սերմեր չկան: Եվ եթե նույնիսկ ցանողն ու ջրողն ամեն ինչ ճիշտ են անում, աճը կարող է պարգևել միայն Աստված: Հետևելով, թե ինչպես է Աստված օրհնում մեր անզոր ջանքերը, մենք սկսում ենք հասկանալ, թե Աստված որքան շահագրգռված է մեր ջանքերի և աշխատանքի մեջ: Ձանալով դեպի փրկություն բերել այն հոգիներին, ում համար մահացել է Քրիստոսը, մենք սովորում ենք ավելի շատ վստահել Նրան, հասկանում ենք Աստծո հետ սերտ հոգևոր փոխհարաբերությունների կարևորությունը, քանի որ այնպիսի մարդ չկա, ում համար Քրիստոսը չէր մահանա և ում չէր ցանկանա փրկված տեսնել: Որքա՜ն կարևոր է մեզ համար՝ միշտ հիշել այդ մեծագույն ճշմարտության մասին:

Ինչպե՞ս ենք մենք կյանքում կիրառում Հովհաննես 15.5-ում գրի առնված Հիսուսի խոսքերը, հատկապես՝ վկայության և ավետարանչության ծառայության մեջ: Մենք ինչպե՞ս կարող ենք անձամբ կամ որպես ծառայողների թիմ իսկապես վերապրել այն, ինչը մեզ այս համարում ասում է Քրիստոսը: Մենք ի՞նչ պետք է փոխենք՝ Նրա հետ այդպիսի սերտ փոխհարաբերություններ ունենալու համար: _____

_____

_____

Հետագա ուսումնասիրության համար:

Ավետարանչական գործունեության ռազմավարության մշակում:

Ձեր եկեղեցու՝ ավետարանման գործում իր առաքելությունն իրականացնելու ձգտմանը զուգընթաց հիշե՛ք հետևյալի մասին.

Ամեն դեպքում, ողջ ավետարանչական խումբն ընդգրկե՛ք ռազմավարական ծրագրման գործընթացի մեջ: Կատարյալ տարբերակում ողջ համայնքը պետք է մասնակցի նպատակների և ուղղությունների մշակման գործին:

Սկզբում ծրագրե՛ք առաջիկա եկեղեցական տարին: Տասներկուամսյա ռազմավարությունը միանգամայն հարմար է սկզբի համար: Ավելի ուշ դուք կկարողանաք առավել շատ ծրագրեր ու ռազմավարություն ավելացնել՝ մեծացնելով ծրագրային ժամանակահատվածը:

Հատուկ ուշադրություն դարձրե՛ք այն բանին, որ ռազմավարական ծրագրման խումբը ճշգրիտ իմանա, թե ինչ է սպասվում և երբ: Երբ մարդիկ վստահ չեն, թե ինչ, երբ կամ ինչպես պետք է անել, եկեղեցու ռազմավարական շարժումը դեպի առաջադրված նպատակը կարող է դանդաղել կամ դադարել:

Հարցեր քննարկման համար

1. «Յուրաքանչյուր համայնք պետք է քրիստոնյա աշխատողների նախապատրաստման դպրոց լինի» (Է. Ուայթ, Ապաքինման ծառայություն, 149): Համապատասխանո՞ւմ է ձեր համայնքը այս պահանջին: Եթե ոչ լիովին, ապա ի՞նչ կարելի է անել՝ անհրաժեշտ փոփոխություններ կատարելու համար:
2. «Ամեն օրվա համար սատանան ունի իր ծրագրերը՝ խոչընդոտներ հարուցել Հիսուս Քրիստոսի մասին վկայողների ճանապարհին: Եթե հանուն Քրիստոսի աշխատողները չեն հարատևում հեզության և սրտի խոնարհման մեջ՝ դա սովորելով Հիսուսից, նրանք անպայման կընկնեն փորձության մեջ, քանի որ փորձառու և խորամանկ սատանան մշտապես արթուն է. նա ընդունակ է անակնկալի բերել աղոթքի մեջ չհարատևող աշխատողներին: Նա վրա է հասնում նրանց, ինչպես գիշերվա գողը, և գերում նրանց: Նա ազդում է այդ մարդկանց մտքերի վրա՝ աղավաղելով նրանց պատկերացումները և ծրագրեր կառուցելով նրանց համար, և երբ մյուս եղբայրները տեսնում են այդ

վտանգը և դրա մասին ասում են մոլորվածներին, վերջիններիս սկսում է թվալ, թե իրենց անձնական վիրավորանք է հասցվել, և ինչ-որ մեկը փորձում է թուլացնել ընդհանուր գործի վրա նրանց ազդեցությունը: Մեկն սկսում է մի կողմ ձգտել, մյուսը՝ հակադիր կողմ» (Է. Ուայթ, Ավետարանչություն, 101): Մեր ավետարանչական գործունեության մեջ մենք ինչպե՞ս կարող ենք հանդիպել վտանգին, որն այդքան ակնառու կերպով ներկայացված է այս հատվածում: Ո՞րն է մեր միակ պաշտպանությունը:

3. Խմբում քննարկե՛ք որևէ մեկի հաջող ավետարանչական գործունեությունը կամ որևէ եկեղեցու հաջող ավետարանչական ծրագիրը: Դուք ի՞նչ կարող եք սովորել այդպիսի փորձերից: Դուք ի՞նչ կարող եք փոխառել այդ նախագծերից՝ ձեր տարածաշրջանում իրականացնելու համար՝ հիշելով, որ յուրաքանչյուր իրավիճակ յուրահատուկ է, և այն, որ ինչ արդյունավետ է մի վայրում, կարող է արդյունավետ չլինել մեկ այլ տեղում:

ՆԵՐԳՐԱՎԵԼՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Ելից 18.13-26, Մատթեոս 7.17,18, Գործք առաքելոց 6.1-8, Հովհաննես 4.36, Գործք առաքելոց 15.36-40:

Հիշելու համարը.

«Եվ ինչպե՞ս քարոզեն, եթե չուղարկվեն, ինչպես գրված է՝ որքա՜ն գեղեցիկ են նրանց ոտքերը, որ խաղաղություն են քարոզում և բարի բաներ են ավետիք տալիս» (Հռոմեացիս 10.15):

Հիմնական միտքը.

Բավական չէ միայն սովորեցնել մարդկանց, թե ինչպես կատարել ավետարանչական ծառայությունը: Նրանք պետք է ակտիվորեն աշխատեն հանուն հոգիների փրկության:

Եկեղեցու շատ անդամներ բողոքում են, որ, չնայելով վկայելու և ավետարանչական աշխատանքը ուսուցանող սեմինարներ այցելելուն, իրենց ոչ ոք չի հրավիրում մասնակցել ծառայությանը, երբ նրանք վերադառնում են իրենց եկեղեցի: Հետևաբար, շատ եկեղեցիներ ակտիվ մասնակցություն չեն ունենում ավետարանչական աշխատանքին, քանի որ չգիտեն, որ իրենց մեջ կան դրա համար պատրաստված մարդիկ: Երբեմն որոշ քրիստոնյաներ իրենք են իրենց օգնությունն առաջարկում ծառայության մեջ, բայց մեծամասնությունը գալիս է եզրակացության, որ իրենց կարիքը չկա կամ էլ չեն ցանկանում, որպեսզի նրանք որևէ ծառայություն իրականացնեն: Եկեղեցու անդամին ծառայությունից ետ պահելու ամենահաստատ ձևը նրան չներգրավելն է եկեղեցական կյանքի այն ոլորտներում, որոնցում նա առավելագույն պատրաստվածությունն է ստացել: Յուրաքանչյուր համայնքի վրա պատասխանատվություն է դրված՝ որոշել, թե նրա յուրաքանչյուր անդամ որտեղ և երբ կարող է մասնակցել եկեղեցու ավետարանչական ծառայությանը: Յուրաքանչյուր ցանկացող իր տեղն ունի ծառայության մեջ: Գլխավորն այդ տեղը գտնելն է:

Այս շաբաթվա ընթացքում մենք ուսումնասիրելու ենք Աստծո դաշտում ավետարանչական աշխատողների՝ աշխատանքի մեջ նպատակասլաց կերպով ընդգրկվելու մեթոդները: Մենք նաև կիմանանք, թե

ինչպես է ծառայության մեջ առավելագույն թվով եկեղեցու անդամների ներգրավումը նպաստում ներդաշնակությանը համայնքում, նրա հոգևոր և թվային աճին:

Միաշաբթի ***մայիսի 27***

Բաշխված պատասխանատվություն

Եկեղեցու նվիրված ղեկավարներից շատերը չափազանց սահմանափակել և անգամ հողին են հավասարեցրել իրենց աշխատանքը՝ չցանկանալով ծառայության բեռը կիսել մյուսների հետ: Սա նոր խընդիր չէ, և այն է՛լ ավելի է խորացել մեր արագորեն առաջ ընթացող ժամանակակից աշխարհում: Անգամ այնպիսի հինկտակարանյան առաջնորդ, ինչպիսին Մովսեսն էր, օգնության կարիք ուներ: Մենք կարող ենք շատ բան սովորել նրա փորձառությունից, ինչպես նաև՝ օգտվել այն բարի խորհրդից, որ նրան տվեց իր աներ Հոթորը:

Ուշադիր կարդացե՛ք Ելից 18.13-26-ը: Ի՞նչ իմաստ ունեն «թո՛ղ նրանք» բառերը 22-րդ համարում: _____

_____

_____

Մենք կարող ենք միայն գուշակել, թե Մովսեսը որքան կկարողանար դիմանալ այդպիսի լարված աշխատանքային գրաֆիկին: Մենք նաև կարող ենք միայն ենթադրել՝ գիտե՞ր Մովսեսը, որ ժողովրդի մեջ կային մարդիկ, ովքեր ընդունակ էին օգնել իրեն: Բայց մի բան հաստատ գիտենք. շատերը գտնվեցին, ովքեր ընդունակ էին և ցանկանում էին ծառայել: Մովսեսին անհրաժեշտ էր նրանց թույլ տալ մասնակցել աշխատանքին՝ նրանց վերահանձնարարելով ղեկավարության ոլորտի որոշակի պարտականություններ: Վկայությունը և ավետարանչությունն այն ծառայությունն է, որը եկեղեցու ղեկավարները պետք է հաճույքով կիսեն եղբայրների ու քույրերի հետ: Ճիշտ տեղաբաշխված պատասխանատվության սկզբունքները, որոնք մենք սովորել ենք այս պատմությունից, անգին են հոգիների փրկության աշխատանքում:

Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ Մովսեսը մարդկանց առանձնահատուկ բնութագրերով ընտրեց (համար 21) և նրանց վրա տարբեր աստիճանի պատասխանատվություն դրեց: Այդ սկզբունքներն ինչպե՞ս են կիրառելի ժամանակակից եկեղեցիների ավետարանչական ռազմավարության մեջ: _____

_____

Հնարավոր է, որ Մովսեսն առանձնապես ակտիվ չէր իր պարտականությունների պատվիրակման մեջ՝ իր ծառայության յուրահատկության պատճառով: Նրա վրա ընկած էր Աստծո անունից խոսելու պատասխանատվությունը: Մենք նույնպես հսկայական պատասխանատվություն ենք զգում, երբ մարդկանց պատմում ենք Աստծո մասին: Վկայությունն ու ավետարանչությունը լուրջ աշխատանք է, չէ՞ որ խաղաթղթի վրա շատ մարդկանց հավիտենական կյանքն է դրված: Եվ թեև դա ստիպում է մեզ՝ ծառայությունը կատարել առանձնահատուկ ուշադրությամբ, մենք, միևնույնն է, պետք է բոլորին հրավիրենք մասնակցելու ավետմանն ու ավետարանչությանը:

Եվս մեկ անգամ կարդացե՛ք ելից 18.21,22-ը: Ուշադրություն դարձրեք, որ այդ նորանշանակ ղեկավարները կանչված էին ծառայելու «ամեն ժամանակ»: Մենք նույնպես պետք է միշտ պատրաստ լինենք հաշվետվություն ներկայացնել մեր հույսի մասին:

Երկուշաբթի ***մայիսի 28***

Ռիսկի դիմելով հանուն հաջողության

Ադվենտիստների եկեղեցու անդամներն օժտված են ծառայություն կատարելու հսկայական ներուժով: Շատերն այրվում են իրենց եկեղեցու ավետարանչական ծառայությանը մասնակցելու ցանկությամբ, սակայն ղեկավարները երբեմն առանց որևէ հատուկ ոգևորության են ընդունում այդպիսի ցանկությունը: Բացի «Դա կարող են անել միայն մասնագետները» դիրքորոշումից, գոյություն ունի նաև վախ, որ եկեղեցու այս կամ այն շարքային անդամը կարող է ինչ-որ բան սխալ անել կամ ասել՝ դրանով իսկ մարդկանց Քրիստոսից և Նրա եկեղեցուց հեռացնելով: Ցավալի է, սակայն երբեմն անմիջական մասնակցություն ցուցաբերելու այդպիսի վախը գերակայում է անգամ այնպիսի դեպքերում, երբ մարդիկ լավ նախապատրաստված են: Սուրբ Հոգին և Նրա խոստումը տարածվում են ոչ միայն օժտված ավետարանիչների, այլ նաև բոլոր նրանց վրա, ովքեր ցանկանում են իրենց նվիրել Տիրոջը, հրաժարվել սեփական «ես»-ից և աշխատել շրջապատող մարդկանց փրկության համար:

Հիսուսի քարոզած ո՞ր սկզբունքը (տե՛ս Մատթեոս 7.17,18) կարող է վերացնել անհանգստացած քրիստոնյաների վախերը: Ինչպե՞ս սովորել գտնել այս կամ այն ծառայության համար

անհրաժեշտ մարդկանց, և ինչպե՞ս են այդ գործընթացին օգնում եկեղեցու ղեկավարները և առաջնորդները: Ինչպե՞ս մենք կարող ենք անել դա՝ առանց դատելու որևէ մեկին: _____

_____

_____

Եթե առողջ ծառը լավ պտուղներ է բերում, եկեղեցու ղեկավարները պետք է կենտրոնանան «առողջ ծառեր» աճեցնելու վրա: Արձագանքելով ավետարանչական կոչին՝ մենք առաջին հերթին պետք է նվիրված լինենք Հիսուսին և միայն այդ դեպքում կկարողանանք հաջողությամբ աշխատել Նրա համար: Եթե մենք անհրաժեշտ ուշադրություն ենք տրամադրում մարդկանց՝ նրանց ուղղորդելով Հիսուսի հետ նշանակալի, խորացող փոխհարաբերությունների Սուրբ Հոգին հոգ կտանի, որպեսզի նրանք բարի պտուղ բերեն: Մեր գործն է՝ առաջնորդել, սովորեցնել և օգնել: Աստծո գործն է՝ օրհնել նրանց գործունեությունը: Մեզ անհրաժեշտ է վստահել նրանց և Աստծուն: Անհրաժեշտ ուշադրություն հատկացնելով մարդկանց հոգևոր աճին և գործնական հմտություններին՝ մենք կարող ենք վստահաբար հուսալ, որ այդ մարդիկ ավետարանչական հաջողության բարի պտուղ կբերեն: Իհարկե, միշտ ռիսկի տարր կա՝ կախված ձեռնարկվող ծառայությունից և նախապատրաստության աստիճանից, բայց մենք պետք է հիշենք, որ անգամ բոլոր ժամանակների մեծագույն Ուսուցչին լսած աշակերտներն ի վիճակի չէին փրկության բերել յուրաքանչյուրին, ում հանդիպում էին:

Դուք երբևէ զգացե՞լ եք, որ ձեր պարգևները և տաղանդները մնացել են չգնահատված: Ո՞րը կարող է լինել պատճառը: Վերլուծե՛ք ձեր կյանքը հնարավոր է, որ պատճառը հենց դուք եք, ձեր բնավորությունը, ոչ թե ինչ-որ այլ բան:

Երեքշաբթի ***մայիսի 29***

Աշխատողների համապատասխանությունը հունձքին

Երբ մարդիկ հետաքրքրություն են ցուցաբերում՝ ցանկանալով ավելին իմանալ Աստծո և Նրա եկեղեցու մասին, մենք պետք է լրջորեն մոտենանք նրանց ընտրությանը, ում պետք է հանձնարարվի այդ ավետարանչական աշխատանքը: Այն հասարակության մեջ, որտեղ տարբեր մշակույթներ գոյություն ունեն, մենք ճիշտ կվարվենք, եթե այդ

գործը հանձնարարենք նույն ազգության մարդուն, նույն լեզվի կրողին, որով խոսում է հետաքրքրվողը, և ցանկալի է, որ ուսուցիչը լինի աշակերտի հետ մոտավորապես նույն տարիքի: Ավելին, մենք պետք է հաշվի առնենք ուսուցչի հոգևոր հասունությունը, Աստվածաշնչի իմացությունը, շփվելու հմտությունը և ավետարանչական ծառայության փորձը: Այլ խոսքերով, անհրաժեշտ է լրջորեն մոտենալ այն բանին, որ ուսուցիչը և աշակերտը համապատասխանեն միմյանց: Երբ խոսքը վերաբերում է վկայությանն ու ավետարանչությանը, մենք չենք կարող հետևել սովորական մոտեցմանը: Յուրաքանչյուր մարդու կյանքը եզակի է, և յուրաքանչյուրի հոգևոր փորձառությունը նույնպես եզակի է: Սակայն, չնայած ողջ եզակիությանը, փորձառություններն ինչ-որ բանով նման են, և միանգամայն խելամիտ է ընդգծել քրիստոնյայի և հավատով հետաքրքրվողի փորձառությունների միջև եղած նմանությունը:

Կարդացե՛ք Գործք առաքելոց 6.1-8-ը: Ի՞նչ խնդիրներ են թվարկված հատվածում: Որո՞նք էին համապատասխան ընդունակությունների հետ որոշակի ծառայության համադրման արդյունքները: _____

_____

_____

Ուշադրություն դարձրեք իրադարձությունների հաջորդականությանը. առաքյալներին հայտնում են խնդրի մասին: Նրանք քրիստոնյաներին խնդրում են յոթ մարդ գտնել, ում վրա կարելի կլիներ դնել այդ հարցի լուծումը: Հավատացյալներն առաքյալներին են ներկայացնում ընտրված մարդկանց, իսկ առաքյալներն, իրենց հերթին, նրանց հանձնարարում են ծառայությունը՝ ձեռնադրելով նրանց: Արդյունքում «աշակերտների թիվը խիստ շատանում էր»: Թեև Ստեփանոսը և ծառայության նշանակված մյուս վեց եղբայրները պետք է «սեղանին ծառայեին», չի երևում, թե նրանց ծառայությունը սահմանափակվում էր միայն սնունդ պատրաստելով ու բաժանելով: Քրիստոնյաները Հոգով առաջնորդվող մարդիկ էին որոնում, քանի որ եկեղեցու ծառայությունը հունախոս այրիներին նույնպես վկայություն և ավետարանչություն էր: Այդպիսով, սարկավագներին ծառայության նշանակելը վճռորոշ նշանակություն ուներ վաղ եկեղեցու գործունեության համար, քանի որ նրանք ոչ միայն ազատում էին գլխավոր ավետարանիչներին, այլ նաև իրենք էլ եռանդագին աջակցում էին նրանց աշխատանքին (տե՛ս հմ. 8): Եվ կրկին մենք կարող ենք պնդել, որ ծառայություններից որին էլ մասնակցեն եկեղեցու անդամները, նրանք ուղղակիորեն կամ

անուղղակի կերպով մասնակցում են եկեղեցու վկայությանն ու ավետարանչությանը կամ աջակցում են այդ ծառայությանը:

Թեև եկեղեցում հաջող ծառայության համար անհրաժեշտ են բնատուր տաղանդները, հոգևոր պարգևները և հատուկ նախապատրաստությունը, այնուամենայնիվ, առավելագույն կարևորություն է ներկայացնում գործի հանդեպ անձնական վերաբերմունքը: Ուշադրություն դարձրեք, որ Գործք առաքելոց 16.1-5-ում և 4.36,37-ում ինչպես Տիմոթեոսը, այնպես էլ Բառնաբասը պատրաստ էին իրենց կողմից ամեն ինչ անել՝ աջակցելու ավետարանչական ծառայությանը: Բառնաբասը զոհաբերեց իր անձնական միջոցները, իսկ Տիմոթեոսը համաձայնեց թլփատվել՝ խուսափելու որոշ հրեա քրիստոնյաների հետ տարաձայնություններից: Մեզ համար դասերն ակներև են:

Հորեքշաբթի ***մայիսի 30***

Մասնակցությունը ծառայությանը և հոգևոր աճը

Հոգևոր աճը տեղի է ունենում այն դեպքում, երբ մենք կապ ենք պահպանում Հիսուսի հետ: Այդ աճը չի կարող ապահովվել ինչ-որ խնդիրների լուծմամբ, անգամ այնպիսի կարևոր խնդիրների, ինչպես վկայությունն ու ավետարանչությունն են: Եկեղեցին չի կարող «ծրագրավորել» իր անդամների հոգևոր աճը: Սակայն, երբ քրիստոնյաներն արձագանքում են Աստծո աշակերտները լինելու Նրա կոչին, նրանց անձնական փոխհարաբերությունները Տիրոջ հետ խորանում և ամրապնդվում են:

Թեև մենք չպետք է զբաղվենք վկայությամբ և ավետարանչությամբ միայն հանուն հոգևոր աճի, սակայն, մասնակցելով այդ ծառայությանը և իսկական սեր զգալով Աստծո և կործանվող մարդկանց հանդեպ՝ մենք բազում հոգևոր օրհնություններ ենք ստանում:

Կարդացե՛ք Հովհաննես 7.17-ը: Այդ համարն ի՞նչ է հաղորդում մեզ Աստծո կամքի կատարման և հոգևոր աճի մասին:

Օրինաչափ հարց է ծագում. «Ինչպե՞ս ճշմարտությունը փնտրող մարդը կարող է վստահ լինել, որ իսկապես գտել է այն»: 17-րդ համարում Հիսուսը ներկայացնում է մի սկզբունք, որը բոլոր ցանկացողներին կօգնի հետևել Իրեն: Աստծո կամքը կատարել ցանկացողները կկարողանան իմանալ՝ արդյոք Աստծո՞ւց է այս կամ այն ուսմունքը, թե՞ ոչ: Ինչպե՞ս դա կարող է տեղի ունենալ: Անկասկած, այստեղ խոսքը Քրիստոսի հետ կապի շնորհիվ հոգևոր աճի մասին է: Հիսուսը խոստանում է, որ մարդիկ,

ովքեր ապրում են իրենց բացված աստվածաշնչյան ճշմարտության համաձայն, է՛լ ավելի մեծ լույս կստանան: Լսելու և կատարելու միջև ուղղակի փոխադարձ կապ գոյություն ունի (Հայտնություն 1.3): Աստծո կամքը կատարողները, անգամ եթե նրանց չափազանց քիչ է բացված, կօրհնվեն խորը քրիստոնեական փոխհարաբերություններով, որոնք, Աստվածաշունչն աղոթքով ուսումնասիրելուն զուգահեռ, կբերեն ճշմարտության խոշոր հայտնությունների և, հետևաբար, հոգևոր աճի:

Կարդացե՛ք Հովհաննես 4.36-ը: Ի՞նչ հոգևոր պարգև է սպասվում բոլորին, ովքեր աշխատում են հանուն հոգիների փրկության: Սերմողի և հնձողի փոխհարաբերությունների մասին ի՞նչ է ասում այն փաստը, որ նրանք միասին են ուրախանում:

Աշակերտները չպետք է սպասվող բերքը համարեն միայն իրենց սեփական ջանքերի արդյունքը: Նրանք աշխատանքը կիսել են այլ մարդկանց հետ: Նրանք դարձել են Քրիստոսի և հին ժամանակների սուրբ այրերի աշխատակիցները: Սամարացի կինը ավետարանչական սերմեր է ցանել իր քաղաքի մարդկանց մեջ:

Հավանաբար, նրանք միասին շատ ուրախացան, երբ հասունացած հոգևոր բերքը հավաքվեց ամբարի մեջ: Համատեղ վկայության և ավետարանչության հաջողությունը ամրապնդում է Աստծո և մեր միջև, ինչպես նաև մեր՝ որպես եղբայրների և հավատակիցների միջև կապը: Երբ մենք արձագանքում ենք հանուն հոգիների փրկության Աստծո հրավերին, այդ կապը, այդ հոգևոր մտերմությունը և հոգևոր աճը ծաղկում են որպես Աստծո թիմի մեջ լինելու բնական արդյունք:

Ինչպե՞ս է ամրապնդվել ձեր հավատը ձեր իսկ անձնական վկայության շնորհիվ: Ինչպե՞ս է վկայությունն անդրադառնում Տիրոջ հետ ձեր փոխհարաբերությունների վրա:

Հինգշաբթի *մայիսի 31*

Մասնակցությունը ծառայությանը և փոխհամաձայնության նվաճումը

Մի հետաքրքիր երևույթ գոյություն ունի, որը կարելի է բնութագրել որպես «շրջանային ազդեցություն» (այսինքն՝ ազդեցությունը շրջանագծով): Համաձայնության և մասնակցության համատեքստում այդ երևույթը դրսևորվում է հետևյալ կերպ. մարդկանց ներգրավելով ծառայության մեջ՝ դուք նպաստում եք համաձայնության ի հայտ գալուն, որը նրանց դրդում է մասնակցել ծառայությանը, ինչն իր հերթին նպաստում

է է՛լ ավելի մեծ համաձայնության: Դուք կարող եք տեսնել և զգալ այդ փոխադարձ ազդեցությունը: Այստեղ տեղին է մեջբերել հնագույն դիպուկ ասացվածքը. «Թիավարողը ժամանակ չունի ճոճել նավակը»:

Վաղ եկեղեցու կազմակերպության զարգացման նպատակով ընդունվել են որոշումներ, որոնք, ինչպես մտածում են ոմանք, կարող էին տարաձայնությունների և հակամարտությունների առիթ դառնալ, սակայն տվյալ դեպքում քրիստոնյաների անձնական նախապատվությունները ենթարկվում էին այն բանին, ինչն ավելի շատ էր նպաստում Տիրոջ հանձնարարության կատարմանը:

Խորհե՛ք ծառայության նշանակվելու կարևոր գործընթացի մասին, որը նկարագրված է Գործք առաքելոց 1.15-26-ում: Ի՞նչ հիմնական նպատակներ էին հետապնդում աշակերտները: Թեև այսօր մենք վիճակ չենք նետում, մեր ծառայության համար օգտակար ի՞նչ սկզբունքներ կարող ենք քաղել նրանց օրինակից:

_____

_____

_____

Իհարկե, երբ մարդիկ աշխատում են միասին, միշտ հակամարտության ծագման վտանգ կա: Մենք գիտենք, որ հակառակորդն անում է ամեն բան՝ նվազեցնելու քրիստոնյաների ակտիվությունը: Եվ այժմ մենք մի դեպք կդիտարկենք վաղ եկեղեցու ավետարանչական ծառայությունից, որտեղ իսկապես հակասություն գոյություն ուներ:

Ուսումնասիրե՛ք Գործք առաքելոց 15.36-40-ը: Ի՞նչը տարաձայնության պատճառ հանդիսացավ Պողոսի և Բառնաբասի միջև: Ինչի՞ հանգեցրեց նրանց անհամաձայնությունը, և մենք ի՞նչ կարող ենք սովորել այս դեպքից:

Նախորդ ավետարանչական ուղևորության ժամանակ պատանի Մարկոսը, թողնելով Պողոսին և նրա ընկերներին, վերադարձավ Երուսաղեմ: Հենց այդ դեպքը (Գործք առաքելոց 13.13) պատճառ դարձավ, որ Պողոսը չցանկացավ Մարկոսին իր հետ վերցնել հերթական ուղևորությանը: Բայց Բառնաբասը տեսնում էր, որ ինչպես իր՝ Մարկոսի, այնպես էլ ավետարանչական ուղևորության համար օգտակար կլինի պատանուն վերցնել իրենց հետ: Արդյունքում Պողոսն իրեն գործընկեր ընտրեց Շիղային, իսկ Բառնաբասն ուղևորվեց Մարկոսի հետ:

Առաքյալները չէին վիճում այն մասին, թե ինչպիսի ավետարանչական աշխատանք է անհրաժեշտ կատարել, և անձնային տարբերությունները չմթագնեցին նրանց ծառայությունը: Ավետարանիչների երկու խումբ կազմեցին: Հետագայում Պողոսն ու Մարկոսը շա-

րունակեցին արգասավոր համագործակցությունը (Բ Տիմոթեոս 4.11), և նրանց տարբերությունները խոչընդոտ չդարձան նրանց առաքելության ճանապարհին:

Մտածե՛ք մարդու մասին, ում հետ եկեղեցում դուք, հնարավոր է, բախում ունեք: Որքա՞ն խոնարհություն, սեփական «ես»-ից հրաժարում, ներելու և մյուս երեսը մոտեցնելու ցանկություն պետք կլինի ձեզ՝ հաշտության հասնելու համար:

Ուրբաթ ***հունիսի 1***

Հետագա ուսումնասիրության համար

Ծառայության խելամիտ ժամանակային շրջանակների որոշումը:

Ինչպես նշվել է անցյալ շաբաթվա «Հետագա ուսումնասիրության համար» բաժնում, տասներկու ամիսը ծրագրման համար լավ ժամանակահատված է: Կախված այն բանից, թե վկայության և ավետարանչության ինչ ծրագիր եք դուք նախատեսում, որոշակի ժամանակային շրջանակները կտատանվեն՝ կախված տարբեր նպատակային ռազմավարությունից և գերակայություններից: Սակայն անհրաժեշտ է անել հետևյալը.

Գրի առեք, թե ինչ նպատակների եք դուք մտադիր հասնել տասներկու ամսվա ընթացքում: Հստակ նշե՛ք այն մարդկանց ցանկալի թիվը, ում դուք ուզում եք բերել դեպի փրկություն կամ ներգրավել ուսուցման ծրագրերում, ոչ թե ծրագրվող ծրագրերի քանակը:

Հստակ ժամանակացույց կազմեք՝ նշելով բոլոր միջոցառումների անցկացման կոնկրետ ժամանակը: Այն կարող է այնքան մանրամասն լինել, որքան դուք կցանկանաք, բայց ջանացեք, որ այն պարզապես ընդհանուր չլինի: Այստեղ անհրաժեշտ է նշել ուսուցանող սեմինարների անցկացման ժամկետները, ծրագրի սկսվելու և ավարտվելու ամսաթվերը, արդյունքների գնահատման ժամկետները:

Ամրագրելով ծրագրի հիմնական փուլերը՝ հստակորեն նշեք, թե ով և ծրագրի որ մասի համար է պատասխանատու (կարող են լինել ինչպես առանձին մարդիկ, այնպես էլ մարդկանց խմբեր):

Գրանցե՛ք, թե ինչպես է ձեր ծրագրի ռազմավարությունը համադրվում եկեղեցու ընդհանուր ավետարանչական ծրագրի հետ: Հստակ կերպով նշեք, թե որտեղ և ինչպես են մյուս եկեղեցական ծրագրերը աջակցելու ձեր ծրագրին, և որտեղ ձեր ծրագիրը պետք է նպաստի մյուս եկեղեցական ծրագրերի ամրապնդմանը: Դա կօգնի ձեզ հասկանալ, որ

դուք մեծ թիմի մի մասն եք, և նաև գիտակցել համատեղ աշխատանքի անհրաժեշտությունը:

Լրջորեն խորհեք, թե ձեր ծրագիրը կլինի՞ մշապես գործող և կկրկնվի՞ հաջորդ տարի: Դա կօգնի ձեզ որոշել, թե ում և ինչպես է անհրաժեշտ նախապատրաստել: Եթե ձեր ծրագիրն իրենից զարգացող ծառայություն է ներկայացնում, անհրաժեշտ է կանխավ ծրագրել ծրագրի յուրաքանչյուր փուլի արդյունքների գնահատման ժամանակը:

Հարցեր քննարկման համար

1. Ներքոհիշյալ մեջբերումները հաղորդում են այն մասին, որ Աստված պտուղ է սպասում յուրաքանչյուր քրիստոնյայից և աշխատանք է նախատեսել յուրաքանչյուրի համար: Ի՞նչ եք կարծում, ի՞նչ է Աստված Իր եկեղեցուց սպասում անդամների նախապատրաստության և նրանց վկայության ու ավետարանչության մեջ ներգրավելու ոլորտում: Ի՞նչ կարող է անել եկեղեցին՝ իր անդամներին օգնելու հասկանալ Աստծո սպասումները:
2. «Բոլոր նրանցից, ում Աստված վստահել է մեր ժամանակի ճշմարտությունը, Նա անձնական ծառայություն է սպասում: Բոլորը չէ, որ կարող են իբրև ավետարանիչներ ուղևորվել այլ երկրներ, բայց յուրաքանչյուրն ի վիճակի է ավետարանել իր հայրենակիցների մեջ՝ տանը և հարևանների շրջապատում» (Է. Ուայթ, Վկայություններ եկեղեցու համար, հտ. 9, էջ 30):
3. «Յուրաքանչյուրին, ով Նրա շնորհի մասնակիցն է դառնում, Տերը հանձնարարում է որոշակի աշխատանք կատարել հօգուտ ուրիշների: Մեզանից ամեն մեկը պետք է պատասխանատվություն զգա հանձնարարության համար՝ ասելով՝ «Ահա ես, ինձ ուղարկիր»» (Է. Ուայթ, Նահապետներ և մարգարեներ, 222):

ՊԱՏԱՍԽԱՆ ՍԵՐ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Ա Հովհաննես 4.18,19, Հռոմեացիս 3.19,20, Հովհաննես 15.13, Հռոմեացիս 5.6-8, Հովհաննես 6.28,29:

Հիշելու համարը.

«Եթե ինձ սիրում եք, իմ պատվիրանները պահեցեք» (Հովհաննես 14.15):

Հիմնական միտքը.

Մենք պետք է աշխատենք հոգիներ բերել Քրիստոսի մոտ: Մենք պետք է մշտապես հարցնենք մեզ. «Ի՞նչն է ինձ դրդում դա անել»:

Թեև մեր հիշելու համարում ավելի հաճախ տեսնում են տասը պատվիրանների հիշատակում, նաև այլ հրահանգ-պատվիրաններ գոյություն ունեն, որոնք նույնքան կարևոր են: Դրանցից մեկը հետևյալն է «Ուրեմն գնացեք, բոլոր ազգերը աշակերտեցեք» (Մատթեոս 28.19,20):

Մեր վկայության և ավետարանչության դրդապատճառը պետք է լինի մեր հանդեպ դրսևորված Աստծո շնորհը, ոչ թե մեղքի զգացումը, պարտավորվածությունը կամ պարտքը: Պարտադիր չէ, որ մարդը հոգեբան լինի՝ իմանալու համար, որ մեր կատարածի մեծագույն մասը ինչ-որ բանի արձագանքն է: Նույնը կարելի է ասել նաև վկայությանը և ավետարանչությանը մեր մասնակցության մասին: Մենք կարող ենք իմանալ մեր դրդապատճառները՝ պարզապես հարցնելով ինքներս մեզ, թե ինչու ենք անում այս կամ այն բանը:

Այս շաբաթվա ընթացքում մենք կհետազոտենք Աստծո գործին մասնակցության ճիշտ դրդապատճառները, ինչպես նաև կտեսնենք այնպիսի սխալ դրդապատճառների վտանգները, ինչպիսին պարտականությունը, մեղքը կամ ամոթն են: Մենք գիտենք, թե ինչու ավետարանչությունն ու վկայությունը պետք է մեր արձագանքը լինեն փրկության Աստծո պարգևին:

Սիրուց դրդված

Երբևէ ձեզ հարց տվե՞լ եք, թե ինչու է այդքան բարդ մարդկանց դրդելը՝ իրենց նվիրաբերելու երկարաժամկետ ծառայության: Հնարավոր է, որ գտնենք պատասխանը, եթե քննարկենք ինքնազոհողության օրինակները, որոնցում շահադրդման և նվիրաբերման բարձր աստիճան կա: Ի՞նչն է դրդում, օրինակ, ծնողին՝ իր երիկամը տալ հանուն իր երեխայի կյանքի փրկության: Ինչո՞ւ են հայրերն ու մայրերը մի ամբողջ կարողություն ծախսում՝ իրենց երեխաներին լավագույն կրթություն տալու համար: Այդ ամենն արվումն է նրա համար, որ ծնողները հակառակ դեպքում մեղքի զգացո՞ւմ կունենան: Նրանք մտածո՞ւմ են, որ իրենց պարտքն է՝ երեխաներին տալ այդ ամենը: Իհարկե, ո՛չ:

Թեև ծնողներն իսկապես պատասխանատվության զգացում են ունենում իրենց երեխաների բարեկեցության համար, սակայն, իհարկե, հիմնական դրդապատճառը սերն է: Նրանք ամեն բան անում են իրենց երեխաների համար, որովհետև սիրում են: Նորից ու նորից կրկնենք՝ մենք ինչ-որ բան ենք անում Աստծո համար, քանի որ սիրում ենք Նրան և գիտենք, որ Նա սիրում է մեզ:

Կարդացե՛ք Ա Հովհաննես 4.18,19-ը: Ինչի՞ մասին է խոսվում այդ համարներում: Դրանց բովանդակությունը փոխանցե՛ք ձեր բառերով: _____

Աստծո հանդեպ մեր սերը պետք է հիմնվի մեր հանդեպ Նրա սիրո վրա: Աստված էր մեզանից առաջ, և սիրեց մեզ մարդկության ստեղծման հենց սկզբից: Սերը կարող է ծնվել միայն որպես սիրո արդյունք և սիրո արձագանք: Հնազանդությունը ավետարանական մեծագույն հանձնարարությանը որևէ այլ պատճառով, բացի մեր սիրուց, ունայն է: Այդ պատճառով հոգևոր պատրաստությունը ծայրաստիճան կարևոր է, երբ մենք ձգտում ենք մասնակցել վկայությանը և ավետարանչությանը:

Աստծո հանդեպ մեր սերը և հոգիների փրկության գործում Նրա հետ աշխատելու ցանկությունը կախված են նրանից, թե որքանով ենք մենք ճանաչում Նրան: Որպես կանոն, մենք չենք կարող սիրել մարդկանց, ում չենք ճանաչում: Այդ պատճառով, Աստծուն սիրուց հնազանդվելու համար անհրաժեշտ է անձամբ ճանաչել Նրան:

Ստորև բերված համարներն ի՞նչ են ասում Աստծո հանդեպ սիրո, Նրան հնազանդվելու և ծառայելու ձգտման մասին: Հեսու 22.5, Ղուկաս 7.41-43, Հովհաննես 14.23, Բ Կորնթացիս 5.12-18: _____

Սերը և հնազանդությունը անբաժանելի են այնքան ժամանակ, քանի դեռ ընթանում են հենց այդ կարգով: Աստծո հանդեպ ճշմարիտ սերը միշտ տանում է հնազանդության Նրա կամքին, բայց հնազանդությունը պարտադիր չէ, որ հանգեցնի սիրո (թեև կարող է): Եթե մենք ուզում ենք, որ մարդիկ աշխատեն Հիսուսի համար, պետք է օգնենք նրանց սիրով լի փոխհարաբերություններ կառուցել Նրա հետ:

Որքանո՞վ է Աստծո հանդեպ սերը պատճառաբանում ձեր գործողությունները: Այն ձեզ համար առհասարակ դրդապատճա՞ռ է: Ձեր պատասխանն ի՞նչ է ասում Նրա հետ ձեր փոխհարաբերությունների մասին և ի՞նչ փոփոխությունների է կոչում:

Երկուշաբթի ***հունիսի 4***

Ոչ մեղքի զգացումից

Դարեր շարունակ մեղքն օգտագործվել է, որպեսզի մարդկանց դրդի գործողությունների: Հոգևոր ուսուցիչները հաճախ են մեզ հիշեցնում այն մասին, որ Աստված մեզ վրա պատասխանատվություն է դրել, և մենք պետք է օգտագործենք Նրա վստահած տաղանդներն ու ընդունակությունները: Մեզ ասում են, որ Աստված և եկեղեցին հուսացած են մեզ վրա: Եթե Աստված այդքան շատ բան է արել մեզ փրկելու համար, մենք ինչպե՞ս կարող ենք պասիվ մնալ Ավետարանի քարոզի հարցում: Մեզ գործողությունների կոչելու այդ բոլոր փորձերը, որոնք ձեռնարկվում են, անկասկած, լավագույն մտադրություններից ելնելով, նրբորեն հիմնվում են մեր մեղքի զգացողության և Աստծո առջև պարտքի զգացման վրա: Շահադրդումը ամենից հաճախ հանգեցնում է հակառակ արդյունքների, երբ շեշտը Աստծո արածից փոխադրում ենք մեր անելիքի վրա:

Կարդացե՛ք Հռոմեացիս 3.19,20-ը: Ի՞նչ նկատի ուներ Պողոս առաքյալը, երբ ասումն էր, որ ողջ աշխարհը մեղավոր է Աստծո առջև: Ի՞նչ էր նա ցանկանում ընդգծել:

Այն, թե ինչպես է Պողոսն այդ հատվածում օգտագործում «մեղք» բառը, փոխանցում է պատասխանատվության զգացումը: Հռոմեացիս 3.10-ում նա արդեն հայտարարել էր, որ «արդար չկա՝ մեկն էլ չկա», և 19-րդ համարում հաստատում է, որ օրենքը «ողջ աշխարհը» մեղավոր է դարձնում Աստծո առջև:

Օրենքի դերը հաճախ համեմատվում է հայելու դերի հետ, որն արտացոլում է մեր մեղավոր վիճակը, բայց մեղքերից մաքրելու զորություն չունի: Նայելով Աստծո օրենքին՝ մենք սկսում ենք գիտակցել մեր մեղավորությունը, և դա մեզ ուղղորդում է դեպի Փրկիչը, որպեսզի մենք կարողանանք ստանալ Նրա անհատույց ներումն ու մաքրագործումը:

Գալով Քրիստոսի մոտ՝ մենք արդեն դրդված չենք մեղքի զգացմամբ, քանի որ մեղքը լվացվել և ծածկվել է Նրա արդարությամբ: Մենք Նրանում կատարյալ ենք, անմեղ և ներված: Այո, մենք մեղավորներ ենք, բայց ներվել ենք, մեր մեղքը փրկագնված է: Այժմ, հիմնվելով փրկության վրա, որը պատկանում է մեզ Քրիստոսի միջոցով, մենք ջանում ենք շրջապատողներին վկայել այն մասին, ինչ Նա արել է մեզ համար:

Կարդացե՛ք Հակոբոս 2.10-ը: Ի՞նչ է ցանկանում ընդգծել Հակոբոսը: Դուք այդ համարն ինչպե՞ս կբացատրեիք նորադարձին:

Այն փաստը, որ մի պատվիրանի խախտումը մարդուն մեղավոր է դարձնում նրանում, որ նա մարտահրավեր է նետում Աստծուն, ով հրամայել է պահել ողջ օրենքը, ընդգծում է Աստծո օրհնությունը օրենքը պահելու միջոցով ձեռք բերելու փորձերի ունայնությունը: Օրենքի խախտումը, անգամ ամենաանշանը, բացահայտում է ավելի շատ սեփական կամքին, քան թե Աստծո կամքին հետևելու ցանկությունը:

Գիտակցելով սեփական թերությունները՝ դուք պետք է դրանք դնեք Հիսուսի ոտքերի մոտ՝ հիմնվելով Նրա արդարության, ներման ու շնորհի վրա՝ չնայելով սեփական անարժանությանը: Մենք հաճախ առավել անարժան ենք գտնվում, քան մեզ թվում է: Եթե մենք արժանի լինեինք, ապա փրկությունը ձեռք կբերեինք ոչ թե շնորհով, այլ պարտքից ելնելով: Մի՞թե դուք իսկապես կարծում եք, որ Աստված ինչ-որ բան է ձեզ պարտք (Հռոմեացիա 4.1-4):

Երեքշաբթի ***հունիսի 5***

Ծառայել ձգտողները

Դուք ի՞նչ կմտածեիք մարդկանց մասին, ովքեր մշտապես հայտարարում են ինչ-որ բան անելու սեփական ձգտման մասին, բայց, միևնույն ժամանակ, ոչ մի փորձ չեն ձեռնարկում: Ի՞նչ կարելի է ասել մարդկանց մասին, ովքեր հայտարարում են իրենց մեծ նվիրվածության մասին, բայց երբեք չեն պատմում, թե ում կամ ինչին են իրենք նվիրված: Ինչպես մենք տեսնում ենք, սերը ամենահզոր շահադրդումն

է, սակայն միայն սիրո, անգամ Աստծո սիրո մասին խոսելը բավական չէ, անհրաժեշտ է գործել այդ սիրուն համապատասխան: Այլ խոսքերով, մենք սպասում ենք, որ սերը դրսևորվի գործողության մեջ: Այս իմաստով սերը ակտիվ սկզբունք է, քանի որ ի հայտ է գալիս սիրո գործերի մեջ:

Կարդացե՛ք Հովհաննես 15.13-ը և Հռոմեացիս 5.6-8-ը: Այդ համարներն ինչպե՞ս են մեզ բացահայտում Հիսուսի արարքների մեջ դրսևորված սերը: Մենք ինչպե՞ս կարող ենք կիրառել այստեղ բացահայտված սկզբունքը մեր առօրյա կյանքում:

Մեր հրաշալի Փրկիչը կանխամտածված կերպով և Իր սեփական կամքով Իր կյանքը տվեց մեր հանդեպ անսահման սիրո պատճառով: Դա մեծագույն օրինակն է, թե ինչպես սիրողը դրդվում է գործել հօգուտ իր սիրելիների: Ի՞նչ տեղի կունենար, եթե Հիսուսը հայտարարեր մեր հանդեպ Իր սիրո մասին և մնար երկնքում: Իսկ եթե Նա խոսեր Իր սիրո մասին, բայց մեզ չթողնե՞ր ոչ մի խոստում, հոգ չտանե՞ր մեր մասին:

Կարդացե՛ք Հովհաննես 14.21-ը: Այս համարն ի՞նչ է ասում մեզ գործողության մեջ սիրո մասին՝ ինչպես Հիսուսի, այնպես էլ՝ մեր:

Մենք այստեղ պարզապես չենք խոսում սիրո մասին, մենք խոսում ենք սիրո վրա կառուցված փոխհարաբերությունների մասին: Գլխավոր դրդապատճառը ցանկացած այդպիսի փոխհարաբերության մեջ հաճելի բան անելու ցանկությունն է նրա համար, ում մենք սիրում ենք: Հիսուսի կողմից մեզ պարգևված փրկությունը շահադրդված էր միայն մարդկանց հանդեպ Նրա սիրով, ովքեր խզել էին Աստծո հետ իրենց կապը: Ամենը, ինչ մենք անում ենք Աստծո համար՝ ելնելով որևէ այլ դրդապատճառներից, ենթադրում է, որ մենք իրականում չենք հասկանում, թե ինչ է նշանակում Աստծո հետ սիրո վրա հիմնված փոխհարաբերությունը: Աստված չի ցանկանում, որ մենք վկայությանն ու ավետարանչությանը մասնակցենք միայն պարտքի զգացումից: Նա փափագում է, որպեսզի մենք Իր հետ այնպիսի կապ ունենանք, որը մեզ կդրդեր անել Իրեն հաճո եղածը և ներդաշնակության մեջ գտնվել Իր կամքի հետ: Աստված ցանկանում է, որ մենք սիրենք Իրեն այնպես, որ կարողանանք հասնել մարդկանց, ում սիրում է Նա:

Մենք ինչպե՞ս կարող ենք վստահ լինել, որ Աստծո համար աշխատում ենք ճիշտ դրդապատճառներից ելնելով: Մենք կարո՞ղ ենք օրհնություն լինել շրջապատողների համար, եթե մեր գործողություններում ղեկավարվում ենք սխալ դրդապատճառներով: Եթե այո, ապա ինչպե՞ս: Կարո՞ղ են սխալ պատճառներով կա-

տարված արարքները լավը լինել: Ձեր մտքերով կիսվե՛ք շաբաթ-օրյա դպրոցի դասի ժամանակ և քննարկե՛ք դրանք:

Չորեքշաբթի *հունիսի 6*

Օրինամոլության թակարդը

Բոլորին հայտնի է «Ձրի պանիր միայն մկան թակարդում է լինում» արտահայտությունը: Գաղափարն այսպիսին է. եթե դուք ինչ-որ բան ստացել եք ձրի, իրականում դա անվճար չէ, որովհետև ինչ-որ տեղ, ինչ-որ կերպ, երբևէ ստիպված կլինեք վճարել դրա դիմաց կամ էլ ինչ-որ կերպ փոխհատուցել պարտքը: Այն տեսությունը, որ ոչինչ և երբեք հենց այնպես, անհատույց չի տրվում, այնքան է ներթափանցել քրիստոնեական մտածողության մեջ, որ շատերը փորձում են փրկության արժանանալ Աստծո կամքին հնազանդվելով:

«Օրինամոլություն» հասկացությունը քրիստոնեական բառապաշարում արտացոլում է այն մարդկանց դիրքորոշումը, ովքեր հավատում են, որ Աստծո կամքին իրենց հնազանդությունը Նրա համար հիմք կծառայի՝ Աստծո աչքերում իրենց արդարացնելու համար: Իհարկե, թեև Աստծո շնորհը չի ժխտում Նրա՝ մեզ հնազանդ տեսնելու ցանկությունը, փրկությունը հիմնված է բացառապես այդ շնորհի և ուրիշ ոչ մի բանի վրա, բացարձակապես ոչ մի բանի վրա այն ամենից, ինչ մենք կարող էինք անել:

Բերված համարներն ի՞նչ են ասում փրկության էության սխալ ըմբռնման մասին, որն այնքան տարածված է շատ մարդկանց գիտակցության մեջ: Մենք ինչպե՞ս կարող ենք նման մտածողության թակարդի մեջ ընկնել: Ինչո՞ւ է այդքան հեշտ այդ ծանապարհին սայթաքելը:

Հռոմեացիս 10.1-4 _____

Հռոմեացիս 11.5,6 _____

Գաղատացիս 2.16 _____

Օրինամոլական կրոնը մարդուն ստիպում է կենտրոնանալ ավելի շուտ սեփական գործերի (իսկ հաճախ՝ նաև շրջապատողների գործերի) վրա, քան ավետարանական հանձնարարության վրա: Օրինամոլական դիրքորոշումը կարող է հանգեցնել հպարտության և գոռոզության՝ նրանց կողմից, ովքեր այնքան կուրացած են, որ իրենց համարում են բավականաչափ սուրբ՝ փրկված լինելու համար: Կամ էլ (որ նույնքան վատ է, որքան և նախորդը) օրինամոլական դիրքորոշումը կարող է

հիասթափության և հուսահատության տանել նրանց, ովքեր գիտակցում են, թե իրենք որքան հեռու են աստվածային չափանիշից: Բոլոր դեպքերում, անհրաժեշտ է խուսափել այդ թակարդից, հատկապես՝ մեր եկեղեցում, որի ուսմունքի անբաժանելի մասը Աստծո բոլոր տասը պատվիրաններին հնազանդությունն է:

Կարդացե՛ք Հովհաննես 6.28,29-ը: Այս համարներում Հիսուսն ինչպե՞ս է բացահայտել հավատով փրկության ճշմարտությունը: Ի՞նչ է նշանակում հավատալ «նրան, որին նա ուղարկեց»: Հավատն ինչպե՞ս պետք է դրսևորվի մեր կյանքում: Իսկ այդ հավատն ինչպե՞ս է ի հայտ գալիս այն ժամանակ, երբ մեզ ոչ ոք չի տեսնում:

Հինգշաբթի ***հունիսի 7***

Ազատագրված՝ ծառա լինելու համար

Աստվածաշունչը հստակ կերպով ասում է, որ ժամանակին մենք մեղքի ստրուկներն էինք, բայց Քրիստոսի շնորհիվ ստացանք ազատագրում (Հռոմեացիս 6.6, Գաղատացիս 5.1), փրկություն (Ա Թեսաղոնիկեցիս 1.10), որդեգրում (Հռոմեացիս 8.15) և վերածնունդ (Ա Պետրոս 1.23):

Աստծո հաջողակ աշխատողը նա է, ով Նրան է տվել իր անցյալը և ընդունել է Նրա զորությունը, որպեսզի աշխատի ներկայում և ապագայում: Այլ խոսքերով՝ Քրիստոսով ազատագրվածներ կարող են լինել Նրա ծառաները: Եթե մենք չենք հասկանում այս ճշմարտությունը, մեզ կարող է տարօրինակ թվալ, որ ազատագրումը տանում է դեպի գերություն: Սակայն դա նույնքան ճիշտ է, որքան և՝ «հոգևորապես լեցուն լինելու համար անհրաժեշտ է մշտապես դատարկել ինքդ քեզ» և «դեպի հաղթանակ տանում է միայն լիակատար կապիտուլյացիան» սկզբունքները:

Կարդացե՛ք Փիլիպպեցիս 1.1, Հակոբոս 1.1 և Բ Պետրոս 1.1-ը: Ի՞նչ նկատի ունեին Պողոսը, Տիմոթեոսը, Հակոբոսը և Պետրոսը, երբ ասում էին, որ Աստծո և Հիսուս Քրիստոսի ծառաներն են: Մենք ինչպե՞ս պետք է հասկանանք այդ միտքը: _____

_____

_____

Սովորաբար ծառաները կամ ստրուկները պատկանում էին իրենց տիրոջը, և այդ տերը նրանց հարկադրում էր աշխատել: Բայց քրիս-

տոնական ըմբռնմամբ աշխատանքը Տիրոջ համար ազատ ընտրություն է: Աստված չափազանց շատ է սիրում մեզ, որպեսզի ստիպի: Երբ Տիմոթեոսը, Հակոբոսը և Պետրոսը խոսում էին այս մասին, նրանք նշում էին իրենց լիակատար միաբանությունը Քրիստոսի և Նրա գործի հետ: Նրանք բացահայտորեն հայտարարում էին Նրան՝ որպես իրենց Տիրոջը ծառայելու մասին: Նրանք հրաժարվում էին իրենց «ես»-ից, որպեսզի ուրիշները կարողանան նայել միայն Հիսուսին: Ստրկության այդպիսի պատկերման մեջ մենք տեսնում ենք նվիրված հետևորդներին, ովքեր հաստատում են իրենց հավատարմությունը և նվիրվածությունը անշահախնդիր ծառայության մեջ:

Կարդացե՛ք Հովհաննես 8.34-36-ը: Այս համարներն ի՞նչ ենք հաղորդում մեզ մեղքի ստրկության և ազատագրման ճանապարհի մասին: _____

_____

Հիսուսի ունկնդիրները լավ գիտեին, որ ստրուկներն անպաշտպան էին: Իրենք տիրոջ քմահաճույքով նրանց կարող էին վաճառել, այն դեպքում, երբ տիրոջ որդին միշտ գտնվում էր անվտանգության մեջ՝ տանը, ընտանիքի մյուս անդամների հետ մեկտեղ: Հիսուսն օգտագործեց ստրկության՝ այն ժամանակ նշանակալի պրակտիկան, որպեսզի մի կարևոր հոգևոր ճշմարտություն փոխանցի: Եթե Աստծո Որդին հոգևորապես ազատագրի ձեզ մեղքի ստրկությունից, ապա դուք իսկապես ազատ կլինեք: Տառացիորեն ազատագրված ստրուկները հազիվ թե կրկին ցանկանային իրենց հանձնել ստրկության, բայց հոգևոր իմաստով, երբ մենք ազատություն ենք ստանում մեղքի ստրկությունից և դառնում ենք Քրիստոսի ծառաները, հենց դա էլ տեղի է ունենում (Հռոմեացիս 6.17,18): Եթե մենք ազատ ենք այն բանից, ինչը մեզ ստիպում է նայել ինքներս մեզ, մենք կարող ենք ազատորեն նայել շրջապատողներին և այն ամենին, ինչ մենք ունենք՝ նրանց օգուտ տալու նպատակով: Դրանում է թաքնված ծառայությանը նվիրված կյանքի բանալին:

Ուրբաթ ***հուլիսի 8***

Հետագա ուսումնասիրության համար

Հետևելով տրված ուղղությանը:

Ցանկացած լավ մեքենա, ի վերջո, կփչանա, եթե նրա համար չապահովվի ճիշտ խնամք և կանոնավոր տեխնիկական սպասարկում:

Ճիշտ այդպես էլ շատ լավ եկեղեցական նախագծեր ավարտի չեն հասցվել կանոնավոր, նպատակաուղղված աջակցության բացակայության պատճառով:

Եթե դուք ցանկանում եք ձեր ծառայությունը պահպանել պատշաճ մակարդակի վրա, ապա ուշադրություն դարձրեք ստորև բերված ստուգիչ ցանկին:

1. Անձնական փոխհարաբերություններ պահպանեք: Ինքներդ ձեզ հիշեցրեք այն մասին, որ դուք համագործակցում եք Տիրոջ հետ:
2. Պահպանեք սեփական տեսիլը: Դուք շարունակո՞ւմ եք գիտակցել ձեր ծառայության կարևորությունը: Ձեր նպատակները մնո՞ւմ են նույնքան հստակ և նշանակալից, ինչպես ձեր ծառայության սկզբում էր:
3. Շարունակե՛ք տեղեկացնել եկեղեցուն: Մշտական աջակցություն ստանալու համար անհրաժեշտ է կանոնավոր հաշվետվություն ներկայացնել: Մարդիկ զբաղված են, և նրանց պետք է հիշեցնել այն մասին, թե ինչպես է ընթանում ծառայությունը, և ինչպես նրանք կարող են մասնակցել դրան:
4. Պահպանե՛ք ոգևորությունը: Ինչ-որ մեկն ասել է. «Ոչինչ այնքան չի քաջալերում խանդավառությունը, որքան խանդավառությունը»: Անմար հետաքրքրություն դրսևորեք ծառայության հանդեպ, և շրջապատողները նույնպես կհետաքրքրվեն դրանով:
5. Պահպանե՛ք կենտրոնացվածությունը ձեր ծառայության վրա: Մի՛ շեղվեք ուրիշ պարտավորությունների կամ ծրագրերի համար, որոնք կարող են խանգարել ձեզ՝ ողջ ժամանակն ու եռանդն ուղղորդել ձեր ծառայությանը: Ձեր ծառայությունը պետք է շարունակվի և զարգանա:

Հարցեր քննարկման համար

1. Քննարկե՛ք երեքշաբթի օրվա դասի վերջին հարցի պատասխանները:
2. Ստորև բերված մեջբերումն ինչպե՞ս է բացահայտում Աստծո հանդեպ սիրո և հանուն Նրա ծառայության փոխադարձ կապի էությունը: «Արթուն քրիստոնյան նա է, ով Ավետարանը տարածելու համար նախանձախնդրորեն ձգտում է անել հնարավոր ամեն բան: Փրկչի հանդեպ սիրո աճին զուգընթաց աճում է նաև մերձավորի հանդեպ սերը» (Է. Ուայթ, Գործք առաքելոց, 261):
3. «Մարդիկ, ովքեր չեն զգում Քրիստոսի խոնարհեցնող սերը, չեն կարող ուրիշներին տանել կյանքի Աղբյուրի մոտ: Աստծո սերը սրտում

զսպող ուժ է, որը դրդում է մարդկանց՝ Քրիստոսին հայտնել խոսքի, նրբազգացության ու կարեկցանքի մեջ, ազնվացնող ազդեցության մեջ նրանց կյանքի վրա, ում հետ շփվում են: Հաջողության հասնել ցանկացողները պետք է ճանաչեն Տիրոջը և Նրա սերը: Երկնքում ծառայելու նրանց ընդունակությունը կգնահատվի աշխատելու և սիրելու ընդունակությամբ, ինչպես սիրում և աշխատում էր Քրիստոսը» (Է. Ուայթ, Գործք առաքելոց, 550, 551): Դասարանում պատմե՛ք, թե ինչպես է ձեր կյանքում դրսևորվել Աստծո սերը, և ինչպես եք դուք արձագանքել նրան:

ԹՈՂ ԵԿԵՂԵՑԻՆ ԻՄԱՆԱ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Գործք առաքելոց 4.1-31, 21.19-25, Ա Կորնթացիս 9.19-23, Թվոց 13.17-33, Գործք առաքելոց 11.1-18:

Հիշելու համարը.

«Եվ առաքյալները Հիսուսի մոտ հավաքվեցին, և պատմեցին նրան բոլորը, թե՛ ինչ որ արել էին, թե՛ ինչ որ սովորեցրել էին» (Մարկոս 6.30):

Հիմնական միտքը.

Յուրահատուկ հաշվետվություն լինելով վաղ եկեղեցու ավետարանչական աշխատանքի մասին՝ «Գործք առաքելոց» գիրքը մեզ համար արդիական շատ դասեր է բովանդակում:

Վաղ եկեղեցու անհավատալի աճը շատ ժամանակակից քրիստոնյաների դրդում է հետազոտել «Գործք առաքելոց» գիրքը: Արդյունքում այդ գրքի շնորհիվ եկեղեցական կյանքի շատ ոլորտներ, այնպիսիք, ինչպես եկեղեցու աճը, արտասահմանյան առաքելությունները, եկեղեցական վարչարարությունը և ավետարանչությունը, նոր զարգացում են ստացել: Թեև վերոհիշյալից շատերը փոխառվել են «Գործք առաքելոց» գրքից, որոշ սկզբունքներ (օրինակ, հաշվետվության թեման) այդպես էլ հարկ եղած ուշադրության չեն արժանացել: Հաշվետվությունը «Գործք առաքելոց» գրքում շարունակում է Ավետարանների հաշվետվության թեման և ցույց է տալիս, որ եկեղեցական կյանքի այդ կարևոր բաղադրիչը նշանակալի ազդեցություն է թողնում վկայության և ավետարանչության հաջողության վրա: Ամեն ինչ բավականին պարզ է՝ մենք պետք է իմանանք, թե ինչ է տեղի ունենում, ինչն է արդյունավետ, և ինչը՝ ոչ: Այս շաբաթ մենք կդիտարկենք, թե ինչպես էին առաջին ավետարանիչները հաշվետու լինում իրենց ղեկավարներին և ողջ եկեղեցուն: Մեր նպատակն այն է, որ եկեղեցու անդամները հասկանան հաշվետվության կարևորությունը, ինչպես նաև՝ տեսնեն, թե ինչպես հաշվետվությունը կարող է բարելավել տեղական համայնքի ավետարանչական նախագծերը:

Աստվածաշնչյան սկզբունքը

Երբ ինչ-որ մեկը խոսում է հաշվետվության մասին, դուք, ամենայն հավանականությամբ, պատկերացնում եք թղթի թերթերի կույտեր, որոնց վրա բազմաթիվ փաստեր և վիճակագրական տվյալներ են գրի առնված: Եվ, իհարկե, դուք համարում եք, որ այդ թղթերից քիչ օգուտ կա, գուցե միայն փոշին մաքրելը: Սակայն հաշվետվությունը ժամանակակից հայտնագործություն չէ, որի նպատակն է՝ խոչընդոտել ավետարանչական ծառայությունը: Դա աստվածաշնչյան սկզբունք է: Ինչպես վկայում է մեր հիշելու համարը, երբ աշակերտները վերադարձան իրենց ավետարանչական արշավից, նրանք Հիսուսին պատմեցին այն ամենի մասին, ինչ արել էին և ինչ սովորեցրել էին մարդկանց: Պարզվում է, որ դա ավետարանչական աշխատանքի կարևոր մասն է: Թեև մենք չենք կարող որոշակի աստվածաշնչյան համար նշել, որը պատվիրում է. «Դուք պետք է հաշվետվություն տաք, քանի որ…», սակայն ինչպես Հին, այնպես էլ Նոր Կտակարանում հաշվետվության կարևորության բազմաթիվ հաստատումներ կան: Հաշվետվությունը իրադարձությունների շղթայի օղակներից մեկն է: Այսինքն, ինչ-որ մեկը պատրաստում է հաշվետվություն, ինչ-որ մեկը ստանում է այն, հաշվետվությունը գնահատվում է, իսկ հետո, ի պատասխան ստացված տեղեկատվությանը, որոշումներ են ընդունվում, և գործողություններ են ծրագրվում:

Ուսումնասիրե՛ք Գործք առաքելոց 4.1-31-ը: Իրենց եղբայրակիցներին ի՞նչ պատմեցին Պետրոսն ու Հովհաննեսը, և այդ հաշվետվությունն ի՞նչ գործողությունների դրդեց եկեղեցուն: Մենք մեզ համար ի՞նչ դասեր կարող ենք քաղել ընթերցված պատմությունից: _____

_____

_____

Մտորե՛ք. այն ժամանակ ո՛չ թերթեր կային, ո՛չ ռադիո, ո՛չ արբանյակային հեռուստատեսություն, Հիսուսի մասին բարի լուրի տարածման հիմնական մեթոդը մարդկային խոսքն էր, մարդկանց բառերը: Եթե այդ առաջին քրիստոնյաները վախենային իրենց սպառնացող վտանգներից, ապա նրանց ավետարանչական ազդեցությունը նշանակալիորեն կպակասեր: Այդ պատճառով նրանք հավաքվում էին միասին, լսում հաշվետվությունները և հետո որոշում, թե ինչպիսի

ռազմավարություն ընտրեն, որը նրանց հնարավորություն կտար հավատարիմ մնալ իրենց ավետարանչական կոչմանը: Ամեն ինչի հիմքում, իհարկե, ընկած էր Սուրբ գրքի ընթերցումը և աղոթքը: Այս պատմությունը ցույց է տալիս, թե որքան կարևոր էին աղոթքն ու Աստծո խոսքին հուսալը առաջին քրիստոնյաների համար: Մեր գերակայություններն այսօր չպետք է փոխվեն:

Թեև մենք չունենք մանրամասն նկարագրություն, թե այդ ժամանակ ինչ էին ծրագրում հավատացյալները, 29-րդ համարը վկայում է, որ չնայելով բոլոր սպառնալիքներին, նրանք որոշել էին շարունակել Հիսուսի մասին խոսելը:

Առաջին քրիստոնյաները Սուրբ գիրքը մեջբերում էին ինչպես Իսրայելի առաջնորդների, այնպես էլ հասարակ ժողովրդի առջև: Մենք տեսնում ենք, թե որքան կարևոր էր դա նրանց հավատի և վկայության համար: Որքա՞ն կարևոր է Սուրբ գիրքը ձեզ համար: (Այս հարցին պատասխանելու համար մտածե՛ք, թե որքան ժամանակ եք դուք հատկացնում Սուրբ գրքի ուսումնասիրությանը):

Երկուշաբթի ***հունիսի 11***

Ինչ արարեց Աստված

Հարկ է միշտ հիշել, որ կյանքում մեծ մասամբ ըմբռնման և համաձայնության բանալին ճիշտ շփվելու կարողությունն է: Նայելով եկեղեցական ընտանիքին՝ մենք տեսնում ենք, որ աշխատանքի և դրա արդյունքների մասին զեկուցումը ներքին փոխադարձ կապի կենսականորեն անհրաժեշտ բաղադրիչ է: Շատ եկեղեցիներում բազմաբնույթ աշխատանք է կատարվում, սակայն տեղի ունեցող իրադարձությունների մասին գիտեն միայն այս կամ այն ծառայության մասնակիցները: Այդ պատճառով երբեմն ղեկավարների մոտ առաջանում է այնպիսի զգացում, որ իրենց ծառայությունը ոչ ոքի չի հետաքրքրում: Բայց հենց դա էլ պետք է սպասել, եթե ղեկավարները երբեք եկեղեցու հետ չեն կիսվում իրենց նպատակներով ու ռազմավարությամբ, երբեք չեն պատմում կատարված աշխատանքի և դրա արդյունքների մասին:

Կարդացե՛ք Գործք առաքելոց 21.19-25-ը: Եկեղեցու վրա ինչպե՞ս են ազդել Պողոսի ավետարանչական հաշվետվությունները: Միևնույն ժամանակ, նույնիսկ չնայելով բարի լուրերին հաշվետվություններում, քրիստոնյաների շրջանում պառակտման միտում

էր նկատվում: Որո՞նք էին այդ խնդիրները, ինչպե՞ս դրանց պատասխանեց Պողոսը, և այդ պատմությունից մենք ի՞նչ դաս կարող ենք քաղել մեզ համար այսօր: Տե՛ս նաև Ա Կորնթացիս 9.19-23:

Ավետարանչական ճանապարհորդությունից վերադառնալով Երուսաղեմ՝ Պողոսը Հակոբոսին և բոլոր երեցներին պատմեց, թե ինչպես էր Աստված օրհնել իր ծառայությունը հեթանոսների մեջ: Բարի լուրի քարոզի հաջողության մասին պատմություններին եկեղեցու ղեկավարներն արձագանքեցին Աստծուն անկեղծ փառաբանությամբ: Սակայն, անգամ չնայելով Պողոսի բերած բարի լուրերին՝ քրիստոնյաների շրջանում ի հայտ եկան պառակտման և որոշ խռովության տարրեր: «Ավետարանն ընդունած շատ հրեաներ դեռևս պատվում էին ծիսական օրենքը և պատրաստ էին անշրջահայացորեն զիջումների գնալ՝ հուսալով դրանով իսկ նվաճել իրենց հայրենակիցների վստահությունը, ցրել նրանց նախապաշարումները և օգնել հավատալ Քրիստոսին՝ որպես աշխարհի Փրկչի: Պողոսը հասկանում էր, որ այնքան ժամանակ, քանի դեռ Երուսաղեմի եկեղեցու շատ ղեկավարներ պահպանում են իր դեմ կանխակալ կարծիքը, նրանք ամբողջ ժամանակ ընդդիմանալու են նրա ազդեցությանը: Նա գիտակցում էր, որ եթե խելամիտ զիջումների ճանապարհով իրեն հաջողվի նրանց դարձի բերել դեպի ճշմարտությունը, այլ վայրերում Ավետարանի քարոզի համար մի լուրջ խոչընդոտ կվերացվեր: Բայց այն զիջումները, որոնք նրանք էին պահանջում, նախատեսված չէին Տիրոջ կողմից» (Է. Ուայթ, Գործք առաքելոց, 405):

Այսօր էլ մեր շրջապատում տարակարծություն կա ավետարանման լավագույն ուղիների վերաբերյալ: Ի՞նչ կարելի է ասել ձեր տարածաշրջանում ավետարանման լավագույն մեթոդների մասին, և դուք ինչպե՞ս կարող եք աջակցել այդ որոնումներին:

Երեքշաբթի ***հունիսի 12***

Հաշվետվության կարևորությունը

Վկայության և ավետարանման ծառայության մեջ հաշվետվությանը և ծառայության արդյունքներին միշտ չէ, որ հարկ եղած ուշադրություն է հատկացվել, այդ պատճառով ամենևին էլ միշտ չէ, որ այդ հաշվետվությունը տեղ է գտել: Ժամանակակից ունայն կյան-

քի բոլոր ոլորտներում իրերի կարևորությունը որոշվում է դրանց արժեքավորության գիտակցմամբ: Այն, ինչ համարվում է ժամանակի և ուժերի իզուր վատնում, սովորաբար բավարար ուշադրության չի արժանանում: Այդ պատճառով անհրաժեշտ է ցույց տալ հաշվետվության կարևորությունը: Այսինքն՝ եկեղեցու անդամները պետք է տեսնեն, թե ինչի կարելի է հասնել հաշվետվության մեջ ներկայացված արդյունքների գնահատման շնորհիվ:

Տարբերություն կա փաստերի պարզ շարադրման և այն մասին պատմության միջև, թե ինչպես է փաստերի մեջ ներկայացված գործունեությունն օգնում եկեղեցուն՝ մարդկանց բերել Քրիստոսի մոտ: Հաշվետվություն ներկայացնողները պետք է հավաստիանան, որ իրենք ոգեշնչում են ունկնդիրներին, նրանց մեջ սերմանում հաջողության ուրախությունը, որը այդ ծառայության մեջ մասնակցության արդյունքն է:

Արդյոք շա՞տ բան կկորցնեինք, եթե մենք «Գործք առաքելոց» գրքից հանեինք ավետարանչական գործունեության մասին բոլոր հաշվետվությունները և բերված համարներում պարունակվող ոգեշնչող և քաջալերող տեղեկատվությունը: Գործք առաքելոց 5.14, 8.4,12, 11.21, 14.21: _____

_____

Եկեղեցու զարմանալի աճը, որի մասին պատմվում է «Գործք առաքելոց» գրքում, տեղի չի ունեցել ինքնաբերաբար: Սուրբ Հոգու զորությամբ օժտված լինելով, հիշելով այն մասին, որ Հիսուսը նրանց հաջողություն է խոստացել ծառայության մեջ, քրիստոնյաներն եռանդուն կերպով աշխատում էին, և դա հանգեցրեց մեծագույն արդյունքների: Քրիստոնյաները կենտրոնացել էին նպատակին լավագույնս հասնելու մեթոդների վրա: Մեզ հայտնի է, որ Ավետարանի քարոզի միջոցով բազմաթիվ տղամարդիկ և կանայք դարձի էին գալիս դեպի Տերը և մկրտվում դեպի աշակերտություն իրենց ճանապարհին: Դա ևս մեկ անգամ ընդգծում է կատարված աշխատանքի և դրա արդյունքների մասին մանրամասն տեղեկացման կարևորությունը: Փաստորեն Աստվածաշնչում ավետարանչական ծառայության արդյունքները նկարագրված են առավել մանրամասն, քան բուն ծառայությունը: Առաջին ավետարանիչները գնում էին ամեն տեղ՝ քարոզելով Հիսուսի և Նրա Արքայության մասին: Դատելով նրանց աշխատանքի պտուղներից՝ կարելի է ասել, որ նրանք համոզիչ կերպով իրենց ունկնդիրներին կոչ էին անում դառնալ Տիրոջ հետևորդներ: Մշտական քարոզչությունը և հաճախակի կոչերը էական արդյունքների հանգեցրին եկեղեցու աճի մեջ, ինչի մասին գրված է «Գործք առաքելոց» գրքում:

Իհարկե, որևէ ավետարանչական գործունեության հաջողության մասին պատմությունները ոգեշնչող են հնչում: Իսկ ինչպե՞ս ենք մենք արձագանքում պակաս հաջողակ փորձերին, երբ, ինչպես մեզ թվում է, մեր ծրագրերը չեն կայացել, և ջանքերը ոչ մի արդյունքի չեն հանգեցրել: Ինչպիսի՞ն է մեր վերաբերմունքը նման փորձառություններին: Ձեր պատասխանը քննարկեք դասարանում շաբաթ օրը:

Չորեքշաբթի *հունիսի 13*

Հաշվետվություն և շարժառիթ

Խոսելով շարժառիթի մասին՝ մենք նկատի ունենք որևէ համոզմունքի կամ գործողության ներքին պատճառները: Դա վերաբերում է նաև հաշվետվությանը: Մենք հաշվետվություն ենք ներկայացնում որոշակի պատճառով կամ մի շարք պատճառներով: Մեր պատճառները կարող են պարզապես հանգել եկեղեցուն համոզելու փորձին՝ շարունակել ֆինանսապես աջակցել նախագծին:

Կամ էլ մենք կարող ենք հաշվետվություն ներկայացնել՝ նպատակ ունենալով համոզել մարդկանց՝ դադարեցնել որևէ նախագիծ կամ փոխել դրա ղեկավար կազմը: Եթե ընտրված տեղեկատվությունը մատուցվում է կողմնակալորեն, այդ դեպքում արդյունքների գնահատումն էլ կարող է լինել ոչ լավագույնը: Այդ պատճառով մեր հաշվետվությունը պետք է ազնիվ և արդարացի լինի:

Կարդացե՛ք Թվոց 13.17-33-ը: Բոլոր տասներկու լրտեսները միևնույնն էին տեսել, բայց ինչո՞ւ երկուսի պատասխանն այդքան կտրուկ կերպով տարբերվում էր բոլոր մյուսների պատասխաններից: Մենք մեզ համար ի՞նչ դաս կարող ենք քաղել այդ դեպքից: _____

_____

_____

Չնայելով խոստացված երկիրը Իսրայել ժողովրդին տալու Աստծո խոստմանը՝ լրտեսներից ոմանք կասկածեցին դրան: Նավեի որդի Հեսուն և Քաղեբը հոյակապ հաշվետվություն ներկայացրեցին երկրի մասին՝ առաջարկելով անհապաղ գնալ և տիրանալ դրան (հմ. 30): Իսկ մյուսները բացասական հաշվետվություն ներկայացրին՝ շեշտը դնելով երկրին տիրանալու ճանապարհին եղած խոչընդոտների վրա և առաջարկելով վերադառնալ Եգիպտոս: Ձևակերպելով հաշվետվու-

թյունները՝ մենք պետք է ուշադրություն դարձնենք Աստծո բացված կամքին և Նրա հեղած օրհնություններին: Մենք չպետք է պարզապես պատմենք այն մասին, թե որքան լավ ենք աշխատում, այլ ընդգծենք, որ կատարում ենք Աստծո կամքը (տե՛ս Մատթեոս 7.21): Միշտ վտանգ կա՝ ավետարանչական ծառայության ամենանորարարական մեթոդների օգտագործման տրորված ճանապարհը բռնել և մեր հաջողությունները չափել այն բանին համապատասխան, թե որքանով հաջող ենք մենք հետևում սկզբունքներին՝ այլ եկեղեցիների համեմատ: Պատմելով ձեռք բերվածի մասին՝ մենք կարող ենք առավել շահագրգռված լինել նրանում, որպեսզի հաջողակ երևանք, քան թե Աստծո կամքը ճանաչենք մեր եկեղեցու համար և Նրա ողորմությամբ այն կատարենք: Այսօր դա է մեր եկեղեցիներին ուղղված մարտահրավերը, որոնք տառացիորեն ռմբակոծում են ավետարանման անվերջանալի «լավագույն» մեթոդներով: Հաշվետվություն ներկայացնելով՝ Նավեյան Հեսուն և Քաղեբն, իհարկե, տեսնում էին նաև երկրի նվաճման ճանապարհին եղած խոչընդոտները, սակայն նրանք գիտեին նաև Աստծո կամքը: Այդ պատճառով նրանց հաշվետվության կարևոր մասն էր ժողովրդին հավաստիացնելը, որ երկիրը հնարավոր էր նվաճել: Մյուս կողմից, լրտեսները, ում մտածողությունն ուղղված էր Աստծո կամքի ընկալմանը, բացարձակապես այլ հաշվետվություն բերեցին: Նրանց հաշվետվությունն ուղղված էր նրան համոզելու մարդկանց, որ նույնիսկ Եգիպտոս վերադառնալն ավելի լավ տարբերակ է:

Որոշ մարդկանց կյանքի հիմքը հավատն է, քանի որ նրանք ապավինում են Աստծո խոստումներին և գործում դրանց համապատասխան: Իսկ այլ մարդիկ իրենց կյանքում հիմնվում են ենթադրությունների վրա. նրանք կատարում են ոչ ամենահիմաստուն արարքները, բայց հանուն ինքնարդարացման հայտարարում են. «Աստված մեզ տանում է այդպիսի ճանապարհով»: Ինչպե՞ս մենք կարող ենք հստակ սահմանագիծ անցկացնել այդ երկու ճանապարհների միջև: Մենք ինչպե՞ս կարող ենք հետևել առաջինին և խուսափել երկրորդից:

Հինգշաբթի *հունիսի 14*

Փառաբանելով Աստծուն

Որոշ մարդիկ չեն շտապում պատմել իրենց հաջողությունների մասին, քանի որ նրանց թվում է, թե դա նման է պարծենկոտության: Սա-

կայն իրականում բարեխիղճ հաշվետվության միջոցով փառավորվում է Աստված, իսկ Նրա եկեղեցին ամրապնդվում է հավատի և վճռականության մեջ՝ շարունակելով հանուն Նրա աշխատելը: Թեև իրականում ժամանակ առ ժամանակ ինչ-որ մեկը կարող է հաշվետվություն ներկայացնել ոչ ամենաազնիվ դրդապատճառներից ելնելով, սակայն դա չպետք է խոչընդոտի խոնարհ քրիստոնյաներին՝ կիսվել նրանով, թե ինչ մեծամեծ գործեր է իրենց միջոցով կատարել Աստված՝ նրանց պատվիրելով լինել Նրա վկաներն ու ավետարանիչները: Եթե հաշվետվությունն իրականացվում է խոնարհ հոգով, խանդավառությամբ և հոգիների հանդեպ սիրով, ապա այն կարող է զարմանալիորեն ոգեշնչել եկեղեցու մյուս անդամներին, ովքեր նույնպես կցանկանան մասնակցել ավետարանչական ծառայությանը:

Կարդացե՛ք Գործք առաքելոց 11.1-8-ը: Երուսաղեմի եկեղեցու ղեկավարներն ու անդամներն ինչպե՞ս արձագանքեցին Պետրոսի հաշվետվությանը հեթանոսների շրջանում ավետարանչության մասին: Այստեղ բացահայտված սկզբունքները որքանո՞վ են արդիական նաև մեզ համար այսօր: _____

_____

_____

Պետրոսը և մյուս հավատացյալներն, ովքեր համարձակվել էին քարոզել հրեա ազգի սահմաններից դուրս, քննադատության էին ենթարկվում: Սակայն Երուսաղեմի եկեղեցուն Պետրոսի ներկայացրած հաշվետվության արդյունքում քննադատությունը դադարեց, և մյուս քրիստոնյա հրեաները փառաբանեցին Աստծուն: Այսօր մեզ համար հեշտ չէ հասկանալ այդ խնդիրները: Մենք գիտենք, որ Ավետարանը պետք է քարոզվի յուրաքանչյուր հրեայի և հեթանոսի, նույնիսկ եթե «առաջ՝ հրեային, և հետո՝ հույնին» (Հռոմեացիս 1.16): Բայց ուխտի խոստման գաղափարը, որը տարածվում է նաև հեթանոսների վրա, հրեական մտածելակերպում մեծ փոփոխություններ էր պահանջում: Սակայն, իմանալով այդ մարդկանց համար Աստծո գործերի և Նրա օրհնությունների մասին՝ եկեղեցու անդամները բոլոր մարդկանց փրկելու՝ Աստծո ցանկության նոր ըմբռնում ձեռք բերեցին, թեև Աստված միշտ ունեցել էր այդպիսի մտադրություն (Եփեսացիս 1.1-4, Եսայիա 53.6, Եբրայեցիս 2.9): Այսօր ընթերցողից կպահանջվի երկու րոպեից ոչ ավելի Գործք առաքելոց 11.1-8-ում գրառված Պետրոսի հաշվետվությունը կարդալու համար: Իհարկե, իրականում նրա հաշվետվությունը, դրան հաջորդող հարցերը և պատասխաններն անհամեմատ ավելի շատ ժամանակ են խլել: Ավելին, թեև հաշվետվության մեջ Պետրոսը

պատմում է իր մասին, սակայն ողջ փառքը տրվել է Աստծուն, իսկ եկեղեցու ղեկավարները ոգևորվեցին՝ ավելի լավ հասկանալով, որ ողջ ավետարանական հանձնարարությունը՝ քարոզել աշխարհին, կարող է իրականություն դառնալ:

Ուրբաթ ***հունիսի 15***

Հետագա ուսումնասիրության համար

Պատմեցե՛ք ձեր ծառայության մասին:

Ինչպես մենք արդեն ասել ենք, համայնքը պետք է իմանա այն մասին, թե ինչ եք դուք անում: Առանձնահատուկ հաշվետվություններն, ինչպես ներկաների թիվը և ֆինանսական ներդրումները, իհարկե, կարևոր են: Նաև անհրաժեշտ է, որ դուք այդ հաշվետվությունները ներկայացնեք եկեղեցու խորհրդին և ավետարանչական ծառայությանը նվիրված եկեղեցական ժողովին: Բանավոր հաշվետվության մեջ կարելի է համառոտակի շոշափել հիմնական պահերը, այն ժամանակ, երբ գրավորի մեջ պետք է առկա լինեն բոլոր մանրամասները: Այդ տեղեկատվությունը մարդկանց մեջ ոչ միայն կպահպանի հետաքրքրությունը ձեր ծառայության հանդեպ և կխրախուսի դրանում նրանց մասնակցությունը, այն նաև կնպաստի ծառայության ճշգրիտ գնահատմանը և հետագա ծրագրմանը:

Համոզվե՛ք, որ ձեր հաշվետվությունները վերաբերում են եկեղեցու ընդհանուր ավետարանչական ծրագրերին: Բացատրեք, թե ինչպես է ձեր ծառայությունը այն ռազմավարության մասը, որն ուղղված է եկեղեցու կողմից առաջադրված նպատակների ձեռքբերմանը: Հետազոտե՛ք սեփական դրդապատճառները, որոնք դրդում են ձեզ հաշվետվություններ ներկայացնել: Որքանո՞վ եք դուք կենտրոնացած Աստծո կամքի վրա ձեր եկեղեցու և հոգիների փրկության համար:

Հարցեր քննարկման համար

1. Վերադարձե՛ք երեքշաբթի օրվա դասի վերջին հարցին: Մենք ինչպե՞ս ենք հաշվատու լինում «անհաջողությունների մասին»: Միանգամայն բնական է խոսել վերապրած հաջողությունների մասին: Դա մարդկանց հատուկ է նաև կենցաղային հարցերում: Իսկ ինչպե՞ս է ավետարանչական ծառայության հարցում: Ինչպե՞ս է անհրաժեշտ այն կիրառել, որպեսզի անհրաժեշտ փոփոխություններ ներդրվեն: Քննար-

կեք նաև այսպիսի մի հարց. եթե մենք համարում ենք, որ ծառայության մեջ հաջողությունը Տիրոջ արժանիքն է, մենք ո՞ւմ ենք մեղադրում, եթե ամեն բան ընթանում է ոչ այնքան լավ, որքան մենք կցանկանայինք:

2. Մտորե՛ք հինգշաբթի օրվա դասում քննարկված խնդրի շուրջ՝ հեթանոսների հանդեպ վերաբերմունքի մասին, որը պահանջվեց հրեա քրիստոնյաներից՝ այդ մարդկանց ավետարանելու համար: Խորհե՛ք ձեր եկեղեցու, մշակույթի և հասարակության մասին: Ինչքան էլ մենք դավանաբանորեն հաստատենք մեր հավատն այն մասին, որ Ավետարանը պատկանում է ողջ աշխարհին, սակայն մեր մշակութային կամ սոցիալական նախապաշարմունքները նույնպիսի փոփոխությունների կարիք ունեն, որոնք տեղի ունեցան առաջին հրեա քրիստոնյաների մտածողության մեջ:
3. Թեև այս շաբաթ մենք դասը քննարկում էինք ավետարանչական աշխատանքի համատեքստում, խորհե՛ք ցանկացած հաշվետվության ներկայացման հայեցակարգի մասին՝ կյանքի ցանկացած իրավիճակում: Մենք ինչպե՞ս կարող ենք վստահ լինել, որ միշտ ազնիվ ու արդարացի ենք, որ տեղեկատվությունը չենք մատուցում մեզ համար շահավետ լույսի ներքո և չենք աղավաղում փաստերը: Ինչո՞ւ են այդ շեղումներն այդքան հրապուրիչ և ինչո՞ւ ենք այդպես վարվելով խաբում ինքներս մեզ:

ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Բ Կորնթացիս 13.5,6, Եբրայեցիս 10.24,25, Երկրորդ Օրինաց 10.12,13, Մատթեոս 23.15, Հայտնություն 14.6,7:

Հիշելու համարը.

«Ոսկե օղ և գոհարեղեն մանյակ է իմաստունի խրատը լսողի ականջի համար» (Առակաց 25.12):

Հիմնական միտքը.

Միասլ կլինի մասնակցել Աստծո մեծ գործին՝ չգնահատելով սեփական աշխատանքը:

Շատ հաճախ մենք բավարարվում ենք ավետարանչության անշան արդյունքներով, այն ժամանակ, երբ կարող էինք ավելի մեծ ազդեցություն գործել և ավելի մեծ հաջողություն ունենալ, եթե գնահատեինք նախորդ ավետարանչական նախագծերը և թույլ տայինք, որ վերլուծության արդյունքներն ազդեին ավետարանչական աշխատանքի հետագա ուղղության և ռազմավարության վրա: Երբեմն ավետարանչական նախագծերի վրա խոշոր գումարներ են ծախսվում՝ նվազագույն արդյունքներ բերելով: Դրան հետևում է բյուջեի ծախսերի հոդվածները և (կամ) աշխատանքի մեթոդները փոխելու առաջարկությունը: Եթե այդ հարցերը տրվեն առանց քննադատության, նրանք կարող են դառնալ արդյունավետ գնահատման մի մասը: Անհրաժեշտ է անմիջապես նշել, որ մեզ մինչև վերջ հայտնի չեն ցանկացած ավետարանչական նախաձեռնության բոլոր արդյունքները, քանի որ մենք տեսնում ենք միայն փաստացի արդյունքները (օրինակ, մկրտված մարդկանց թիվը), բայց ոչ թե ավետարանչական սերմի ցանման մասշտաբները: Սակայն, միևնույնն է, գոյություն ունի ընդունված որոշումների գնահատման անհրաժեշտություն՝ ձեռնպահ մնալով քննադատությունից և դատապարտումից: Այս շաբաթ մենք կքննարկենք գնահատումը՝ որպես աստվածաշնչյան սկզբունք, և կորոշենք նրա նշանակությունը որպես անընդհատ գործընթաց ժամանակակից համայնքի կյանքում:

Ինչո՞ւ գնահատել

Գնահատումը տեղի է ունենում անկախ նրանից, թե արդյոք մենք գիտակցո՞ւմ ենք դա, թե՞ ոչ: Այն տեղի է ունենում յուրաքանչյուր շաբաթ օր, և եղբայրների ու քույրերի յուրաքանչյուր հանդիպման ժամանակ: Մարդիկ գնահատում են քարոզի բովանդակությունը, հստակությունը և նույնիսկ տևողությունը, իսկ ժողովին այցելողներն սպասում են Աստվածաշնչի իմացության բարձր մակարդակ: Երբ մարդիկ ինչ-որ բան են սպասում, գնահատումն անխուսափելի է: Թեև մենք չենք կարող նշել աստվածաշնչյան համար, որը խոսում է նպատակաուղղված կերպով ձեռնարկված գնահատման մասին, սակայն անկասկած է, որ այն լուրջ տեղ էր գրավում վաղ եկեղեցու կյանքում:

Բերված համարներն ի՞նչ են ասում մեզ գնահատման կարևորության մասին: Ի՞նչ տեսակի գնահատում են նրանք խորհուրդ տալիս: Ա Տիմոթեոս 3.1-13, Ա Կորնթացիս 11.28, Բ Կորնթացիս 13.5,6: _____

_____

Երբ Աստծո խոսքը չափանիշ է սահմանում, որոշակի գործողություններ է նախատեսում կամ պատվեր տալիս, մենք պետք է բաց լինենք գնահատման համար: Գնահատումը ենթադրում է շատ կարևոր հարցեր՝ ինչպես է մեզ մոտ ստացվում այդ ծառայությունը, ինչպես կարող ենք ավելի մեծ հաջողության հասնել: Այն փաստը, որ Պողոսը սարկավագների և երեցների որոշակի բնութագրեր է տվել, ցույց է տալիս, որ այստեղ տեղի է ունեցել որոշակի գնահատում: Դա կարող էր լինել զբաղեցրած պաշտոնին համապատասխանության կամ տվյալ ծառայության արդյունավետության գնահատում:

Կարդացե՛ք ավետարանական հանձնարարությունը Մատթեոս 28.19,20-ում: Գնահատմանը վերաբերող ի՞նչ հարցեր դուք կարող եք տալ այն հարցի վերաբերյալ, թե ինչպես է ձեր եկեղեցին կատարում այդ հանձնարարությունը: _____

_____

_____

Մեզ՝ որպես Աստծո ծառաների, վստահված է անչափելի արժեքի ավետարանչական ճշմարտություն: Ուշադրության առնելով այն, որ ավետարանական լուրը պետք է հնչի ողջ աշխարհում, մենք չպետք է զարմանանք, որ Աստված նույնպես կատարում է Իր գնահատումը:

Աստված շահագրգռված է աշխատանքի առաջընթացում, որը վստահված է նրանց, ովքեր արձագանքել են Նրա կոչին և Նրա գործակիցներն են դարձել հոգիների փրկության գործում:

Եվս մեկ անգամ կարդացե՛ք Բ Կորնթացիս 13.5-ը: Այս համարն ի՞նչ է ասում անձամբ ձեզ: Դուք ինչպե՞ս կարող եք կիրառել այն ձեզ համար: Ի՞նչն է համոզում ձեզ, որ Հիսուս Քրիստոսը բնակվում է ձեր մեջ:

Երկուշաբթի *հունիսի 18*

Գնահատե՛ք բարյացակամորեն

Գնահատումը բազում առավելություններ ունի, բայց գոյություն ունեն նաև որոշ վտանգներ, որոնցից մենք պետք է խուսափենք: Եթե մենք չափազանց ակտիվություն են ցուցաբերում գնահատման մեջ և այդ ընթացքում ուշադրություն ենք դարձնում գլխավորապես ինչ-որ բացասական տեսանկյան վրա, քննադատության մթնոլորտ ստեղծելու վտանգ է առաջանում, որը կհուսահատեցնի ձեր ավետարանիչներին և կփոքրացնի նրանց թիվը: Որպեսզի գնահատումը քննադատության տեսք չունենա, այն անհրաժեշտ է ուղեկցել անկեղծ աջակցությամբ: Ցավոք, մենք մոռանում ենք սատարել մեր աշխատողներին, հատկապես՝ նրանց, ովքեր երկար ժամանակ կատարում են իրենց ծառայությունը: Նրանք միշտ տեղում են, միշտ կատարում են աշխատանքը, և մենք սկսում ենք համարել, որ միշտ այդպես է լինելու: Գնահատումը ձեզ հնարավորություն կտա աջակցել նրանց և հավանություն տալ:

Դուք հավանության արտահայտություն նկատո՞ւմ եք ստորև բերված համարներում: Նման հավանությունն ինչպե՞ս կարող է արտահայտվել առանձին աշխատողների կամ խմբերի նկատմամբ: Գործք առաքելոց 16.1,2, Հռոմեացիս 16.1, Ա Կորնթացիս 11.2, Փիլիպպեցիս 4.14:

Շատ դեպքերում Պողոս առաքյալը պետք է խրատեր համայնքներին կամ առանձին մարդկանց անմիջականորեն զբաղեցրած դիրքին վերաբերող հարցերում: Դա ցույց է տալիս, որ որոշակի գնահատում էր տեղի ունենում, բայց ցանկացած հնարավորության դեպքում Պողոսը նաև շնորհակալություն էր հայտնում մարդկանց այն աջակցության համար, որը նրանք ցուցաբերում էին իրեն, գովում էր Աստծո հանդեպ հավատարմության և ծառայությունը բարեխղճորեն կատարելու համար:

Որպեսզի գնահատումն ազնիվ լինի, մենք պետք է գնահատենք ոչ միայն արդյունքները, այլ նաև՝ գործընթացները: Արդյունքի գնահատումը ցույց է տալիս, թե ձե՞ռք է բերված այս կամ այն ծրագրով նախատեսվածը: Գործընթացի գնահատումը դիտարկում է նախագծերի ներքին կազմակերպումը:

Ուշադիր կարդացե՛ք Եբրայեցիս 10.24,25-ը: Տվյալ համատեքստում ի՞նչ է նշանակում միմյանց հանդեպ ուշադիր լինելը: Գնահատման ի՞նչ սկզբունքներ են այստեղ առաջարկված: _____

_____

Առաջարկված համարներն իրենցից ինչ-որ ավելի մեծ բան են ներկայացնում, քան խորհուրդը: Դրանք հաստատակամորեն պատվիրում են մեզ լրջորեն վերաբերվել հոգևոր աճին և միմյանց զարգացմանը: Եթե մենք պետք է ուշադիր վերաբերվենք մեր քրիստոնեական կյանքի վերաբերյալ Աստծո պահանջներին, ինչպես նաև հետևենք, թե մեզանից յուրաքանչյուրն իր հոգևոր փորձառության որ փուլում է, հետևաբար, միմյանց հանդեպ ուշադրությունը նույնպես տանում է ճիշտ գնահատման:

Խորհե՛ք, թե ինչպես է ոգեշնչում ցանկացած հավանություն, երբ ձեզ գովում են որպես մարդ կամ նկատում ձեր ծառայությունը: Զարմանալի է, թե որքան շատ բան կարող է անել մի քանի հասարակ բառը: Ո՞րն է ձեր ընդհանուր դիրքորոշումը շրջապատի մարդկանց հանդեպ վերաբերմունքի հարցում: Ձեզ ի՞նչն է առավել հատուկ՝ քննադատե՞լը, թե՞ աջակցելը: Եթե առաջինը, ապա դուք ինչպե՞ս կարող եք փոխել բնավորության այդ ոչ կառուցողական գիծը:

Երեքշաբթի ***հունիսի 19***

Ինչ է պահանջում Աստված

Կարդացե՛ք ստորև բերված համարները այս շաբաթ ուսումնասիրվող նյութի համատեքստում (փաստացի ողջ եռամսյակի ընդհանուր նյութի համատեքստում): «Եվ հիմա, ո՛վ Իսրայել, ի՞նչ է պահանջում քեզանից քո Եհովա Աստված. բայց միայն որ քո Եհովա Աստծուց վախենաս, նրա բոլոր ճանապարհներում գնաս և նրան սիրես, և պաշտես քո Եհովա Աստծուն բոլոր սրտովդ և բոլոր հոգովդ, որ Եհովայի պատվիրանները և կանոնները պահես, որոնք ես այսօր քեզ պատվիրում եմ» (Երկրորդ Օրինաց 10.12,13):

Դուք ի՞նչ կասեիք, եթե ձեզ խնդրեին առանձնացնել այս երկու համարների գլխավոր միտքը: _____

_____

_____

Նոր Կտակարանի ո՞ր համարին է նման ընթերցված հատվածը: Այդ նմանությունն ինչպե՞ս է ընդգծում Երկրորդ Օրինաց գրքում բերված երկու համարներում հաղորդվածի կարևորությունը: ____

_____

_____

Համարներում ասվում է, որ Աստված ինչ-որ բան «պահանջում է» մեզանից: Հավատով փրկության համատեքստում մենք ինչպե՞ս պետք է հասկանանք այդ համարի նշանակությունը: _____

_____

_____

Ընթերցված հատվածը խորապես հուզում է մարդու սիրտն ու հոգին, ինչի մասին հաճախ դժվար է դատել արտաքինից: Մարդու ներքին հոգեվիճակի ի՞նչ արտաքին դրսևորումների մասին է հայտնում հատվածը: Այստեղ պատկերված փոխադարձ կապը ներքինի և արտաքինի միջև ինչպե՞ս է համապատասխանում Հայտնություն 14.6-12 համարների մեր ըմբռնմանը: _____

_____

_____

Մատթեոս 23.15-ում Հիսուսը կտրուկ գնահատական տվեց «վկայությանն» ու «ավետարանչությանը», որը հեթանոսներին տանում էին դպիրներն ու փարիսեցիները: Այդ պատճառով, ցանկանալով կատարել ավետարանական հանձնարարությունը, մենք միշտ պետք է հիշենք այն խորը ճշմարտությունների մասին, որոնք գրառված են Երկրորդ Օրինաց 10.12,13-ում: Չէ՞ որ ավետարանման ամեն հնարավոր փորձ ձեռնարկելով՝ մենք ամենաքիչը կցանկանայինք, որպեսզի դրա արդյունքում մարդիկ ավելի վատը դառնային, քան նախքան մեզ հետ հանդիպելն էին:

Չորեքշաբթի ***հունիսի 20***

Գնահատում՝ հանուն հոգևոր աճի

«Բայց Տերը Սամվելին ասաց. Նրա տեսքին և հասակի երկարությանը մի՛ նայիր, որովհետև նրան անարգեցի, այն պատճառով, որ

այն չէ բանը, որ տեսնում է մարդը, որովհետև մարդը տեսնում է աչքի առաջինը, բայց Տերը սրտին է նայում» (Ա Թագավորաց 16.7):

Մենք արդեն ասել ենք, որ ցանկացած նպատակ, որն իրենց առջև դնում են համայնքը և առանձին մարդիկ, անհրաժեշտ է գնահատել: Թեև թվական աճին հետևելը և այն գնահատելն այնքան էլ դժվար չէ, սակայն անհրաժեշտ է հիշել, որ եկեղեցու համար կարևոր են ոչ միայն թվերը: Միանգամայն ակնհայտ է (համենայն դեպս, պետք է ակնհայտ լինի), որ մենք չենք ցանկանում պարզապես եկեղեցին լցնել մարդկանցով: Մենք ցանկանում ենք այն լցնել մարդկանցով, ում փոխհարաբերությունները Հիսուսի հետ ամրապնդվում են, մարդկանցով, ովքեր սիրում են Տիրոջը և այդ սերն արտահայտում են Նրա պատվիրաններին հնազանդությամբ: Ամենից քիչ մենք կցանկանայինք մեր հասցեին լսել դպիրներին ու փարիսեցիներին ասված Հիսուսի բառերը. «Շուռ եք գալիս ծովն ու ցամաքը (մասնակցություն ավետարանչական գործունեությանը) … և … նրան ձեզանից կրկնակի ավելի գեհենի որդի եք դարձնում» (Մատթեոս 23.15):

Այդպիսի «ավետարանչությանն» ուղղված այս խիստ հանդիմանությունը ցույց է տալիս, թե որքան կարևոր է ուշադրություն դարձնել ոչ միայն նրանց հոգևոր աճի գնահատմանը, ում մենք բերում ենք եկեղեցի, այլև, առաջին հերթին, մեր սեփական հոգևոր աճին:

Կարդացե՛ք Մատթեոս 26.41, Ա Թեսաղոնիկեցիս 5.17, Հռոմեացիս 8.6, Եփեսացիս 6.17,18, Բ Տիմոթեոս 2.15,16, Սաղմոս 1.2-ը: Ըստ բերված համարների՝ ո՞ր հոգևոր վարժություններն են առավել կարևոր: Այդ ամենն ինչո՞ւ այդքան մեծ նշանակություն ունի մեր հոգևոր աճի համար: _____

_____

_____

Լինելով աստվածային ողորմության կարիք ունեցող մեղավորներ՝ ինչպե՞ս մենք կարող ենք գնահատել ինչ-որ մի այնքան «անշոշափելի» բան, ինչպիսին այլ մարդկանց հոգևորությունն է: Գոյություն չունի հոգևորության այնպիսի արտահայտված սանդղակ, որի համաձայն մենք կկարողանայինք գնահատել մարդու հոգևոր վիճակը: Այդ պատճառով ավելի ճիշտ և ավելի օգտակար կլիներ ուշադրություն դարձնել այն բանին, որ մարդն ընթանում է հոգևոր ճանապարհով, այլ ոչ թե որոշել, թե այդ ճանապարհի որ հատվածում է նա գտնվում: Հոգևոր ճանապարհի ցուցիչներն են հոգևոր վարժությունները, որոնցում մենք մասնակցում ենք: Այն ամենն, ինչ թվարկված է վերը բերված համարներում, իհարկե, այդպիսի ցուցիչներ են, սակայն մենք,

միևնույնն է, պետք է զգույշ լինենք այլ մարդկանց հոգևոր փորձը գնահատելու մեջ: Միևնույն ժամանակ (հատկապես՝ երբ գործ ունենք նորադարձների հետ) մենք պետք է սիրով ու բարությամբ առաջնորդենք նրանց հոգևոր աճի այնպիսի անհրաժեշտ բաղադրիչների կարևորության ըմբռնմանը, ինչպիսիք են աղոթքը, Աստվածաշնչի ուսումնասիրությունն ու հնազանդությունը:

Հինգշաբթի ***հունիսի 21***

Գնահատում՝ հանուն եկեղեցու աճի

Մեր եկեղեցու գոյությունն իսկ պատճառ է մեր ծառայության գնահատման համար: Մենք հավատում ենք, որ Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցին ծագել է երկրային պատմության որոշակի ժամանակահատվածում՝ որպես Աստծո ծրագրի մի մաս, որը նախատեսում է Ավետարանի քարոզը աշխարհին: Այլ խոսքերով՝ մենք գոյություն ունենք, որպեսզի մարդիկ ձեռք բերենք Աստծո թագավորության համար:

Կարդացե՛ք Հայտնություն 14.6,7-ը: Մենք ինչպե՞ս ենք հասկանում այդ համարներն՝ Ադվենտիստական եկեղեցուն մեր պատկանելության համատեքստում: _____

_____

_____

Սեփական գործողությունների գնահատումն օգնում է առավել արդյունավետ կերպով իրականացնել մեզ վրա դրված խնդիրը: Եկեղեցական գործունեության ցանկացած գնահատում պետք է շոշափի եկեղեցու աճի վրա ավետարանչական աշխատանքի ռազմավարության ազդեցության հարցը: Այլ խոսքերով, ինչպե՞ս է մեր կողմից իրականացվող գործունեությունն օգնում մեզ հասնել մեր նպատակներին:

Կարդացե՛ք Մատթեոս 6.33, 10.7, 24.14, Ղուկաս 4.43-ը: Ինչի՞ մասին են խոսում համարները: Դրանցում շարադրված ճշմարտություններն ինչպե՞ս պետք է ազդեն մեր որպես եկեղեցու, և մեր ավետարանչական գործունեության վրա: _____

_____

_____

Երկրի վրա Հիսուսի ծառայության ընթացքում քարոզը՝ որպես Աստծո թագավորության համար հոգիներ ձեռք բերելու մեթոդ, կարևոր տեղ է զբաղեցրել: Հիսուսը քարոզում էր, որ Աստծո թագավորությու-

նը մոտեցել է: Նա կրոնական առաջնորդներին հանդիմանում էր, որ նրանք Աստծո թագավորություն տանող ճանապարհը փակում են մարդկանց առջև և դժվարացնում նրանց ուղին: Նա Իր աշակերտներին ուղարկեց քարոզելու Աստծո թագավորությունը: Անկասկած, Հիսուսի, առաքյալների և եկեղեցու կարևորագույն նպատակն այդ թագավորության համար մարդկանց փրկությունն էր:

Եկեղեցի եկած մարդկանց թվակազմի մասին գրառումները և հեթանոսների մեջ եկեղեցիների ի հայտ գալը վկայում են, որ այդ ժամանակ տեղի ուներ եկեղեցու աշխատանքի գնահատում ըստ Աստծո թագավորության համար մարդկանց դարձի գալու:

Հիսուսը հստակ և ուղղակիորեն հայտարարեց. եթե դուք Նրա հետ չեք, նշանակում է, որ Նրա դեմ եք (Մատթեոս 12.30), Նրա հետ չհավաքելով՝ դուք վատնում եք: Վերլուծե՛ք ձեր կյանքը. դուք Հիսուսի հետ հավաքո՞ւմ եք, թե՝ վատնում: Ինչո՞վ կարող եք հիմնավորել ձեր պատասխանը:

Ուրբաթ ***հունիսի 22***

Հետագա ուսումնասիրության համար

Ուրիշներին հրավիրե՛ք մասնակցելու ձեր ծառայությանը:

Դուք երբևէ լսե՞լ եք այնպիսի հասկացության մասին, ինչպիսին «մարդ-նվագախումբ»-ն է: Դա նշանակում է, որ մեկ մարդը միանգամից մի քանի գործիք է նվագում: Թմբուկը փոկերով կապված է նրա մեջքին և գործի է դրվում ոտնակի միջոցով, ծնծղաներն ամրացված են ծնկներին, և այլն: Փոխաբերական իմաստով «մարդ-նվագախումբը» նշանակում է այնպիսի մարդ, ով ամեն բան ինքն է անում: Նմանատիպ «նվագախմբերը» եկեղեցում չեն կարող երկարատև լինել, քանի որ թիմի կողմից ֆիզիկական կամ հուզական աջակցություն չունեն: Այդպիսի մարդիկ երբեմն բողոքում են եկեղեցու աջակցության պակասից, բայց, ամենայն հավանականությամբ, համայնքին չեն էլ խնդրել ինչ-որ կերպ մասնակցել, թերևս, բացի ֆինանսական օգնությունից:

Անկախ այն բանից, դուք սկսում եք ծառայությունը, թե գնահատում եք արդեն գոյություն ունեցողը, ահա՛ մի քանի առաջարկներ այլ մարդկանց ներգրավելու միջոցով ձեր ծառայությունն ընդլայնելու հնարավոր տարբերակների վերաբերյալ:

Դիտարկե՛ք ձեր ծառայության բոլոր տեսանկյունները և տեսե՛ք, թե որքան մարդ կարող է դրան մասնակցել:

Որոշե՛ք, թե որ ոլորտներում է, որ դուք հատկապես օգնության կարիք ունեք, և գտե՛ք առավելագույնս հարմար մարդկանց, ովքեր պատրաստ են իրենց վրա վերցնել այդ պատասխանատվությունը: Մտածե՛ք խմբերի ղեկավարների մասին:

Պատրաստե՛ք ծառայության բոլոր տեսանկյունների մանրամասն գրավոր ցանկը: Դա կարող է օգտակար լինել ծառայության համար հարմար թեկնածությունների քննարկման ժամանակ: Նրանք կկարողանան ճիշտ հասկանալ, թե իրենցից ինչ է սպասվում:

Կանոնավորապես հաշվետվություն ներկայացրեք եկեղեցուն: Դա բոլորին թույլ կտա տեսնել, որ ձեր ծառայությունը եկեղեցու ընդհանուր ավետարանչական ծառայության մի մասն է, և եղբայրակիցներն ավելի շուտ կհամաձայնեն մասնակցել դրան:

Կանոնավորապես հավաքե՛ք ձեր ծառայության բոլոր մասնակիցներին: Աջակցե՛ք նրանց և նշե՛ք հաջողությունները: Հարցեր տվեք՝ մենք ինչպե՞ս ենք կատարել առաջադրված նպատակը, ինչպե՞ս են հիմա գործերը, և ի՞նչ ենք մենք անելու հետագայում:

Հարցեր քննարկման համար

1. Որտե՞ղ և ինչպիսի՞ն է գնահատման և քննադատության միջև սահմանը, որից մեզ նախազգուշացնում է Սուրբ Գիրքը:
2. Խորհե՛ք Հիսուսի խոսքերի մասին, որոնք գրառված են Մատթեոս 23.15-ում: Մենք ինչպե՞ս կարող ենք թույլ չտալ դա, հատկապես, եթե նորադարձները հաճախ առանձնահատուկ ձգտում և ջանասիրություն են դրսևորում: Մենք ինչպե՞ս կարող ենք անել ամեն հնարավորը, որպեսզի մեր ջանասիրությունն ուղղված լինի անհրաժեշտ հունով, և մենք «գեհենի որդիներ» չդաստիարակենք մեր միջավայրում: Եթե մենք այդպիսի նպատակ հետապնդեինք, ամենից հեշտ ինչպե՞ս կարող էինք հասնել դրան:
3. Վերլուծե՛ք տվյալ ժամանակ ձեր եկեղեցու իրականացրած ծառայությունը, և առաջարկե՛ք անցկացնել ծրագրի ընթացքի, բոլոր ընթացիկ գործընթացների և մասնակիցների լավ գնահատում:

ՉԴԱԴԱՐՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Հովհաննես 4.7-30, Գործք առաքելոց 11.19-23, Բ Տիմոթեոս 2.1-7, Բ Կորնթացիս 5.18-20:

Հիշելու համարը

«Եվ ասում էր. Աստծո արքայությունն ինչի՞ նման է, և ինչի՞ նմանեցնեմ նրան: Մանանեխի հատի նման է, որը մի մարդ վերցրեց իր պարտեզի մեջ ցանեց, և մեծացավ ու մեծ ծառ դարձավ, և երկնքի թռչունները նրա ճյուղերի վրա բնակվեցին» (Ղուկաս 13.18,19):

Հիմնական միտքը.

Ավետարանչությունն ու վկայությունը այն միջոցներն են, որոնց շնորհիվ մանանեխի հատը (Աստծո եկեղեցին) մեծ ծառ է դառնում, որն իրենով լցնում է ողջ աշխարհը:

Հնարավոր է, որ դուք լսել եք, թե ինչպես է ինչ-որ մեկն ասում. «Ես արդեն արել եմ աշխատանքի իմ բաժինը: Այժմ թող երիտասարդներն աշխատեն»: Կամ՝ «Ես շատ տարիներ զբաղվել եմ ավետարանչությամբ, այժմ թող նոր մարդիկ զբաղվեն դրանով»: Իսկ կարող է պատահել, որ դուք ինքնե՞րդ եք դա ասել: Ինչ-որ իմաստով այդպիսի հայտարարությունները կարելի է հասկանալ: Մարդիկ ծերանում են, նրանց առողջությունը երբեմն վատթարանում է, կամ կյանքի այլ հանգամանքներ խանգարում են նրանց առաջնորդ լինել որևէ եկեղեցական ծառայության մեջ: Մարդիկ երբեմն պարզապես ուժասպառ են անում են իրենց, և նրանց հանգիստ է անհրաժեշտ լինում: Բացի դրանից, հնարավոր է, որևէ մեկը համարում է, որ Տերն իրեն կանչում է կատարելու Իր կամքը՝ եկեղեցական ծառայության այլ ոլորտներում:

Սակայն հսկայական տարբերություն գոյություն ունի ծառայության տեսակը փոխելու և այն դադարեցնելու միջև: Քանի դեռ ողջ ենք, մենք այսպես թե այնպես պետք է մասնակցենք դրան: Այս շաբաթ մենք կխոսենք վկայության և ավետարանչության ծառայությանը մշտապես մասնակցելու անհրաժեշտության մասին: Անկախ այն բանից, թե ինչ դեր ենք մենք խաղում եկեղեցում, միշտ կարող ենք ծառայելու հնարավորություն գտնել:

Չդադարող վկայությունն ու ավետարանչությունը

Անհրաժեշտ է ևս մեկ անգամ ընդգծել, որ վկայությունը և ավետարանչությունը պետք է շարունակվեն այնքան ժամանակ, քանի դեռ կան մարդիկ, ովքեր փրկության կարիք ունեն: Աստված ցանկանում է հնարավորինս շատ մարդկանց փրկել: Իսկ նրանք, ովքեր ընդունել են Հիսուսին որպես իրենց անձնական Փրկիչ, կանչված են համագործակցելու Աստծո հետ հոգիների փրկության գործում: Կարևոր չէ, թե ովքեր ենք մենք, որտեղ ենք ապրում, ինչ իրավիճակում ենք գտնվում: Եթե մեր սրտերը դարձած են Քրիստոսին, եթե մենք ամենախորը երախտագիտություն ենք զգում հանուն մեզ նրա կատարածի համար, և մեզ համար միևնույնը չէ, թե ինչ է Նա մեզ խնդրում անել ի պատասխան, մենք միշտ վկայության և ծառայության հնարավորություն կգտնենք:

Կարդացե՛ք Հիսուսի զրույցը սամարացի կնոջ հետ, որը գրի է առնված Հովհաննես 4.7-30-ում: Ի՞նչ առանձնահատուկ բան կար Հիսուսի և Նրա խոսքերի մեջ, որ կինը որոշեց դրանով կիսվել իր քաղաքի բոլոր բնակիչների հետ: Վկայության ի՞նչ սկզբունքներ մենք կարող ենք քաղել այս պատմությունից, որոնք կօգնեն մեզ ավետարանման մեջ: _____

_____

_____

_____

Զրուցելով սամարացի կնոջ հետ՝ Հիսուսը, հավանաբար, վարվեց հետևյալ «բանաձևով».

1. Հիսուսը գրավեց սամարացի կնոջ ուշադրությունը. «Ինձ ջուր տուր, որ խմեմ» (հմ. 7):
2. Նա շարժեց կնոջ հետաքրքրությունը. «Ինչպե՞ս դու, որ հրեա ես, խմելու բան խնդրեցիր ինձանից, որ մի սամարացի կին եմ» (հմ. 9,10):
3. Նա ցանկություն առաջացրեց. «Տե՛ր, տուր ինձ այդ ջուրը» (հմ. 15):
4. Նա համոզեց. «Տե՛ր, տեսնում եմ, որ դու մարգարե ես» (հմ. 19):
5. Այդ ամենին հետևեց կնոջ արձագանքը. «Եկեք տեսեք մի մարդ, որ ինձ ասաց բոլորը, ինչ գործել եմ. արդյոք նա՞ է Քրիստոսը» (հմ. 29):

Ավետարանչության այս հինգ հաջորդական փուլերը միշտ չէ, որ անհրաժեշտ է կիրառել մեկ հանդիպման ընթացքում, ինչպես դա տեղի ունեցավ Հակոբի ջրհորի մոտ Հիսուսի և սամարացի կնոջ հանդիպման ժամանակ: Դրանք անհրաժեշտ է անցնել աստիճանաբար, այն բանին զուգընթաց, ինչպես դուք շարունակում եք ինչ-որ մեկին տանել վկայությունը: Իրավիճակները կարող են էապես տարբերվել միմյանցից, բայց տվյալ հատվածում շարադրված սկզբունքները կարող են լայն կիրառություն գտնել հոգիները դարձի բերելու մեր ձգտման մեջ: Բացի այդ, թեև զրույցն սկսվել էր հասարակ ջրից, Հիսուսի նպատակը սամարացի կնոջ մոտ կյանքի ջուրը խմելու ցանկություն առաջացնելն էր: ԹԵև մենք կանչված ենք օգնելու մարդկանց ցանկացած իրավիճակում և ուժերի ներածին չափով մասնակցել նրանց կարիքների բավարարմանը, սակայն երբեք չպետք է մոռանանք, որ նրանց մեծագույն կարիքը Հիսուսում փրկությունն է:

Որքա՞ն հաճախ է ձեզ հաջողվում օգտվել վկայելու կամ ծառայելու հնարավորությունից: Ճի՞շտ է, որ հաճախ մենք կյանքում հանդիպում ենք մարդկանց, ովքեր, չնայած մեզ հետ շփմանը, գաղափար անգամ չունեն այն մասին, թե ինչին ենք մենք հավատում, ինչ ենք դավանում, և ինչին ենք ապավինում: Մենք ինչպե՞ս կարող ենք փոխվել՝ լավ վկաներ լինելու համար:

Երկուշաբթի ***հունիսի 25***

Դաստիարակող շրջապատ

Ավետարանչական աշխատանքի կենսականորեն կարևոր մասը եկեղեցում տեղի է ունենում ամեն շաբաթ: Ավետարանչության այս տեսանկյունը կոչվում է «դաստիարակող» և «միավորող»: Մենք շատ լավ կարողանում ենք մարդկանց հրավիրել եկեղեցի, բայց միշտ չէ, որ մեզ հաջողվում է այնպիսի մթնոլորտ ստեղծել, որը կդրդի նրանց կրկին գալ եկեղեցի և բարեկամություն հաստատել եղբայրների և քույրերի հետ: Մարդկանց աշակերտ դարձնելով՝ մենք պետք է ուշադրություն հատկացնենք յուրաքանչյուր նորադարձ քրիստոնյայի հաստատմանն ու դաստիարակությանը: Ի՞նչ է դա նշանակում: «Հաստատումը» փոխանցում է ինչ-որ բան ամուր, երկարաժամկետ հիմքերի վրա դնելու գաղափարը: Դա նշանակում է օգնել մարդկանց՝ ամրապնդվելու հավատում և եղբայրական փոխհարաբերությունների մեջ: «Դաստիարակությունը» սովորաբար կարելի է բացատրել

այնպիսի հասկացություններով, ինչպես «կերակրել, հոգ տանել, մեծացնել, ուսուցանել և զարգացնել»: Երբ ինչ-որ մեկը Տեր Հիսուսին ընդունում է որպես իր անձնական Փրկիչ, այդ ժամանակ հաստատման և դաստիարակության այդ բոլոր բաղադրիչները պետք է իրենց հոգևոր և սոցիալական կիրառությունը գտնեն քրիստոնեական փոխհարաբերություններում: Այլ խոսքերով՝ նորադարձ քրիստոնյան կերակրման, հոգատարության, զարգացման և Տիրոջ ճանապարհները սովորելու կարիք ունի: Այստեղ հիմնարար հասկացություն է «եղբայրությունը» կամ «շփումը»: Այնտեղ կյանքերը հարաբերվում են միմյանց հետ և ազդում միմյանց վրա: Միանալով եկեղեցուն՝ մարդիկ պետք է հոգատարություն զգան եղբայրական փոխհարաբերությունների միջոցով:

Մեզ ի՞նչ են հայտնում բերված համարները հավատացյալների շրջանում հոգևոր եղբայրական փոխհարաբերությունների կարևորության մասին: Ինչո՞ւ է դա հատկապես կարևոր նորադարձ մարդկանց համար, ովքեր եկեղեցի են եկել ավետարանչության և ավետման ծառայության միջոցով: Ա Հովհաննես 1.7, Գործք առաքելոց 2.42, 11.19-23, 20.35, Հռոմեացիս 1.11,12: _____

_____

_____

_____

Ա Հովհաննես 1.7 համարում հոգնակի թիվը համոզում է մեզ, որ թեև մենք պետք է քայլենք լույսի մեջ՝ որպես առանձին անհատներ, սակայն մեզ անհրաժեշտ է նաև լույսի մեջ քայլել միասին: Եթե քրիստոնյաները քայլում են լույսի մեջ, նրանց միջև կտիրեն միասնությունն ու եղբայրական փոխհարաբերությունները: Հետևաբար, դաստիարակող շրջակա միջավայր կստեղծվի, որտեղ մարդիկ կենտրոնացած են Աստծո կամքի և քրիստոնեական ուղու վրա միմյանց քաջալերելու վրա: Թեև կարևոր է նորադարձներին օգնելը՝ երջանկություն և գոհություն զգալ եկեղեցում, նաև կարևոր է նրանց աշակերտության տանելն՝ այդ բառի լիակատար իմաստով, ինչն իրենում ներառում է շրջապատի մարդկանց Տեր Հիսուսի հետ փրկարար փոխհարաբերությունների բերելու ընդունակության զարգացումը:

Ձեր եկեղեցին նպատակասլաց ջանքեր գործադրո՞ւմ է նոր դարձի եկածներին հաստատելու ուղղությամբ: Դուք ինչպե՞ս կարող էիք առավել ակտիվորեն մասնակցել նորադարձների դաստիարակությանն ու կրթությանը (կամ անգամ եկեղեցու «ստաժավոր» անդամների):

Ուսուցիչների նախապատրաստությունը

Ժամանակակից աշխարհում մարդիկ խիստ արագաշարժ են: Տեղական համայնքները մշտապես տեղափոխության նամակներ են ձևակերպում և հաճախ բողոքում եկեղեցու ընդունակ անդամներից զրկվելուց, ովքեր կարևոր ծառայություն էին կատարում: Եկեղեցու անդամների հնարավոր «տեղափոխությունների» պատճառով, այն դեպքում, երբ յուրաքանչյուր եկեղեցու ավետարանչության և վկայության ծառայությունը պետք է անընդմեջ շարունակվի և աճի, նոր ծառայողների նախապատրաստության, բազմապատկման, դաստիարակության և որոնման հսկայական կարիք կա:

Ուսուցիչների նախապատրաստության վերաբերյալ ի՞նչ նոր սկզբունքներ մենք կարող ենք նշել Տիմոթեոսին Պողոսի տված խրատների մեջ: Բ Տիմոթեոս 2.1-7: Այս բոլոր խորհուրդները ինչպե՞ս պետք է հարմարեցնել մեր կյանքին, երբ մենք Տիրոջ համար աշխատում ենք տարբեր պայմաններում, և տարբեր հնարավորություններ ունենք: _____

_____

_____

_____

Պողոսը Տիմոթեոսին ներկայացնում է եկեղեցու ողջ աշխատանքի պատկերը, ինչպես նաև այդ աշխատանքի ծավալն ու տևողությունը տեսնելու անհրաժեշտության մասին: Հովվական և ուսուցչական ծառայությունը չպետք է կենտրոնացված լինի միայն մեկ մարդու վրա: Այն պետք է հավասարաչափ բաշխված լինի համայնքի շատ վկաների և ավետարանիչների միջև: Առաջին հերթին Պողոսը Տիմոթեոսին դրդում է ուրիշ մարդկանց դաստիարակել, որպեսզի նրանք կարողանան եկեղեցու առաջնորդներ լինել, քանի որ վաղ թե ուշ առաջնորդների ավագ սերունդը կհեռանա: Տիմոթեոսին տրված խրատի անքակտելի մասն է նաև հետևյալ կարևոր սկզբունքը. նրա ուսուցանած մարդիկ իրենց հերթին նույնպես պետք է սովորեցնեն այլ մարդկանց՝ ապահովելով աշխարհում եկեղեցու առաքելության շարունակությունն ու ընդլայնումը: Սա համահունչ է Հիսուսի կոչին այն մասին, որ ավելի շատ մշակներ դաշտ դուրս գան: Ինչ-որ մեկն ասել է. «Մարդուն ձուկ տվեք, և դուք նրան կկերակրեք մեկ օր: Սովորեցրեք նրան ձուկ որսալ, և դուք նրան ու իր ընտանիքը ողջ կյանքում կկերակրեք»: Սակայն խնդիրն այն է, որ

եթե այդ մարդը ձուկ որսալու իր հմտությունները չփոխանցի իր երեխաներին, ապա հաջորդ սերունդը նույնպես քաղցած կլինի: Հնարավոր է, որ այդ արտահայտությունը կարելի է փոխել հետևյալ կերպ. «Մարդուն ձուկ տվեք, և դուք նրան կկերակրեք մեկ օր: Սովորեցրեք նրան ձուկ որսալ, իր փորձը փոխանցել ուրիշներին, և անհամար թվով մարդիկ կշարունակեն սնվել»: Սրանում է տարբերությունը՝ ինչ-որ մեկին ուսուցանելու և նրան ուրիշներին սովորեցնել սովորեցնելու միջև:

Խորհե՛ք եկեղեցում ծառայության ձեր փորձի մասին: Երբևէ ձեզ սովորեցրե՞լ են, թե ինչպես է անհրաժեշտ վկայել շրջապատի մարդկանց: Դուք երբևէ խնդրե՞լ եք, որ ձեզ սովորեցնեն շրջապատի մարդկանց վկայել: Ձեր պատասխանը քննարկե՛ք շաբաթօրյա դպրոցի դասարանում:

Հորեքշաբթի ***հունիսի 27***

Եկեղեցու նախկին անդամներին վերադարձնելը

Մենք կցանկանայինք, որ քրիստոնեական բառարանում չլիներ «հավատուրաց» բառը: Սակայն փաստն այն է, որ շատ մարդիկ հեռանում են եկեղեցուց և Տիրոջ հետ փրկարար փոխհարաբերություններից: Թեև երբեմն մարդիկ մեզանից հեռանում են հայացքների տարբերության պատճառով, սակայն առավել հաճախ դա տեղի է ունենում վատ փոխհարաբերությունների պատճառով: Ինչպիսին էլ որ լինեն պատճառները, մենք պետք է անենք ամեն հնարավորը՝ սիրո և ուշադրության մթնոլորտ ստեղծելու, որը կնպաստի նորադարձների՝ մեզ հետ մնալու ցանկությանը՝ չնայելով ինչ-ինչ անխուսափելի տարաձայնությունների: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է ծառայություն իրականացնել եկեղեցու նախկին անդամների համար, և դա պետք է լինի մեր ավետարանչական գործունեությանը նպատակաուղղված մասը: Նույնիսկ թռուցիկ հայացքը եկեղեցական ցուցակներին հաճախ ցույց է տալիս, որ դրանցում անունների քանակն անհամեմատ ավելի շատ է, քան այն մարդկանց թիվը, ովքեր իսկապես այցելում են շաբաթօրյա ծառայություններին: Այդ անունները կարող են սկիզբ դնել հատուկ ծառայությանն այն մարդկանց, ում Աստված երբեք չի դադարել ջերմորեն սիրել:

Խորհելով կարդացե՛ք Բ Կորնթացիս 5.18-20 համարները: Թեև հանգամանքները, որոնց պատճառով դրանք գրվել են, որոշ չափով տարբերվում են մերինից, սկզբունքը չի կորցնում իր կա-

ռևորությունը: Ինչո՞ւ է «հաշտության ծառայությունը» այդքան կարևոր նրանց համար, ովքեր ժամանակին հետևում էին Աստծուն, բայց շեղվել են ճանապարհից: _____

_____

_____

Եկեղեցու նախկին անդամների վերադարձը հատուկ ծառայություն է: Այն նույնքան ավետարանչական է, որքան և այն մարդկանց ավետարանելը, ովքեր նախկինում երբեք չեն ընդունել Հիսուս Քրիստոսին: Բուն «հաշտություն» բառը նշանակում է, որ նախկինում մարդկության և Աստծո միջև միասնություն և բարեկամական հարաբերություններ են եղել, որոնք այժմ վերականգնվել են Հիսուսի շնորհիվ: Ավելին, այժմ մեզ պարգևված է հաշտության ծառայությունը, որի մեջ մտնում է նաև նրանց հետ աշխատանքը, ովքեր երբևէ երկրպագել են մեզ հետ:

Փաստորեն, կարելի է պնդել, որ Մատթեոս 10.5,6-ում Հիսուսն Իր աշակերտներին պատվիրեց դարձի բերել հրեա ժողովրդի անդամներին, ովքեր հեռացել էին Տիրոջ հետ իրենց փրկարար փոխհարաբերություններից: Այդպիսով, այսօր անհրաժեշտ է աշխատել այն մարդկանց հետ, ովքեր Աստծո և Նրա եկեղեցու հետ փոխհարաբերությունների նախապատմություն ունեն:

Խորհե՛ք նրանց մասին, ովքեր հեռացել են եկեղեցուց, և այն պատճառների մասին, որոնք նրանց դրդել են դրան: Նրանց մեջ կա՞ մարդ, ում հետ դուք կարող էիք վերականգնել շփումն ու ընկերությունը, ում կարող էիք ինչ-որ կերպ ծառայել և փորձել նրան վերամիավորել եկեղեցու հետ: Աղոթե՛ք այն մասին, որ Աստված բացի ձեզ, թե ինչպես դուք կարող եք այդ առումով ծառայել Նրան:

Հինգշաբթի ***հունիսի 28***

Հետնամուտքը

Դուք լսե՞լ եք, թե ինչպես են մարդիկ բողոքում, որ եկեղեցու անդամները հեռանում են «հետնամուտքից»: Ոմանք նույնիսկ կտրականապես հայտարարում են, որ եկեղեցու «հետնամուտքը» պետք է փակվի, բայց մոռանում են ասել, թե ինչպես դա անել, կամ որտեղ է այն գտնվում: Որոշ աճող եկեղեցիներ կարող են մտածել, թե իրենց «հետնամուտքը» փակ է, բայց իրականում այնտեղ պարզապես ավելի շատ մարդիկ ներս են մտնում շքամուտքից, քան հեռանում են «հետ-

նամուտքից»: Եվ թեև երբեմն դրա համար օբյեկտիվ պատճառներ կարելի է գտնել, մենք, միևնույնն է, ցանկանում ենք անել մեզանից կախված ամեն բան՝ պահպանելու մեր եղբայրներին ու քույրերին: Այդ «գաղտնադուռն» ի հայտ բերելու ու այն փակելու փորձն իսկապես ավետարանչական ջանքեր են պահանջում, քանի որ մեր պարտականությունն է՝ ոչ թե պարզապես մարդկանց բերել Աստծո մոտ, այլ նաև պահպանել նրանց:

Կարդացե՛ք Եբրայեցիս 10.25-ը: Ինչո՞ւ է քրիստոնյաների համար կարևոր է կանոնավոր կերպով հանդիպելը: Մենք սատարո՞ւմ ենք միմյանց՝ հավաքվելով միասին: Մենք ինչպե՞ս կարող ենք է՛լ ավելի աջակցել և քաջալերել միմյանց: _____

_____

_____

_____

Սովորաբար հեռանալու որոշումը հանկարծակի չի ծագում: Ամենից հաճախ մարդիկ անցնում են դանդաղ հեռացման միջով: Ինչպես դեպի Քրիստոս և եկեղեցի տանող ճանապարհը, այնպես էլ նրանից հեռացման ճանապարհը կարելի է համեմատել յուրատեսակ ճանապարհորդության հետ: Մեծ մասամբ հեռացողները գիտակցաբար ծրագրված ռազմավարություն չունեն: Նրանք պարզապես սկսում են քիչ-քիչ հեռանալ, սառել եկեղեցու նկատմամբ և հիասթափվել նրանից: Հնարավոր է, որ որոշ դեպքերում դա տեղի է ունենում միանգամայն արդարացիորեն: Այդ պատճառով մենք պետք է իմանանք այն «թափառումների» մասին, որոնք տեղի են ունենում եկեղեցում մեզ շրջապատող մարդկանց կյանքում:

Կարդացե՛ք Հռոմեացիս 14.13, Գաղատացիս 5.13, Եփեսացիս 4.32-ը: Տվյալ նախազգուշացումներին ներդաշնակ կյանքն ինչպե՞ս է օգնում փակ պահել «հետնամուտքը»: Ի՞նչ կարող եք անել դուք և ձեր եկեղեցին՝ կենսագործելու այդ կարևոր ճշմարտությունները: _____

_____

_____

Ուշադիր եկեղեցին, որը չի դադարում հոգատարություն դրսևորել, այն վայրն է, որտեղ յուրաքանչյուր ոք կենտրոնանում է Հիսուսի և միմյանց հետ փոխհարաբերությունների վրա: Նրանք ունեն արժեքների հստակ հայեցակարգ, որով Հիսուսն օժտում է յուրաքանչյուր մարդու: Փակել «հետնամուտքը»՝ նշանակում է մերձենալ մարդկանց հետ, իմանալ նրանց կարիքների մասին, որով նրանք ցանկանում են կիս-

վել, և հնարավորության դեպքում օգնել նրանց այդ կարիքների բավարարման մեջ: Դա մի այնպիսի բան է, ինչ չի կարող տալ եկեղեցական ծրագիրը: Դա ի զորու են անել միայն սիրող և հոգատար մարդիկ:

Հետագա ուսումնասիրության համար

Ծրագրե՛ք ձեր ծառայության շարունակությունն ու ընդլայնումը:

Յուրաքանչյուր մարդ, ով մասնակցում է ավետարանչական ծառայությանը, պետք է մտածի, թե ինչպես անի, որ այդ ծառայությունը դառնա մշտապես գործող, և ոչ թե մեկանգամյա իրադարձություն: Դրա համար մենք կարող ենք շատ բան անել: Հիմա կդիտարկենք միայն մի քանի հնարավոր քայլեր:

1. Մի՛ վախեցեք պատասխանատվության բեռը կիսել այլ մարդկանց հետ, դա ավելի լավ է, քան «մարդ-նվագախումբ» լինելը: Պահպանե՛ք խմբային մոտեցումը, որում համադրվում են համատեղ աշխատանքն ու փոխադարձ աջակցությունը:
2. Արե՛ք ամեն հնարավորը, որպեսզի եկեղեցին իմանա ձեր համատեղ ծառայության կարևորության մասին: Այստեղ ներառվում են ավետարանչական ծառայության համար պատասխանատու մարդկանց առջև կանոնավոր հաշվետվությունները, համառոտ հաղորդումները տեղեկատվական ամփոփագրերում, հոդվածները եկեղեցական պատի թերթում և հովանավորչական օգնության համար դիմելը:
3. Մշտապես տեսադաշտում պահեք այն մարդկանց, ում դուք կարող էիք հրավիրել մասնակցելու ձեր ծառայությանը, կամ ովքեր կարող էին մեկ այլ թիմ ձևավորել: Եթե ինչ-որ մեկը ցանկություն է հայտնել դառնալ ձեր օգնականը՝ ձեր գործունեության և հաշվետվությունների արդյունքում, հիանալի է: Սակայն ավելի լավ կլիներ անձամբ հրավիրել մարդկանց՝ բոլոր ցանկացողներին ընդհանուր կարգով հրավիրելու փոխարեն:
4. Անհրաժեշտ է կանոնավոր ուսուցողական միջոցառումներ ձեռնարկել, ինչը հատկապես վերաբերում է վկայության և ավետարանչության աշխատանքին:

Հարցեր քննարկման համար

1. Դասարանում վերադարձե՛ք երեքշաբթի օրվա դասի վերջին հարցին ձեր պատասխանների քննարկմանը:
2. «Մենք պետք է խողովակներ լինենք, որոնց միջոցով Տերը կկարողանա աշխարհին ուղարկել լուրը և շնորհը: Նրանք, ովքեր հեռացել են հավատից, պետք է ապաշխարեն: Մեզ անհրաժեշտ է վերացնել մեր մեղքերը խոստովանության և ապաշխարության միջոցով՝ մեր սրտերը խոնարհեցնելով Աստծո առջև: Հոգևոր ուժի հոսանքները պատրաստ են թափվել նրանց վրա, ովքեր պատրաստվում էին ընդունել այն» (Է. Ուայթ, Վկայություններ եկեղեցու համար, հտ. 8, էջ 46): Ի՞նչ է անհրաժեշտ անել, որպեսզի օգնենք մարդկանց՝ վերադառնալ եկեղեցի, ինչպես նաև՝ դեպի «մեր ժամանակի ճշմարտությանը», որը փաստորեն ուրիշ ոչ ոք, բացի մեզանից, չի քարոզում աշխարհին: Եվ ինչո՞ւ է դա անհրաժեշտ անել:
3. Երբ մարդիկ հեռանում են, եկե՛ք սիրենք նրանց, նրանց հետ փոխհարաբերություններ պահպանենք և նրանց չանվանենք «ուրացողներ»: Դրա փոխարեն, նայելով այդպիսի տխուր փորձառություններին, եկե՛ք հետևենք Պողոսի խորհրդին. «Փորձեցե՛ք ձեր անձերը, թե արդյոք հավատո՞մ եք» (Բ Կորնթացիս 13.5): Հարցնենք ինքներս մեզ, թե ի՞նչ մենք կարող էինք անել այլ կերպ՝ այդ հոգիներին մեր մեջ պահելու համար: Ամենագլխավորը, եկե՛ք չանենք որևէ մի այնպիսի բան, ինչը կարող է նրանց համար դժվարացնել վերադարձը: Ինչպե՞ս մենք՝ որպես եկեղեցի, կարող ենք այդ սկզբունքները կիրառել նրանց նկատմամբ, ովքեր տարբեր պատճառներով հեռացել են եկեղեցուց:

Աստվածաշնչի ուսումնասիրության ձեռնարկ
2012 թ. II եռամսյակ

ԱՎԵՏԱՐԱՆՉՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ջո Ա. Վեբ

Գլխավոր խմբագիր՝ Պավել Սարգսյան
Թարգմանությունը և համակարգչային շարվածքը՝ Մերինե Աթոյան
Վերստուգող՝ Մարթա Սիմոնյան
Գրական խմբագիր՝ Ալվարդ Մաղոյան
Համակարգչային ձևավորող՝ Կորյուն Կակոյան

ՇԴ դասերի էլեկտրոնային տարբերակը դուք կարող եք գտնել համացանցում (ինտերնետ), այցելելով www.elpidos.narod.ru կայքը:
Այստեղ Դուք կարող եք գտնել այլ նյութեր ևս: